

ՍՓՅՈՒՌՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ՀՀ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Երևան
2014

ՀՏԴ 316.3 (479.25) : 327
ԳՄԴ 60.55 + 66.4
Ս 989

Գիտական խմբագիր՝
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն

Ս 989

Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ. - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2014. - 152 էջ:

Գրքում ներկայացված են Հայաստանի համար կարևոր աշխարհաքաղաքական կողմնորոշումների ընտրության հարցում Սփյուռքի որոշ լրատվամիջոցների և առանձին հայ փորձագետների դիրքորոշումները: Վերլուծվել են Սփյուռքի հետազոտված լրատվամիջոցների՝ ՀՀ ինտեգրման գործընթացների հետ անմիջական կապ ունեցող հոդվածների բովանդակությունում առկա գաղափարականացված կոնստրուկտները (իդեոլոգեմները), դրանց նկատմամբ հուզական երանգավորման՝ վերաբերմունքի քանակական համամասնությունները և որակական բնութագրիչները: Սփյուռքի տարբեր աշխարհագրական հատվածներում գործող հայ մտավորականների և փորձագետների կարծիքներն ուսումնասիրվել են նրանց հետ հեռակա հարցումների միջոցով:

Գիրքը նախատեսված է ինչպես փորձագիտական հանրության, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 316.3 (479.25) : 327
ԳՄԴ 60.55 + 66.4

ISBN 978-9939-825-26-7

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2014
© «Նորավանք» ԳԿՀ, 2014

*Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա*

Հեղինակային խմբի ղեկավար՝

Աննա Շամակոյան

«Նորավանք» ԳԿՀ

Տեղեկատվական հետազոտությունների
կենտրոնի փոխղեկավար, ավագ փորձագետ

Հեղինակային խումբ՝

Արփիյնե Մանուսյան

Դիանա Գալստյան

Լիլիթ Հակոբյան

«Նորավանք» ԳԿՀ

Տեղեկատվական հետազոտությունների
կենտրոնի փորձագետներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ	12
2. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔ. ԿԱՊԵՐԻ ԽՆԴԻՐԸ	19
3. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ-ՄՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
<i>«Մաքսային միությունը» որպես իդեոլոգեմ</i>	23
<i>ՀՀ և ԼՂՀ անվտանգություն և ՄՄ</i>	30
<i>Տնտեսական ոլորտ և ՄՄ</i>	38
<i>ՀՀ ինքնիշխանություն և ՄՄ</i>	48
4. ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԲԵՎԵՌ	50
<i>«Եվրասիական միությունը» որպես իդեոլոգեմ</i>	50
<i>«Եվրասիական միություն» - «Եվրամիություն»</i>	59
5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	61
<i>«Ռուսաստանը» որպես իդեոլոգեմ</i>	61
<i>Հայ-ռուսական հարաբերությունների պատմական անցյալի վերաբերյալ պատկերացումները</i>	63
<i>Հայ-ռուսական հարաբերությունների ապագայի վերաբերյալ</i>	65

6. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ	68
<i>Ոչ հուսալի Եվրոպայի պատկերը</i>	69
<i>Եվրոպայի պատկերը որպես «երազանք»</i>	72
7. ՀՀ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ	75
<i>ՀՀ ապագան ՄՄ/ԵԱՄ-ում և «Եվրոպական կորսված հեռանկարում»</i>	77
<i>«Եվրոպական» և «ռուսական» գույահեռ հեռանկարներ</i>	83
<i>«Հայաստանի անորոշ ապագան»</i>	86
8. «ՀՀ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ ՄՄ/ԵԱՄ-ԻՆ». ԳՈՐԾՈՆՆԵՐԻ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ	88
<i>ՀՀ ինտեգրացիան պայմանավորող գործոններ</i>	88
<i>Անդամակցության և չանդամակցության բացասական սպասելիքները</i>	92
<i>«Արժեք-զաղափարները» ՀՀ ինտեգրացիոն դիսկուրսում</i>	97
9. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ	100
10. ՍՓՅՈՒՌՔԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ՄՄ/ԵԱՄ-ԻՆ ՀՀ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ	117
<i>ՄՄ/ԵԱՄ-ի, ԵՄ-ի հետ համագործակցություն. նպատակներ և խորություն</i>	118
<i>ՀՀ ապագայի ցանկալի հնարավոր պատկերը</i>	128
<i>ՀՀ ապագայի պատկերը ՄՄ/ԵԱՄ-ից հետո</i>	129
ԱՍՓՈՓՈՒՄ. ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	133
РЕЗЮМЕ: ОСНОВНЫЕ ВЫВОДЫ	140
SUMMARY. MAIN CONCLUSIONS	146

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինտեգրացիոն գործընթացներն արդի ժամանակաշրջանի քաղաքական և տնտեսական հիմնական միտումներից են: Այդ համատեքստում պատահական չէ, որ 2013թ. ՀՀ նախագահը հայտարարեց ՌԴ, Ղազախստանի և Բելառուսի կազմավորած Մաքսային միությանն (ՄՄ) անդամակցելու ՀՀ պատրաստակամության մասին, իսկ 2014թ. հոկտեմբերին Մինսկում ստորագրվեց այդ միության իրավահաջորդ Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) Հայաստանի միանալու որոշումը: Հայտնի է նաև, որ ՀՀ-ն բանակցություններ է վարել Եվրոպական միության (ԵՄ) հետ սառցացման պայմանագրի շուրջ, սակայն ներկայումս ԵՄ-ՀՀ համագործակցության խնդիրները, պահպանելով իրենց քաղաքական և տնտեսական հրատապությունը, ընթանում են բանակցային այլ ձևաչափերով:

Նման իրավիճակում խիստ կարևոր են հանրային քննարկումները՝ հասկանալու և ճշգրտելու համար Հայաստանի աշխարհաքաղաքական տեսլականի շուրջ եղած պատկերացումները և հիմնական ուղղվածությունները: Ինչպես վկայում են սոցիոլոգիական հարցումները, ՀՀ հանրության գերակշռող մասը կողմ է արտահայտվել ՄՄ-ին և ԵՏՄ-ին ինտեգրվելու որոշմանը¹:

¹ *Ս.Սանուկյան, Գ.Հարությունյան, Ա.Սաֆարյան*, «Հայաստանի հասարակության վերաբերմունքը Եվրասիական և Եվրոպական ինտեգրմանը», Սոցիոլոգիական հետազոտություն, 5-11 հոկտեմբերի 2013թ., Երևան (ռուսերեն), http://www.noravank.am/upload/pdf/UNKNOWN_PARAMETER_VALUE.pdf

Միննույն ժամանակ, ունենալով մեծաթիվ Սփյուռք և ձգտելով մեր հայրենակիցների հետ կապերի ամրացմանը՝ խիստ ակտուալացել է ՀՀ աշխարհաքաղաքական նախապատվությունների մասին հայության տարբեր հատվածների դիրքորոշումների՝ հնարավորինս իրազեկման խնդիրը: Հասկանալի պատճառներով Սփյուռքում լայնածավալ սոցիոլոգիական հարցումներ իրականացնելը (ինչն, ի դեպ, շատ ցանկալի է և գուցե հնարավոր է ապագայում) կապված է լուրջ և ներկայումս, ցավոք, անհաղթահարելի դժվարությունների հետ: Այդ պատճառով ներկայացվող հետազոտությունում իրականացվել է ընդամենը Սփյուռքի ԶԼՄ որոշ հատվածի, ինչպես նաև առանձին փորձագետների կարծիքների ուսումնասիրություն:

Ինչպես հայտնի է, ՄՄ-ին անդամակցելու շուրջ ՀՀ որոշումն ունեցավ բազմաթիվ մեղիա-արձագանքներ Հայաստանում, որոնք ներառում էին քննարկումներ այդ որոշումը պայմանավորող փաստարկների և հեռանկարում հնարավոր հետևանքների շուրջ¹: ՀՀ ինտեգրման գործընթացների լուսաբանման համատեքստում սփյուռքյան լրատվամիջոցներում ևս բարձրաձայնվեցին նշված խնդիրները, ինչպես նաև մի շարք այլ կարևոր թեմաներ: Սփյուռքի զանգվածային լրատվամիջոցներում ՀՀ ինտեգրման գործընթացների հետ անմիջական կապ ունեցող հողվածների, շրջանառվող գաղափարների, իդեոլոգեմների (գաղափարականացված կոնստրուկտների²), դրանց

¹ *Ա.Մանուկյան, Դ.Գալստյան, Լ.Հակոբյան, Ա.Շամակոչյան*, «Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը մեղիա-լուսաբանման մեջ», 2014թ., «21 ԴԱԸ», #4, http://noravank.am/upload/pdf/6.Arpi_Manusyan_21_DAR_04_2014.pdf

² Իդեոլոգեմ հասկացության սահմանման, ինչպես նաև ուսումնասիրման համար հիմնվել ենք մեր առավել վաղ կատարած ուսումնասիրության մեթոդաբանության վրա (տե՛ս «Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում», գլխ. խմբ. Գ.Հարությունյան, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013):

իմաստավորումների ուսումնասիրման նպատակով դիտարկել ենք Սփյուռքի մեդիա-դիսկուրսը: Միաժամանակ իրականացրել ենք հեռակա հարցումներ Սփյուռքի տարբեր աշխարհագրական հատվածներում գործող մտավորականների և թեմային առնչվող փորձագետների հետ:

Հետազոտության առաջին բաժնում ներկայացված են մեթոդաբանությունը, խնդիրները և նպատակները: Երկրորդ բաժինը նվիրված է Հայաստանի հետ Սփյուռքի մտավոր, սոցիալական, տնտեսական, քաղաքական և ինֆորմացիոն կապերին, առկա քաղաքական գործընթացների շուրջ Սփյուռքի ներգրավվածության աստիճանի գնահատականներին:

Երրորդից յոթերորդ բաժիններում ամփոփվել և վերլուծվել են Սփյուռքի հետազոտված լրատվամիջոցների բովանդակության մեջ առկա գաղափարականացված կոնստրուկտները (իդեոլոգեմները), դրանց նկատմամբ հուզական երանգավորման՝ վերաբերմունքի քանակական համամասնությունները, որակական բնութագրիչները և լրատվամիջոցների կողմից դրանց իմաստավորումները: Մասնավորապես, առանձին բաժիններով դիտարկվում են «Մաքսային միություն», «Եվրասիական միություն», «Ռուսաստան», «Եվրամիություն», «Հայաստան» իդեոլոգեմները և դրանց իմաստավորումները ՀՀ ինտեգրացիոն գործընթացի համատեքստում: ՀՀ ինտեգրացիոն գործընթացը պայմանավորող գործոնները, անդամակցության և չանդամակցության հետևանքները և արժեքային գաղափարները ներկայացված են ութերորդ բաժնում:

Իններորդ բաժնում վերլուծված են հետազոտության առանձին մաս կազմող փորձագիտական գնահատականները Հայաստանում:

տանի արտաքին քաղաքական կողմնորոշումների, ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցելու և ապագա հեռանկարներ ունենալու շուրջ:

Վերջին բաժնում ամփոփված և ընդհանրացված կերպով ներկայացվում են հետազոտության արդյունքները: Այստեղ ներառված են նաև որոշակի դիտարկումներ հետազոտական հիմնական ժամանակահատվածից հետո տեղի ունեցող սփյուռքյան մեդիա-դիսկուրսի ուղղվածությունների շուրջ: Դրանք «Նոր միտումներ» ենթախորագրի ներքո ներկայացնում են նույն ՋԼՄ-ի՝ 2014թ. հունվար-սեպտեմբեր ամիսների մեդիա-դիսկուրսի էքսպրես՝ որակական վերլուծությունից դուրս բերված մեր դիտարկումները:

Հեղինակներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում նախագծի շրջանակներում համագործակցած, Սփյուռքի տարբեր հատվածները ներկայացնող բոլոր այն 20 փորձագետներին, ովքեր տրամադրեցին իրենց պատկերացումները հետաքրքրող հարցերի մասին: Ցավոք, ելնելով հետազոտությունում կիրառված մեթոդիկայի առանձնահատկություններից՝ այստեղ մենք չենք կարող նշել նրանց անունները:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նաև «Նորավանք» հիմնադրամի մեր գործընկերներին՝ Արեստակես Սիմավորյանին և Սևակ Սարուխանյանին, որոնք աջակցություն ցուցաբերեցին հարցվող փորձագետներին գտնելու և նրանց հետ կապեր հաստատելու գործում:

Առանձնահատուկ շնորհակալ ենք ՀՀ Սփյուռքի նախարարությանն այս նախագիծը նախաձեռնելու և աջակցության համար: Հարկ ենք համարում շեշտել, որ ՄՆ հետևողական, հա-

մալիք և ստեղծագործ աշխատանքը Սփյուռքի վերաբերյալ հայկական հանրության պատկերացումների ձևավորման և հստակեցման ուղղությամբ մեր իրողությունների համատեքստում կարելի է գնահատել որպես աննախադեպ երևույթ:

*Գագիկ Հարությունյան,
գիտական խմբագիր,
«Նորավանք» ԳԿՀ տնօրեն*

1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության նպատակներն են.

- Հնարավորինս ուսումնասիրել Սփյուռքի լրատվամիջոցներում ՀՀ արտաքին քաղաքականության վերաբերյալ առկա դիրքորոշումները և պատկերացումներն ինտեգրացիոն գործընթացների մասին, ինչպես նաև Հայաստանի ապագայի վերաբերյալ ընկալումներն ու ակնկալիքները և դրանց հնարավոր հետևանքները Սփյուռքի համար:
- Հնարավորինս ուսումնասիրել Սփյուռքի տարբեր հատվածներում գործունեություն ծավալող փորձագետների (հիմնականում՝ հասարակագետներ, տեղեկատվական ոլորտի փորձագետներ), ինչպես նաև համայնքային կյանքում նշանակալի դերակատարում ունեցող անձանց տեսակետները, գնահատականներն ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ:

Նման հարցադրումները թույլ են տվել որոշակի պատկերացումներ կազմել, թե ընդհանուր առմամբ Սփյուռքի լրատվամիջոցներն ինչպես են վերլուծում ՀՀ ներկայիս արտաքին քաղաքականությունը, ինչ հեռանկարներ են տեսնում ՀՀ ապագայի և Սփյուռքի հետ կապերի, հնարավոր ազդեցությունների հա-

մար: Ի լրումն՝ Սփյուռքը ներկայացնող փորձագետների գնահատականների վերհանումն այս գործընթացների շուրջ հնարավորություն է տալիս դիտարկել արդի հայկական Սփյուռքի մտավոր շրջանակների և ներհայաստանյան իրականության միջև եղած կապերն ու արձագանքները:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար հետազոտությունում առաջադրվել են մի քանի առանցքային *խնդիրներ*.

1. Վերհանել Սփյուռքի լրատվամիջոցներով տարածվող գաղափարները ՀՀ արտաքին քաղաքականության և ինտեգրացիոն հնարավորությունների վերաբերյալ:
2. Վերհանել Սփյուռքի լրատվամիջոցների կողմից ՄՄ-ին ՀՀ անդամակցությանը և այդ համատեքստում՝ Ռուսաստանին տրվող գնահատականները:
3. Վերհանել ՋԼՄ-ի կողմից Եվրամիությանը տրվող գնահատականները:
4. Սփյուռքի փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների գնահատականները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումներին:

Հետազոտությունում կիրառված մեթոդների նկարագրությունը

Որպես ուսումնասիրության հիմնական մեթոդներ համադրաբար կիրառվել են կոնտենտ (բովանդակության) վերլուծության և հեռակա փորձագիտական հարցման մեթոդները:

Սփյուռքի մեդիա-տեքստերի *բովանդակության վերլուծության* հիմնական նպատակն էր յուրաքանչյուր մեդիայի կողմից տարածվող գաղափարների, դիրքորոշումների գերակայության

չափումը և դրանց կիրառման համատեքստերը: Վերլուծության առարկան առանձին գաղափարների ցուցանիշն է քաղաքական մեդիա-տեքստերում: Այդպիսի գաղափարական կոնստրուկտները հետազոտության շրջանակներում անվանվել են «*իդեոլոգեմներ*», որոնք սահմանվում են իբրև «գաղափարախոսական ուղերձ կրող միավորներ, որոնք ճանաչելի են որպես ամրագրված բառ կամ արտահայտություն, ունեն հուզա-արժեքային ասպեկտ, հանդես են գալիս բնորոշ համատեքստում կամ ասոցիատիվ կերպով առաջ են բերում անհրաժեշտ համատեքստեր: Այսպիսով, իդեոլոգեմը խտացնում է որոշակի ասելիք և դրա «կարճ անվանումն» է հանդիսանում: Հետազոտության ընթացքում դիտարկվել են, մասնավորապես, «Հայաստան, Ռուսաստան, Եվրամիություն, Եվրասիական միություն, Մաքսային միություն» իդեոլոգեմները: Կոնտենտ վերլուծության վերլուծական և հաշվարկման միավոր է հանդիսացել մեկ ամբողջական մեդիա-տեքստը կամ հոդվածը: Քանակական տվյալները վերլուծվել են *SPSS (Statistical Package for Social Science)* ծրագրի միջոցով՝ համադրվելով որակական վերլուծության տեխնիկաներով:

Հետազոտության առաջին մասի *օբյեկտը* Սփյուռքի ավանդական և էլեկտրոնային լրատվամիջոցներն են: Հետազոտության ժամանակահատված է ընտրվել 2013թ. սեպտեմբեր-դեկտեմբերը, ինչը պայմանավորված է ինտեգրացիոն գործընթացների քաղաքական ժամանակացույցով:

ԶԼՄ ընտրության առաջին փուլն իրականացրել ենք՝ դիտարկելով 350 անվանական լրատվամիջոց, որոնցից տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով մեզ հասանելի է դարձել 43-ը:

Երկրորդ փուլում առանձնացրել ենք մեր ուսումնասիրության համար անհրաժեշտ թեմատիկ հոդվածներ պարունակող լրատվամիջոցները. դրանք կազմել են 27 միավոր: Երրորդ՝ վերջին փուլում առանձնացրել ենք բոլոր այն լրատվամիջոցները, որոնք առնվազն 1 սեփական հոդված են ունեցել հետազոտության թեմայի շուրջ (բաց են թողնվել թեմայի շուրջ կարծիքների բացակայությամբ զուտ տեղեկատվական լրահոս տրամադրողները և բացառապես այլ ՁԼՄ-ի նյութեր վերատպողները): Արդյունքում՝ ընտրվել է ընդամենը 18 ՁԼՄ, որոնք էլ ենթարկվել են կոնտենտ անալիզի (ցանկը ներկայացված է *Աղյուսակ 1.1-ում*):

Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ *փորձագիտական կարծիքի* ուսումնասիրությունն իրականացվել է հեռակա՝ առցանց նամակագրության միջոցով և կիսաստանդարտացված հարցաթերթի օգնությամբ (բաց հարցերը հետազայում փակվել են և մշակվել որպես քանակական տվյալներ): Ուղարկվել է ավելի քան 450 հարցաթերթ, և ստացվել է ընդամենը 20 պատասխան՝ 4,4%, ինչը պետք է ընդունել որպես մտահոգիչ իրողություն: Հարցումներն իրականացվել են Սփյուռքի տարբեր հատվածների (ըստ հետազա խմբավորման՝ արևմտյան երկրների և ՌԴ-ի) հասարակագետ փորձագետների և համայնքի ներկայացուցչական գործիչների հետ:

Հետազոտական նախագիծը բաղկացած է եղել նախապատրաստական, դաշտային և վերլուծական փուլերից, որոնք ներառել են հետևյալ գործողությունները.

- Սփյուռքի ՁԼՄ դաշտի նախնական ուսումնասիրություն
- Կոնտենտ վերլուծության գործիքի մշակում

- Կոնկրետ դիտարկման ենթակա ՁԼՄ-ի և մեղիատեքստերի առանձնացում (նախապես դիտարկված շուրջ 350 ՁԼՄ-ից՝ 18-ը)
- Ընտրված ՁԼՄ-ի դիտարկում, թեմատիկ հոդվածների առանձնացում և կոդավորում
- Փորձագիտական հարցաթերթի մշակում
- Հեռակա փորձագիտական հարցումներ
- Տվյալների վերլուծություն:

ՁԼՄ ցանկը

Աղբյուրակա 1.1.

No	Անվանում	Երկիր	Բնութագիր	Կայքը
1	«Ալիք» օրաթերթ	Իրան	1931-ից տպագրվել է արվել շաբաթաթերթի իսկ 1941-ից օրաթերթ:	www.alikonline.ir
2	«Լույս» ամսագիր	Իրան	Մշակութային և հասարակական ամսագիր է:	www.louysonline.com
3	«Արաքս» շաբաթաթերթ	Իրան	Գրական, վշակութային և հասարակական շաբաթաթերթ:	www.araxnews.com
4	«Ազրալի» օրաթերթ	Լիբանան	Տպագրվում է 1927-ից օրաթերթ:	www.azragdaily.com
5	«Արևազուն» ամսաթերթ	Կիպրոս	Լույս է տեսնում 1995-ից Նիկոսիայում: Լուսաբանում է հայաստանյան իրադարձություններ, գաղութին վերաբերող երատեսույ խնդիրներ, պատանեկան և երիտասարդական հարցեր, մայրցամաքային լուրեր:	www.artsakank.com.cy/arm
6	«Gibrahayer» (Armenian-Cypriots) magazine	Կիպրոս	«Gibrahayer» էլեկտրոնային ամսագիրը գործում է 1999-ից անգլերեն լեզվով և տարածվում է Կիպրոսում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, Միջին Արևելքում, Աֆրիկայում, ինչպես նաև Հայաստանում, ԼՂՀ-ում:	http://www.gibrahayer.com/
7	«Ազատ օր» օրաթերթ	Հունաստան	Հունաստանի ՀԵՏԻ Կենտրոնական կամիսնի պաշտոնաթերթն է: Հիմնադրվել է 1945թ.:	http://www.azator.gr/
8	«Գառևառար» շաբաթաթերթ	Սիբիր	Բեկին հայոց թեմի առաջնորդարանի շաբաթաթերթն է: Թերթում տեղ են գտնում ավելի շատ կրոնական և հոգևոր հարցերին վերաբերող նյութեր:	http://www.kanitsasr.com/
9	«Օրեք» եվրոպական անկախ ամսագիր	Չեխիա	Տպագրվում է 1999-ից: Երկսուսյա պաթերթական է:	www.oref.cz
10	Ախալցխայի տեղեկատվա- կան կայք	Վրաստան	Հիմնադրվել է 2007թ. գործում է 2008թ. հունվարից:	www.akhatskha.net

No	Անվանում	Երկիր	Բնութագիր	Կայքէջ
11	«Հորիզոն» շաբաթաթերթ	Կանադա	Հասարակական-քաղաքական, մշակութային շաբաթաթերթ: ՀՅԴ Կանադայի շրջանի պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1979-ից Մոնրեալում: Հրատարակվում է 1997 թվականից:	http://www.horizonweekly.ca/home
12	«Ноев Ковчег» газета	Ռուսաստան		http://www.noev-kovcheg.ru/
13	«Երկրագ»	Ռուսաստան	Ռուսաստանի հայերի թերթն է: Հրատարակվում է 1996 թվականից:	http://www.yerkramas.org/
14	«Analitikaua.net»	Ուկրաինա	Համառոտ ևրախնայական մատչուարով գործող տեղեկատվական-վերլուծական կայք:	http://analitikaua.net/
15	«Nouvelles d'Arménie»	Ֆրանսիա	Ամսագիրը հրատարակվում է Փարիզում:	www.armenews.com
16	«Հայրենիք» շաբաթաթերթ	Ամերիկա	Շաբաթաթերթը հրատարակվում է 1899 թվականից Ելու Ֆորթում:	http://www.hairenikweekly.com/
17	«Մասիս» շաբաթաթերթ	Ամերիկա	ԱՄՆ արևմտյան տարածաշրջանի Մոցիսի- դեմոկրատական հիշակրան կուսակցության պաշտոնական թերթն է: Հիմնադրվել է 1981թ. Լոս Անջելեսում:	http://www.massisweekly.com/
18	«Asbarez»	Ամերիկա	Հրատարակվում է 1908 թվականից Ֆրեզնոյում, օրաթերթ է:	http://www.asbarez.com

2. ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌԸ. ԿԱՊԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ժամանակակից լրատվամիջոցները, Հայաստանի և Սփյուռքի տարբեր հատվածների միջև կապերի հաստատման միջոց-գործոն լինելով հանդերձ, ինքնին արտացոլում են այդ կապերը, հանդիսանում դրանց առկայության ցուցանիշ՝ միաժամանակ բովանդակության առումով արտահայտում եղած կապերի բնույթը: Սփյուռքի ԶԼՄ-ը ցուցակագրվում և ուսումնասիրվում էին նաև նախկինում՝ հիմնականապես ունենալով բացահայտել Երկրորդ հանրապետության նկատմամբ առկա բարյացակամության աստիճանը և տրամադրությունները¹: Այժմ՝ Հայաստանի Երրորդ հանրապետության ժամանակաշրջանում, հետազոտողներին հետաքրքրում է ոչ միայն սփյուռքյան կառույցների և պարբերականների լրյալության աստիճանը Հայրենիքի նկատմամբ, այլև հայապահպանության միտումները, Հայաստանի հետ Սփյուռքի մտավոր, սոցիալական, տնտեսական և քաղաքական կապերը, առկա քաղաքական գործընթացների շուրջ դիրքորոշումները, դրանցում Սփյուռքի ներգրավվածության աստիճանը և այլն:

Օրինակ, ֆրանսիացի սոցիոլոգ Լորանս Ռիտտերը, անդրադառնալով Հայաստան-Սփյուռք երկխոսությանը, նշում է, որ

¹ *Բարբոյան Մ.Ս.* (1962), Ժամանակակից սփյուռքահայ մամուլը. ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, № 11, էջ 89-96, <http://basss.asj-oa.am/2236>:

Էլեկտրոնային մամուլի, սոցիալական ցանցերի առկայությունն էապես փոխել է Սփյուռք-Հայաստան կապի որակը. «Իրավիճակը սկսում է փոխվել էլեկտրոնային լրատվամիջոցների շնորհիվ. Հայաստանը Սփյուռքին հասանելի է դառնում կայքերի, բլոգների, սոցիալական ցանցերի միջոցով... Հետզհետե ավելի անհնար է դառնում, որ անտեղյակ լինեն, թե ինչ է տեղի ունենում Երևանում, Մոսկվայում և կամ Լոս Անջելեսում: Հայկական սփյուռքերն այժմ միմյանց հետ ցանցով կապված են, իսկ Հայաստանի հետ կապը նշանակալիորեն փոխվել է: Հավելենք նաև, որ դրանում մեծ է ավանդական սփյուռքում հայտնված հայաստանցիների դերը»¹: Չնայած տեղեկատվության հասանելիությանը՝ հետազոտողը գտնում է, որ «դասական» սփյուռքը քիչ է խառնվում հայաստանյան քաղաքական կյանքին՝ նախընտրելով շարունակել կենտրոնանալ բարեսիրական աջակցության վրա: Հասկանալի պատճառներով, միայն Հայաստանից արտագաղթածներն են, ըստ էության, ակտիվություն ցուցաբերում երկրի քաղաքականության հարցում»:

Այս մասին է վկայում նաև մեր կատարած ուսումնասիրությունը: Այսպես, հետազոտության նախապատրաստական փուլում կոնկրետ դիտարկվել է շուրջ 350 ՁԼՄ, համաձայն մեր ուսումնասիրության թեմայի առկայության չափանիշի, առանձնացվել են 18-ը, որոնք այս կամ այն չափով անդրադառնում էին Հայաստանի արտաքին քաղաքականությանն ու ինտեգրման գործընթացներին: Իսկ հետագա ուսումնասիրությունը բացահայ-

¹ Լորանս Ռիտտեր, «Հայկական ինքնությունը սփյուռքում. Արդիականության և հայապահպանման միջև», <http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenian-diaspora-ar/armenian-identity-in-the-diaspora-between-modernity-and-preservation-armenian>

տեց, որ ընտրված ՁԼՄ-ում գերակշռում են հայաստանյան մեդիայի նյութերի վերատպումները՝ շատ հաճախ առանց որևէ սեփական կարծիքի կամ միջամտության (տե՛ս *Աղյուսակ 2.1*): Էլեկտրոնային որոշ հայտնի պարբերականների դեպքում դրան նույնիսկ տրված է տեխնիկական լուծում. այդ վերատպումներն անգամ ընտրված և մշակված չեն, այլ կատարվում են ինտերնետային ավտոմատ տեխնոլոգիաներով: Այդպիսի պրակտիկա են վարում, օրինակ, «Երկրամաս»-ը, «Analitikaua.net»-ը, «Արարք» շաբաթաթերթը:

Աղյուսակ 2.1.

Միջուկի ՁԼՄ-ում ամենից հաճախ վերատպվող լրատվամիջոցները և գործակալությունները ¹

News.am	22,9%
Новости-Армения	9,5%
Panorama.am	9,2%
Azatutyun.am	7,2%
1in.am	7,0%
Tert.am	5,5%
Lragir.am	5,2%
ИА REGNUM	4,6%
PanArmenian.net	3,6%
Голос Армении	1,8%
Arka.am	1,7%
РИА Новости	1,6%
Арменпресс	1,5%
Այլ աղբյուրներ	18,8%
Ընդամենը	100%

¹ Ցանկում առկա են նաև ՌԴ լրատվամիջոցներ և գործակալություններ, որոնք գրասենյակներ ունեն հետխորհրդային տարածքի որոշ երկրներում, այդ թվում Հայաստանում:

Ուստի, կարող ենք արձանագրել, որ համաձայն մեր ստացած տվյալների, Մփյուռքը ՀՀ ինտեգրման գործընթացների շուրջ մեդիա-քննարկումների խնդրում առանձնապես ակտիվ չէ և ավելի շուտ հակված է արտացոլել հայաստանյան մեդիա-դիսկուրսը: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ մեր ուսումնասիրած նյութերը վկայում են այն մասին, որ ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ ավանդական, ինչպես նաև նոր Մփյուռքի կողմից արտահայտված տեսանկյունը գերակայող չէ, այլ ավելի հաճախ ազդված է Հայաստանից ստացվող տեղեկատվական հոսանքներից: Սակայն կան նաև առավելապես սեփական դիրքորոշումներով հանդես եկող մեդիա-հարթակներ, որտեղ արտահայտվում են Մփյուռքի գործիչների կարծիքներն ու մտահոգությունները: Այդպիսիք են, օրինակ, «Ալիք»-ը, «*Hoeb Kovyeg*»-ը, «*Asbarez*»-ը:

Բացի այդ, սփյուռքահայ գիտական շրջանակների ներկայացուցիչները և փորձագետները ևս ունեն սեփական ասելիք, ինչը մենք բացահայտեցինք մեր հեռակա հարցումների միջոցով, որոնք ներկայացված են հետազոտության հաջորդ բաժիններում:

3. ՄՓՅՈՒՌԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՀ-ՄՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս բաժնում կդիտարկվեն սփյուռքյան մեդիա-դիսկուրսում Մաքսային միության՝ որպես գաղափարական միավորի, հուզա-արժեքային ասպեկտները, հանդես գալու համատեքստերը, ՄՄ-ին անդամակցելու ՀՀ որոշմանը սատարող և ընդդիմացող փաստարկները, ՄՄ խնդրականության, անդամակցելու և չանդամակցելու դեպքում հնարավոր հետևանքների քննարկումները:

«Մաքսային միությունը» որպես իդեոլոգեմ

Սփյուռքյան ԶԼՄ-ում Մաքսային միությանը ՀՀ անդամակցելու որոշման թեմայով ծավալված քննարկումները շատ դեպքերում հիմնվում էին լրատվամիջոցներում ինտեգրացիոն գործընթացների շուրջ ՀՀ մեդիայի լուսաբանման վրա: Դիտարկումներն արվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի շուրջ, Մաքսային միության՝ որպես հեռանկարային կամ անորոշ ապագայով կառույցի, որպես ՀՀ ազգային շահերին համապատասխանության, ՀՀ տնտեսական, էներգետիկ ոլորտների և անվտանգության հարցերի վրա ազդեցության տեսանկյուններից:

Մաքսային միություն իդեոլոգեմը մեդիա-տեքստերում, որպես կանոն, կառուցվում է ոչ իբրև անդամների կամ հավա-

սարագոր սուբյեկտների միավորում հանդիսացող միության գաղափար, այլ ուղղակիորեն ասոցացվում է Ռուսաստանի, հաճախ նաև Պուտինի անձի հետ. «*Այս միութեան ստեղծման հետեւում կանգնած է Ռուսաստանը, իսկ ջատագովը անձամբ նախագահ Վլատիմիր Փութինն է...*» («Ազդակ» օրաթերթ, «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ», 09.09.2013 (Մաքսային միությանը տրվող բոլոր բնորոշումները տե՛ս *Աղյուսակ 3.1-ում*): Այն ներկայացվում է որպէս Ռուսաստանի նախաձեռնած աշխարհաքաղաքական ծրագրի առաջին քայլ, որը ծառայելու է Ռուսաստանի շահերին («*ТС является не экономическим, а сугубо геополитическим проектом, отвечающим исключительно интересам России*», «Ноев Ковчег», «Армения у порога Таможенного союза», 16.11.2013): Հատկանշական է, որ *Մաքսային միություն* իդէոլոգիայի այսպիսի իմաստային կառուցակցումը տեղի է ունենում գրեթէ բոլոր աղբյուրների կողմից, ինչը, փաստորեն, կախված չէ քաղաքական կառույցի հանդէպ դրական, ջատագովական, թէ բացասական, քննադատական տեսանկյունից:

Աղյուսակ 3.1.

«Մաքսային միության» բնորոշումներ

Ռուսաստանի կողմից աշխարհաքաղաքական նոր բևեռ ստեղծելու նախաձեռնություն («Գանձասար» շաբաթաթերթ, Հայաստանի Ազգային ժողովին մէջ քաղաքական ուժերը կը շարունակեն լուսարձակի տակ բերել Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան խնդիրը, 19.09.2013):

Այս միութեան ստեղծման հետեւում կանգնած է Ռուսաստանը, իսկ ջատագովը անձամբ նախագահ Վլատիմիր Փութինն է («Ազդակ» օրաթերթ, Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ, 09.09.2013):

<p><i>Նախկին Խորհրդային Միության անդամ երկիրները տարածաշրջանային միաւորման նորոգեայ տարագով մը համախմբելու Ռուսիոյ քաղաքական նախաձեռնութիւնը («Asbarez», Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը, 20.09.2013):</i></p>
<p><i>Նոր կայսերական ծրագիր («Արձագանգ» ամսաթերթ, Յովհաննիսեան կ'անդրադառնայ Հայաստանի արտաքին յարաբերութիւններուն, 01.10.2013):</i></p>
<p><i>Անհասկանալի – անորոշ ՄՄ իրականություն («Ալիք» օրաթերթ, «Օրինված սհաթի նստվածքը», 17.09.2013):</i></p>
<p><i>Պուտինի Եվրասիական ծրագրեր («Արար» շաբաթաթերթ, «Պուտինը Երևանում՝ Եվրասիական ծրագիրը հաջողված է». «Ամերիկայի ձայն»-ի անդրադարձը, 03.12.2013):</i></p>
<p><i>Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը («Gibrahayer» օնլայն ամսագիր, «We will never leave the Caucasus», 08.12.2013):</i></p>
<p><i>Ոչ միայն ներկա, այլ նաև ապագա չունեցող ՄՄ («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013):</i></p>
<p><i>ТС является не экономическим, а сугубо геополитическим проектом, отвечающим исключительно интересам России («Ноев Ковчег», «Армения у порога Таможенного союза», 16.11.2013):</i></p> <p>ՄՄ-ն ոչ թէ տնտեսական, այլ զուտ աշխարհաքաղաքական նախագիծ է, որը ծառայում է բացառապէս Ռուսաստանի շահերին («Ноев Ковчег», «Հայաստանը ՄՄ շեմին», 16.11.2013):</p>

Ընդհանուր առմամբ, սփյուռքյան մեդիա-դիսկուրսում Մաքսային միության՝ որպէս իդէոլոգեմի կիրառման հիմնական հուզական երանգավորումը հավասարակշռվածն է (44,2%), երկրորդ տեղում է դրական երանգավորումը է՝ 31,6% (տե՛ս *Աղյուսակ 3.2*): Դրական երանգավորմամբ տեքստերը հիմնականում վերաբերում են ոչ այնքան կոնկրետ Մաքսային միության՝ որպէս կառույցի ներկային, որքան այն դրական հնարավորություններին, որոնք կընձեռի ՄՄ-ին ՀՀ անդամակ-

ցությունը: Մաքսային միություն իդեոլոգեմին անդրադարձող հողվածների 11,6%-ում այդ անդրադարձն ունեցել է մտահոգ հուզական երանգավորում, որոնք ևս կապված են Հայաստանի ապագայի հետ:

Աղյուսակ 3.2.

«Մաքսային միություն» իդեոլոգեմի նկատմամբ հուզական երանգավորման հաճախությունները

	%
Դրական	31,6%
Հավասարակշռված	44,2%
Բացասական	23,2%
Մտահոգ	11,6%

Եթե դիտարկենք Մաքսային միության դրսևորումն ըստ թեմատիկ ոլորտների, ապա կտեսնենք, որ ամենամեծ կշիռն ունեն «ՄՄ անորոշ ապագա» թեմատիկ հողվածները՝ 28,8% (տե՛ս *Աղյուսակ 3.3*).

Աղյուսակ 3.3.

«Մաքսային միություն» իդեոլոգեմի բաշխումն ըստ թեմատիկ ոլորտների

	%
ՄՄ՝ անորոշ ապագա	28,8%
ՄՄ-ն՝ որպես ՀՀ շահերն արտահայտող	20,2%
ՀՀ ապագան. ՄՄ, թե՛ Եվրոպա	20,2%
ՀՀ և ԼՂՀ անվտանգություն	17,0%
ՀՀ սոցիալ-տնտեսական դրություն/զարգացում	8,5%
ՀՀ ինքնիշխանություն	6,4%
ՀՀ-Եվրոպա կապեր	3,2%
Եվրասիական միությունը՝ աշխարհաքաղաքական նախագիծ	3,2%
Հայ-ռուսական հարաբերություններ	3,2%

Այս թեմատիկ բլոկում հատկապես հանդիպել են ՄՄ-ին անդամակցության դեմ արտահայտվողների տեքստեր, որոնցում կասկածի տակ են դրվում այդ կառույցի կայացման հեռանկարները և ապագան. *«Таможенный союз не имеет не то что будущего, но и настоящего»*¹, («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013):

ՄՄ-ին Հայաստանի ինտեգրմանը հակադրվողները խնդրական են համարում նաև ՀՀ-ին միության ընձեռած հնարավորությունների հարցը: Մտահոգությունը կապված է հետագայում ՄՄ կազմում Հայաստանի կարգավիճակի և այն բոլոր բացասական հետևանքների ու սահմանափակումների հետ, որոնց առջև կարող է կանգնել Հայաստանը. *«Հասարակությունը ցանկանում է մինչև վերջ հասկանալ, թե Մաքսային միություն կոչուածը, ինչպես էլ այդ ճանապարհով զարգացող յետագայ հեռանկարը ինչ նշանակություն կ'ունենան մեր երկրի համար, ինչ բարիքներ ու թաքնուած ականներ են պարունակում իրենց մէջ: Մաքսային Միությունը, ինչպես էլ այս հանգրուանից դեպի վերջնական նպատակ տանող եւրասիական միությունը ներկայումս նման են մի օղակի, որի պարագիծը յայտնի չէ, սակայն Ռուսաստանը ցանկանում է տեսնել այն որքան կարելի է նեղ, իսկ մնացած բոլորը՝ որքան կարելի է լայն: Եւ թէ հայեացքների այս հակասությունից վերջում ինչ կը ծնուի կամ առ հասարակ բան կը ծնուի թէ ոչ, հաւանաբար Աստծուն անգամ յայտնի չէ: Վիճակը լաւ պատկերացնելու համար նկատի ունենանք, որ*

¹ «ՄՄ-ն ոչ միայն չունի ապագա, այլև ներկա» («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013):

ապագայի հետ կապուած մօտեցումների տարբերությունը ոչ միայն «թեկնածուների» հետ է, այլ անգամ մաքսային միությունը կազմող եռեակի մէջ» («Հայրենիք», «Հայաստանի հեռանկարներ. իրողություններ եւ եզրայանգումներ», 25.09.2013):

Այսպիսի տեսակետների աղբյուր են հանդիսանում ՀՀ ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչները, ՀՀ որոշ փորձագետներ, լրագրողներ, ովքեր առաջ են քաշում Մաքսային միության՝ որպէս կառույցի, խոցելի կետերը, ինչպէս, օրինակ՝ անդամ երկրների միջև տարաձայնությունները և յուրաքանչյուր պետության շահերի անհամատեղելիության հարցը. *«...ՄՄ ներսում համագործակցությունը իդեալական չէ: Ամեն անդամ երկիր, բնականաբար, փորձում է պաշտպանել իր շահերը» («Լույս», «ՄՄ անդամակցությունը կհանգեցնի Հայաստան ներկրվող ապրանքների գների կտրուկ բարձրացման», 12.11.2013):*

Այս խնդիրներից ելնելով էլ քննարկվել է նաև միության ձախողման և Հայաստանի համար հնարավոր բացասական հետևանքների հարցը: Այդպիսով, համարվում է, որ Հայաստանը ՄՄ անդամակցության առիթով կկորցնի Եվրոպայի հետ համագործակցության հեռանկարը՝ միննույն ժամանակ ոչինչ չշահելով ՄՄ-ից:

Վերոնշյալին հակակշիռ կարծիքներ են հանդիպել «ՄՄ-ն որպէս ՀՀ շահերն արտահայտող» թեմատիկ հոդվածներում՝ 20,2%: Որպէս կանոն, այս դեպքերում աղբյուր են հանդիսացել ՀՀ պաշտոնական գործիչները: Աղբյուրների այս խումբը նշում է, որ ինտեգրման գործընթացը բխում է Հայաստանի շահերից, այսինքն՝ ներկա աշխարհաքաղաքական պայմաններում ՀՀ-ի

համար առավել արդյունավետ տարբերակն է համարվում. «Մառացիոնալ որոշում է, այս որոշումը բխում է Հայաստանի ազգային շահերից» («Արձագանգ», «Դուք այս կողմ հրամմեցեք...», 01.09.2013):

Ի տարբերություն վերոնշյալ երկու թեմատիկ բլոկների, որոնցում ՄՄ-ի հանդեպ դիրքորոշումները միանշանակ են, մյուս բոլոր թեմատիկ խմբերում ներառված են ՄՄ-ին Հայաստանի անդամակցության կողմնակիցների և ընդդիմացողների խմբերը:

Ինչպես, օրինակ. «ՀՀ ապագան. ՄՄ, թե՞ Եվրոպա» թեմատիկ բլոկում, որը կազմում է «Մաքսային միությանը»՝ որպես իդեոլոգեմի, անդրադարձ կատարած հոդվածների հաջորդ մեծ մասը՝ 20,2%-ը: Այս հոդվածներն առնչվել են ՄՄ-Եվրոպա երկրնորանքի համատեքստի քննարկումներին: Այստեղ են խմբավորվել ՄՄ-ին կամ ԵՄ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրին միանալու ընդհանուր հեռանկարները քննարկող հոդվածները, ինչպես նաև տեքստեր երկրնորանքից մեկ ճանապարհ ընտրելու դատապարտվածության, միաժամանակ ՄՄ ընտրության պարտադրվածության մասին:

Մաքսային միությանը ՀՀ անդամակցությանը կողմ և դեմ արտահայտված խմբերի դիսկուրսն առավել հստակ դրսևորվել է մի քանի առանցքային թեմաների՝ ՀՀ և ԼՂՀ անվտանգության, Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության/զարգացման (ներառյալ՝ էներգետիկ հարցերի), ՀՀ ինքնիշխանության կորստի կամ առկայության շուրջ, որոնք առանձին-առանձին կդիտարկենք ստորև:

ՀՀ և ԼՂՀ անվտանգություն և ՄՄ

Մաքսային միությունը իդեոլոգիայով ՀՀ և ԼՂՀ անվտանգության համատեքստում դրսևորվել է հողվածների 17%-ում (տե՛ս *Աղյուսակ 3.3*): ՀՀ անվտանգության ապահովման հարցն ի սկզբանե պաշտոնական աղբյուրների կողմից ներկայացվում էր որպես ՄՄ-ին ՀՀ անդամակցության անհրաժեշտության ծանրակշիռ հիմնավորում (տե՛ս *Աղյուսակ 3.4*): Երկրորդ խումբ աղբյուրները շրջանառում էին այն տեսակետը, որ ՀՀ-ն ոչ թե ՄՄ-ին անդամակցության արդյունքում կամրապնդի իր անվտանգությունը, այլ պարզապես կնվազեցնի չանդամակցելու հետևանքով սպասվող ռիսկերը:

Աղյուսակ 3.4.

*ՀՀ անվտանգության խնդիրը ՄՄ համատեքստում.
«կողմ» և «դեմ» փաստարկումների օրինակներ*

Կողմ	Դեմ
<p><i>Մեր անվտանգութեան համակարգը ամբողջապես յենուած է Ռուսաստանի վրայ («Գանձասար» շաբաթաթերթ, «Իշխանութեան դէմ պայքարում պէտք չէ կոյր լինել», 31.10.2013):</i></p>	<p><i>...Հայաստանն այդ կորուստն ունեցաւ Ռուսաստանի կողմից անհաւանական մեծ ճնշման պատճառով, որ անվտանգութեան հարցով ճնշում էր («Ազատ օր» օրաթերթ, Էլէնի Թեոխարոս կը յորդորէ՝ երես չդարձնել Հայաստանէն. եւրոպացի երեսփոխաններու գնահատականները, 01.10.2013):</i></p>
<p><i>Ռուսաստանի Դաշնության հետ կենսական նշանակություն ունեցող ռազմավարական դաշինքը, որի վրա է խարսխված մեր երկրի անվտանգության համակարգը («Օրեր» ամսագիր, «Տիգրան Սարգսյան. Մենք հետամուտ ենք շարունակել սերտ համագործակցությունը Եվրոպայի հետ՝ չհակադրելով այն Մաքսային միությանը», 24.10.2013):</i></p>	<p><i>Армении было дано понятие, что если она проводит комплементарную политику, то и сама Россия будет проводить такую же. Например, продавать оружие не только Еревану, но и Баку («Ноев Ковчег», «Крутые повороты российско-армянских отношений», 01.10.2013).</i></p> <p><i>Հայաստանին հասկացրին, որ եթե կոմպլեմենտար քաղաքականություն է վարում, ուրեմն Ռուսաստանը ևս նման քաղաքականություն կվարի: Օրինակ՝ կսկսի գենք վաճառել ոչ միայն Երևանին, այլև Բաքվին:</i></p>

Կողմ	Ղեմ
<p>Մենք ենք այդ ցանկությունը յայտնել, որովհետև ելել ենք շատ պարզ իրողությունից. մենք 20 տարուց աւելի է, որ գտնուում ենք ռազմական անվտանգութեան մի համակարգում, որի բաղկացուցիչ մասերն են կազմում այն պետությունները, որոնք այսօր ձեռնարկել են Մաքսային միությունը («Asbarez», Մերժ Սարգսեան յայտարարեց Հայաստան պատրաստ է ստորագրելու ընկերակցութեան համաձայնագիրը, 05.10.2013):</p>	<p>Вспомним, что совсем недавно Россия продала Азербайджану на один миллиард долларов наступательного вооружения, и поймаем, что вот он – мощный рычаг давления на Армению («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013).</p> <p>Հիշենք, որ բոլորովին վերջերս Ռուսաստանը Ադրբեջանին վաճառեց մեկ միլիարդ դոլար արժողությամբ հարձակողական սպառազինություն և կհասկանանք, որ դա Հայաստանի վրա ճնշում գործադրելու հզոր լծակ է:</p>
<p>«Մակայն հայ-ռուսական հարաբերությունների առանցքային հարցերից մեկը, որը քննարկման ենթակա չէ՝ դա Ռուսաստանի ռազմական դերի հարցն է («Gibrahayer», "WE WILL NEVER LEAVE THE CAUCASUS", 08.12.2013):</p>	<p>Власти сегодня говорят: да, мы пошли на это ради безопасности. Но какие новые гарантии безопасности обещала им Россия? Нет абсолютно никакой правовой базы для этого, нет юридических гарантий («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013).</p> <p>Այսօր իշխանություններն ասում են՝ այո, մենք դրան գնացինք անվտանգության համար: Բայց անվտանգության ի՞նչ նոր երաշխիքներ է իրենց խոստացել Ռուսաստանը: Չկա բացարձակ ոչ մի իրավական հիմք դրա համար, չկան իրավական երաշխիքներ:</p>
<p>Մերժ Սարգսյանը համոզվածություն է հայտնել, որ հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունը և դաշնակցային փոխգործակցությունն այսուհետև ընդլայնվելու են՝ ի շահ երկու պետությունների և նրանց քաղաքացիների բարգավաճման, ի բարօրություն տարածաշրջանային կայունության և անվտանգության ամրապնդման («Օրեր» ամսագիր, Ճաշկերույթին Պուտինը խոսել է «Եվրոպայի ամենահին մշակույթներից մեկն ունեցող հայ ժողովրդի և Հայաստանի մասին», 02.12.2013):</p>	<p>Անվտանգության փաստն անտեսել չի կարելի: Այդ անվտանգությունն ապահովելով՝ Հայաստանը կարող էր այլ հարթությունում Ռուսաստանի հետ համագործակցել, օրինակ, կապող օդակ դառնալ Ռուսաստանի և Եվրոպայի միջև, հետո նոր քննարկեր երկուսի հետ էլ համագործակցելու հարցը («Արաբս» շաբաթաթերթ, «Մաքսային միությանը միանալու որոշումը պարտադրված էր Ռուսաստանի կողմից». Երվանդ Բոգոյան, 15.10.2013):</p>

Կողմ	Ղեմ
<p>Հայաստանը չի կարող կոմպրոմիսի ենթարկել իր անվտանգությանն ապահովման հիմնախնդիրը և հարցականի տակ դնել Ռուսաստանի Դաշնության հետ կենսական նշանակություն ունեցող իր ռազմավարական դաշինքը, որի վրա է խարսխված մեր երկրի անվտանգության համակարգը», - ասել է Տիգրան Սարգսյանը</p> <p>(«Օրեր» ամսագիր, «Տիգրան Սարգսյան. Մենք հետամուտ ենք շարունակել սերտ համագործակցությունը Եվրոպայի հետ չհակադրելով այն Մաքսային միությանը», 24.10.2013):</p>	<p>Ռուսաստանի համար նաև կարևոր նշանակություն ունի իր ներկայության և գերակայության պահպանումը վառելիքով և գազով հարուստ տարածքներում: Ռուսաստանը նաև ցանկանում է թույլ չտալ հակառակորդ Թուրքիային գերակայող ուժ դառնալ տարածաշրջանում՝ այդպիսով վերահսկելով ԱՄՆ իր ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում: Հայաստանի որպես դաշնակցի, կորուստը կրերի տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության կորստի: Հայաստանը կարևոր դեր է խաղում Ռուսաստանի համար այս նպատակներին հասնելու ճանապարհին, քանի որ այն տարածաշրջանի միակ երկիրն է, որ ամուր կապեր ունի Ռուսաստանի հետ («Asbarez», «Why Armenia Should Have Chosen the Path to EU» - «Ինչո՞ւ Հայաստանը պետք է ընտրի դեպի ԵՄ ճանապարհը», 05.09.2013):</p>
<p>Մենք այսօր ունենք անվտանգութեան մի համակարգ, որը լուրջ թե՛ վատ, մինչևե հիմա ծառայել է մեր անվտանգութեանը: Մենք չունենք անվտանգութեան նոր համակարգի ոչ նախագիծ, ոչ էլ մօտ ապագայում երևում է դա ունենալու հնարավորությունը: Մօտեցումը մենք վաղուց կրկնել ենք. եթե չունես այլընտրանք, պիտի ամրապնդես այն, ինչ ունես («Asbarez», «Ռազմական եւ էներգետիկ խնդիրներով ամբողջութեամբ կախում ենք Ռուսաստանից. լինել-չլինելու հարց էր». Արմէն Ռուստամեան, 10.09.2013):</p>	

Չկարգավորված հակամարտության պայմաններում անվտանգության ապահովման ինդիքը կենսական նշանակություն ունի մեր երկրի համար, և այն ընկալվում է ըստ էության ՀՀ-ին իրական ընտրության հնարավորությունից զրկող օբյեկտիվ գործոն. *«...ինչ-որ հանգրուանում, ելնելով առկայ աշխարհաքաղաքական իրավիճակից եւ զարգացումներից, Հայաստանը միանալու էր իր ռազմավարական գործընկերոջ կողմից նախաձեռնուած Մաքսային միութեանը եւ ներգրաււելու էր եւրասիական տնտեսական միութեան ձեւաւորման գործընթացում»* («Արձագանգ» օրաթերթ, «Մամլոյ հաղորդագրութիւն», 05.09.2013):

Մաքսային միութեանն ինտեգրվելու օգտին ընդունված որոշմանը կողմ լինելու հարցում մեծ դեր է խաղում նաև Ռուսաստանից ՀՀ կախվածության գիտակցումը ռազմական և անվտանգության ոլորտներում. *«...Թուրքիոյ եւ Իրանի հետ Հայաստանի սահմանը հսկում են ռուս սահմանապահները, եւ այս երկրից է մշտապէս համալրուում մեր զէնքի ու զինամթերքի գրեթէ ողջ պաշարը»* («Հայրենիք», «Հայաստանի հեռանկարներ. իրողութիւններ և եզրայանգումներ», 25.09.2013): Այս և նման պատկերացումները մշտապէս ելնում են ՌԴ-ից ՀՀ բարձր կախյալության առկա պայմաններից: Դրանք երբևէ չեն հարցադրում փոխհարաբերությունների գոյություն ունեցող կարգի փոփոխման հնարավորությունը կամ անհրաժեշտությունը: Արդյունքում՝ ստեղծված պայմաններում Ռուսաստանի կողմից պատժիչ հետևանքներից խուսափելու միակ ելքը Մաքսային միութեանը, իսկ հետագայում նաև Եվրասիական միութեանն անդամակցությունն է դիտարկվում. *«Նորից եմ կրկնում՝ էթէ*

չունես այլընտրանք, կապուած կենսական անհրաժեշտութեան հարցերի հետ, ուրեմն պէտք է ամրապնդես էն, ինչ ունես» («Asbarez», «Ռազմական եւ էներգետիկ խնդիրներով ամբողջութեամբ կախուած ենք Ռուսաստանից. լինել-չլինելու հարց էր»։ Արմէն Ռուստամեան, 10.09.2013):

ԼՂՀ կարգավիճակի հարցը և հնարավոր պատերազմը. ՄՄ-ին անդամակցության շուրջ ծավալված քննարկումներում ՀՀ անվտանգության հարցն անմիջականորեն կապվում է ԼՂ հարցի հետ երկու տեսանկյունից՝ անվտանգության ապահովման և ԼՂՀ կարգավիճակի: Ընդ որում՝ Ռուսաստանի դերակատարմանն այս երկու դեպքում էլ մեծ կարևորություն է տրվել:

Աղբյուրների մի խումբը (հիմնականում ՀՀ և ՌԴ պաշտոնական աղբյուրներ) շրջանառում են այն կարծիքը, որ ՄՄ-ին անդամակցությունը կամրապնդի ԼՂՀ անվտանգությունը և առհասարակ կնպաստի ամբողջ տարածաշրջանում անվտանգության և կայունության պահպանմանը (տե՛ս *Աղյուսակ 3.5*):

Մյուս խումբը, որտեղ որպէս աղբյուր հանդես են եկել փորձագետներ տարբեր երկրներից, գտնում է, որ այս անդամակցության արդյունքում ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև հնարավոր մաքսային սահմանը կարող է հանգեցնել բացասական, նույնիսկ աղետալի հետևանքների՝ ընդհուպ մինչև տարածաշրջանում ստատուս քվոյի փոփոխության և նոր պատերազմի: Այս խմբի տեքստերը պարունակում են այն իմաստավորումը, որ Ռուսաստանի դերը ԼՂՀ հարցում միանշանակ չէ: Ռուսաստանի համար չկարգավորված հակամարտությունը հանդես է գալիս

որպես լծակ, անհրաժեշտության դեպքում օգտագործվում է որպես ճնշման միջոց Հայաստանի վրա: Այս տեսակետի կողմնակիցներն իրենց փաստարկները ծավալում են Ռուսաստան-Ադրբեջան հարաբերությունների, Ռուսաստանի կողմից Ադրբեջանին ցույց տրվող աջակցության շուրջ, օրինակ. *«У Кремля было множество рычагов давления, и он их использовал. Первый – это угроза новой войны, которую может начать Азербайджан. Москва дала понять, что готова поддержать Баку в этом конфликте, в том числе политически. Вспомним, что совсем недавно Россия продала Азербайджану на один миллиард долларов наступательного вооружения, и поймем, что вот он – мощный рычаг давления на Армению»* («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе»¹, 01.10.2013):

¹ «Կրեմլը ճնշման բազմաթիվ լծակներ ուներ, և նա դա կիրառեց: Առաջինը նոր պատերազմի սպառնալիքն էր, որը կարող է սկսել Ադրբեջանը: Մոսկվան ցույց տվեց, որ պատրաստ է աջակցել Բաքվին այս հակամարտության ժամանակ, և ոչ միայն քաղաքական առումով: Հիշենք, որ վերջերս Մոսկվան է \$1 մլրդ-ի հարձակողական սպառազինություններ վաճառել Ադրբեջանին, և կհասկանանք, որ հենց դա էր Հայաստանի վրա ճնշում գործադրելու հզոր լծակ» («Ноев Ковчег», «Դավիթ Շահնազարյան. Ռուսաստանին հարկավոր էր կանգնեցնել Հայաստանի ընթացքը դեպի Եվրոպա», 01.10.2013):

Աղյուսակ 3.5.

ԼՂՀ կարգավիճակի և հակամարտության կարգավորում.
ՄՄ-ին անդամակցության «կողմ» և «դեմ» փաստարկումներ

Կողմ	Դեմ
<p>«Մաքսային միութեան միանալով կը լուծուի Արցախի ապահովութեան երաշխաւորման խնդիրը: Մեր սահմաններուն կը հսկեն ռուս սահմանապահները» («Գանձասար» շաբաթաթերթ, «Հայաստանի Ազգային ժողովին մէջ քաղաքական ուժերը կը շարունակեն լուսարձակի տակ բերել Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան խնդիրը», 19.09.2013):</p>	<p>«С какой стати Россия должна ее (а по сути – безопасность не только Армении, но и Нагорного Карабаха) гарантировать? Напротив, Россия в этом случае вполне может переориентировать свою внешнюю политику в регионе на Азербайджан...» («Ноев Ковчег», «Интеграционные альтернативы: сложный выбор Армении между Европой и Россией», 16-30.09.2013).</p> <p>«Ինչի՞ց էլնելով Ռուսաստանը պետք է ոչ միայն Հայաստանի, այլև ԼՂ անվտանգությունը երաշխավորի: Հակառակը՝ Ռուսաստանը կարող է այս պարագայում տարածաշրջանում իր արտաքին քաղաքականությունը կողմնորոշել Ադրբեջանի ուղղությամբ»:</p>
<p>«Հայաստանը, լինելով շրջափակման մէջ և ունենալով թշնարար տրամադրված հարևան, չի կարող կրոնորոմիսի ենթարկել իր անվտանգության ապահովման հիմնախնդիրը և հարցականի տակ դնել Ռուսաստանի Դաշնության հետ կենսական նշանակություն ունեցող իր ռազմավարական դաշինքը, որի վրա է խարսխված մեր երկրի անվտանգության համակարգը» («Օրեր» ամսագիր, «Տիգրան Մարգարյան. Մենք հետամուտ ենք շարունակել սերտ համագործակցությունը Եվրոպայի հետ՝ չհակադրելով այն Մաքսային միությանը», 24.10.2013):</p>	<p>«У Кремля было множество рычагов давления, и он их использовал. Первый – это угроза новой войны, которую может начать Азербайджан...» («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01-15.10.2013):</p> <p>«Կրեմլը ճնշման բազմաթիվ լծակներ ունեւ, և նա դա կիրառեց: Առաջինը նոր պատերազմի սպառնալիքն էր, որը կարող է սկսել Ադրբեջանը...»:</p>

Կողմ	Դեմ
<p>«Մեր պարագայում, ցանկացած տնտեսական ինտեգրում պետք է յստակ երաշխիքներ տայ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների անվտանգության պահպանման ու ամրապնդման եւ տնտեսական համարկման եւ զարգացման համար</p> <p>(«Asbarez», «ՀՅԴի Արձագանգը», 04.09.2013):</p>	<p>«Для Армении – не только экономические потери, но нечто более страшное – ликвидация второго, хотя и не признанного, армянского государства - Нагорного Карабаха, т. е. передача нескольких сот тысяч армян во власть чуждого и с учётом нынешних реалий – агрессивно настроенного и жаждущего реванша государства» («analitika.ua.net», Михаил Белецкий: Армения и Украина между ЕС и ТС, 06.09.2013).</p> <p>«Հայաստանի համար դա կարող է նշանակել ոչ միայն տնտեսական կորուստներ, այլ նաև ավելի սարսափելի բան՝ թեկուզ և չճանաչված պետության լուծարում և մի քանի հարյուր հազար հայերի հանձնում ագրեսիվ տրամադրված և վրեժի ծարավ պետության իշխությունը»:</p>
<p>«Կան ուրիշները, ովքեր հավատում են, որ դա եղել է առողջ որոշում՝ հաշվի առնելով անվտանգության հարցերի (ռուսական զորքերը պաշտպանում են մեր սահմանները Թուրքիայի և Իրանի հետ), որը ներառում է Լեռնային Ղարաբաղի անվտանգության և կենսունակության հարցերը» («Asbarez», Autumn Promises: From Moscow to Brussels and Back, 10.09.2013):</p>	<p>«ՄՄ-ին Հայաստանի միանալը ոչ այնքան Հայաստանի և Ղարաբաղի անվտանգության ապահովման, որքան գոնե կարճաժամկետ կտրուածքով իրավիճակի ապակայունացման եւ ստատուս քուոյի (վիճակի) փոփոխության պոտենցիալ է պարունակում...» («Ազատ օր» օրաթերթ, Ինչ է տալու Մաքսային միությունը Ղարաբաղին, 30.09.2013):</p>
<p>«Քանի դեռ վերջնականապես չի կարգադրուել դարաբաղեան հակամարտությունը, իսկ Թուրքիան անվերապահորեն աջակցում է Ազրպեյճանին, Հայաստանին այլ ճանապարհ չի մնում, քան՝ փարուել Ռուսաստանին» («Ազդակ» օրաթերթ, «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրության առաջ», 09.09.2013):</p>	<p>«... Կարճատեւ պատերազմը ՌԴ-ի համար կարող է ռեզերվային (պահեստային- խմբ.) տարբերակից դառնալ առաջնային ցանկացած պահի, որը ամենակարճ ճանապարհը կը լինի դարաբաղեան հակամարտութեան գոտի խաղապահների անուան տակ զորքեր մտցնելու եւ վերջնականապէս Հարաւային Կովկասն իր միանձնեայ ազդեցութեան գոտին դարձնելու համար» («Asbarez», «Ու մ պատուէրն է կատարում Զօրի Բալայեանը», 15.10.2013):</p>

Կողմ	Դեմ
<p>«Հայաստանի այս ընտրությունը, եթե մենք դիտարկում ենք անվտանգության, Ղարաբաղի հարցի, ուժանիթի անվտանգության եւ մի շարք այլ խնդիրների համաթեքություն, ապա ձեզ համար ընդունելի, հասկանալի, ընկալելի է եւ հիմնադրուած» («Ազդակ» օրաթերթ, Հրանդ Մարգարեան. «Մենք հրաշալի տարբերում ենք, որտեղ է իշխանությունը, որտեղ՝ հայրենիքն ու պետականությունը», 16.09.2013):</p>	<p>«Ըստ անոր, այդ առումով չկայ հիմք որեւէ լուստեսություն, թէ Մաքսային միության անդամակցությունը Ղարաբաղի հարցը պիտի լուծէ» («Ազատ օր» օրաթերթ, «ՀՅԴ-ն սկզբունքօրէն դէմ չէ Մաքսային միության անդամակցության, քանի որ ոչինչ յստակ է» կ'ըսէ Կիրո Մանոյեան», 22.11.2013):</p>

Տնտեսական ոլորտ և ՄՄ

ՄՄ-ին անդամակցության դիսկուրսի մեջ «կողմ» և «դեմ» կարծիքների և հիմնավորումների բավական մեծ խումբը վերաբերում է տնտեսական ոլորտին: Առաջին խումբը (հիմնականում ՀՀ և ՌԴ պաշտոնական աղբյուրներ) որպես հիմնավորում ներկայացնում է այն տնտեսական հնարավորությունները, Ռուսաստանի կողմից ենթադրվող ներդրումների ավելացման հանգամանքը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսական զարգացմանը և կամրապնդեն երկրի պոտենցիալը. «...այն Հայաստանի համար կապահովի ՀՆԱ 4% աճ» («Ноев Ковчег», «Таможенный союз открывает дополнительные возможности для экономики Армении», 01.10.2013): Մեկ այլ օրինակում, սակայն, տեսնում ենք, որ այդ աճը կախված է մի շարք պայմաններից. «ՀՆԱ աճը կլինի կայուն, եթե Մաքսային միության աջակցությամբ երկրում կառուցվի նոր աստղակայան, եթե կառուցվի Հայաստանն Իրանին կապող երկաթուղին և եթե կառուցվի Հյուսիս-Հարավ միջանցքը, ու Վրաստանով անցնող երկաթգծերը

բացվեն» («Nouvel d'Arménie», «L'Arménie pourrait afficher une croissance du PIB de 6,5 à 7% après l'intégration dans l'Union douanière»/«Հայաստանը կունենա 6,5-7% ՀՆԱ աճ ՄՄ-ին միանալուց հետո», 08.12.2013):

Տնտեսական տեսանկյունից ելնելով՝ ՄՄ-ին անդամակցությանը «կողմ» կարծիքներում հանդիպում են ոչ միայն անդամակցության որոշումը տնտեսական սպասվող զարգացումներով հիմնավորող կարծիքներ: Առկա են նաև տնտեսական, էներգետիկ, հեռահաղորդակցությունների ոլորտներում ՌԴ-ից ՀՀ կախվածության փաստից ելնող, հետևաբար՝ անդամակցության անխուսափելիությունը մատնանշող, ինչ-որ առումով այդ քայլն արդարացնող ձևակերպումներ. *«Ռուսաստանից է ստացւում Հայաստանում իրացուող կազմի մեծ ծաւալը, եւ ատոմակայանի հումքը: Այս երկրի հետ է իրականացւում Հայաստանի ամենամեծ առևտրային շրջանառութիւնը: Ռուսաստանը տնօրինում է Հայաստանի տնտեսական եւ հաղորդակցութեան կարեւորագոյն ու ռազմավարական ձեռնարկութիւնների» («Հայրենիք», «Հայաստանի հեռանկարներ. իրողութիւններ և եզրայանգումներ», 25.09.2013):*

Տնտեսական ոլորտին վերաբերող տեքստերում անդամակցությանը «դեմ» կարծիքներում թերահավատության, մտահոգության երանգներ են նկատվում հատկապես տնտեսական բարեփոխումների նկատմամբ, այս դեպքում պատկերը ներկայացվում է բոլորովին այլ տեսանկյունից. ՀՀ ինտեգրումը կհանգեցնի տնտեսական անկման, գնաճի և այլ բացասական հետևանքների: *«Հայաստանի առաջիկա անդամակցությունը*

Մաքսային միությանը (ՄՄ) ըստ էության նշանակում է հրաժարում սակագնային լիբերալ քաղաքականությունից ու անցում ՄՄ առանձին անդամների համար հովանավորչական քաղաքականության: «Զգայուն ապրանքների ցանկը, որի վերաբերյալ ներմուծման մաքսային տուրքի որոշումը Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է կոնսենսուսով», ներառում է գրեթե բոլոր ապրանքները: Խնդիրն այն է, որ այդ սակագներն արդեն հաստատվել են ՄՄ ներկա անդամների կողմից ու դժվար թե Հայաստանի համար նվազեցվեն...» («ԼՈՒՅՍ», «ՄՄ անդամակցությունը կհանգեցնի Հայաստան ներկրվող ապրանքների գների կտրուկ բարձրացման», 12.11.2013):

Տնտեսական ինտեգրմանը խոչընդոտող մի քանի կարևոր գործոններ են առանձնացվում, ինչպես, օրինակ՝ ՀՀ տնտեսական համակարգի էական տարբերությունները ՄՄ անդամ պետությունների տնտեսական համակարգերից. «Կառուցվածքային առումով այսօր Հայաստանի տնտեսությունը թույլ զարգացած երկրին բնորոշ կառուցվածք ունի, և այդ առումով Հայաստանի տնտեսությունը կատարելագործման, նոր ճյուղերի և արտադրությունների ստեղծման կարիք ունի»¹: Այս ամենը պահանջում է ներդրումների ծավալ, որը հիմնականում, ինչպես տեսնում ենք, ակնկալվում է Ռուսաստանից, այնինչ ՌԴ-ն ինքը արդիականացման կարիք ունի: Սակայն այստեղ կա ևս մի կարևոր խոչընդոտ. «Միության կազմի մեջ մտնող գերիշխող երկիրը՝ Ռուսաստանն ինքն իր տնտեսության արդիականացման խնդիր և արտասահմանյան ներդրումների կարիք ունի, ինքը չի

¹ <http://www.lragir.am/index.php/arm/0/interview/view/79129#sthash.20TSmgMY.dpuf>

կարող որոշակի ֆինանսավորում հատկացնել այլ երկրներին՝ տնտեսության որոշակի ճյուղեր զարգացնելու համար»¹:

Հետաքրքիր է, որ թե՛ ՄՄ ընձեռած տնտեսական հնարավորությունները և թե՛ չանդամակցելու դեպքում Հայաստանին բաժին ընկնելիք բացասական հետևանքները հիմնականում վերաբերում են միայն Ռուսաստանին, այլ ոչ թե տնտեսական միությանը, որտեղ ընդգրկված են նաև այլ երկրներ (Ռուսաստանի շուկայի կարևորությունը Հայաստանի համար, Ռուսաստանի կողմից ակնկալվող ներդրումները տնտեսական ոլորտում կամ, օրինակ, Ռուսաստանի կողմից գազի գնի բարձրացումը և այլն):

Աղյուսակ 3.6.

Տնտեսական ոլորտ. ՄՄ անդամակցությանը «կողմ» և «դեմ» փաստարկումներ

<i>Կողմ</i>	<i>Դեմ</i>
<p><i>«И как только появилась возможность сделать рывок в экономической сфере, она использовала эту возможность и приняла решение о вступлении в Таможенный союз» («Analitikaua.net», «В Ереване обсудили перспективы вступления Армении в ТС», 20.10.2013).</i></p> <p><i>«Հենց որ տնտեսական ոլորտում առաջ գնալու հնարավորություն ընձեռվեց, նա օգտագործեց այդ հնարավորությունը և որոշում ընդունեց մտնել Մաքսային միություն»:</i></p>	<p><i>«ՄՄ-ին անդամակցությունը Հայաստանում կստեղծի առևտրային 1.5% գնաճ («Nouvel d'Arménie», «L'adhésion à l'Union douanière va pousser l'inflation selon un député»/«Ըստ պատգամավորի՝ ՄՄ-ին անդամակցությունը կհրահրի գնաճ», 28.12.2013):</i></p>

¹Նույն տեղում:

Կողմ	Ռեմ
<p>«Հայաստանի անդամակցումը Մաքսային միությանը լրջորեն կանրապնդի երկրի տնտեսական պոտենցիալը» («Արաքս» շաբաթաթերթ, «Ռուսաստանը չի պատրաստվում Անդրկովկասից հեռանալ». Պուտին, 03.12.2013):</p>	<p>«Հայաստանի առաջիկա անդամակցությունը Մաքսային միությանը (ՄՄ) ըստ էության նշանակում է հրաժարում սակագնային լիբերալ քաղաքականությունից ու անցում ՄՄ առանձին անդամների համար հովանավորչական քաղաքականության: «Զգայուն ապրանքների ցանկը, որի վերաբերյալ ներմուծման մաքսային տուրքի որոշումը Մաքսային միության հանձնաժողովն ընդունում է կոնսենսուսով», ներառում է գրեթե բոլոր ապրանքները: Խնդիրն այն է, որ այդ սակագներն արդեն հաստատվել են ՄՄ ներկա անդամների կողմից ու դժվար թե Հայաստանի համար նվազեցվեն...» («Լույս», «ՄՄ անդամակցությունը կհանգեցնի Հայաստան ներկրվող ապրանքների գների կտրուկ բարձրացման», 12.11.2013):</p>
<p>«Հայաստանի անդամակցությունը Մաքսային միությանը կունենա դրական ազդեցություն Հայաստանի ֆինանսական համակարգի վրա» («Nouvel d'Arménie», «Le président de la Banque Centrale d'Arménie explique que l'adhésion à l'union douanière aura un effet positif sur le système financier de l'Arménie»/ «Հայաստանի Կենտրոնական բանկի կառավարիչը հայտարարել է, որ ՀՀ ՄՄ-ին միանալը դրական ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսական համակարգի վրա», 21.09.2013):</p>	<p>Մաքսային միութիւնում այժմ գործող մաքսատուրքերով Հայաստանի տնտեսութիւնը անկում է ապրելու, ըստ Բագրատեանի, սա միանջանակ է, քանի որ յայտնուելու ենք մի տարածքում, որտեղ մաքսատուրքերը պէտք է մի քանի անգամ բարձրանան» («Մասիս» շաբաթաթերթ, «Պէտք չէր գնալ Եւրոպական միութիւն», 21.09.2013):</p>
<p>«ՄՄ երկրների հետ ինտեգրման առաւել բարձր մակարդակը, այդ թւում՝ առեւտրային տէխնիկական խոչընդոտների հեռացումը, իհարկէ, կը խթանի Հայաստանի տնտեսական աճը» («Արաքս» շաբաթաթերթ, «Ռուսաստանը չի պատրաստվում Անդրկովկասից հեռանալ». Պուտին, 03.12.2013):</p>	<p>ՀՆԱ աճը կլինի կայուն, եթե Մաքսային միության աջակցությամբ երկրում կառուցվի նոր ատոմակայան, եթե կառուցվի Հայաստանը Իրանին կապող երկաթուղին և եթե կառուցվի Հյուսիս-Հարավ միջանցքը, ու Կրաստանով անցնող երկաթգծերը բացվեն» («Nouvel d'Arménie», «L'Arménie pourrait afficher une croissance du PIB de 6,5 à 7% après l'intégration dans l'Union douanière»/ Հայաստանը կունենա 6,5-7% ՀՆԱ աճ ՄՄ-ին միանալուց հետո, 08.12.2013):</p>

Կողմ	Ղեմ
<p>«... через Таможенный союз руководство Армении пытается обеспечить развитие экономики» («Ноев Ковчег», «Таможенный союз открывает дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013):</p> <p>«...ՄՄ-ի միջոցով ՀՀ կառավարությունը փորձում է ապահովել տնտեսության զարգացումը»:</p>	
<p>«...Ռուսաստան - Հայաստան առևտրի ծավալը կաճի 9-15% յուրաքանչյուր տարի՝ մինչև 2020թ.» («Nouvel d'Arménie», «Le volume commercial Russie Arménie devrait croître de 9 à 15% chaque année jusqu'en 2020»/«Ռուսաստան - Հայաստան առևտրի ծավալը կաճի 9-15% յուրաքանչյուր տարի՝ մինչև 2020թ.»», 05.12.2013):</p>	
<p>«По мнению профессора, оно принесет Армении 4% дополнительного роста ВВП. В частности, речь идет о развитии железнодорожной сферы» («Ноев Ковчег», «Таможенный союз открывает дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013).</p> <p>«Պրոֆեսորի կարծիքով, այն Հայաստանին կբերի 4% ՀՆԱ աճ, մասնավորապես խոսքը վերաբերում է երկաթուղային ոլորտին»:</p>	
<p>Ռուսաստանից է ստացում Հայաստանում իրացուող կազմի մեծ ծավալը, եւ ատոմակայանի հումքը: Այս երկրի հետ է իրականացում Հայաստանի ամենամեծ առևտրային շրջանառությունը: Ռուսաստանը տնօրինում է Հայաստանի տնտեսական, էլեկտրականակա եւ հաղորդակցութեան կարևորագոյն ու ռազմավարական ձեռնարկութիւնների («Հայրենիք», «Հայաստանի հեռանկարներ. իրողութիւններ եւ եզրայանգումներ», 25.09.2013):</p>	

Կողմ	Ղեմ
<p>«Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Ռուսաստանը մեր հիմնական առևտրային գործընկերն է եւ ներդրողը, իսկ հայկական արտադրանքը հիմնականում իրացւում է ռուսական շուկայում» («Մասիս» շաբաթաթերթ, Տիգրան Սարգսեան. «Մաքսային միութիւն մտնելով Հայաստանը կը շահի», 09.11.2013):</p>	
<p>«Տնտեսութեան մէջ մեր առևտրաշրջանառութեան աճը աւելի քան 23 տոկոս է: Ռուսիան կը մնայ Հայաստանի առաջատար առևտրատնտեսական գործընկերը, եւ այդ միտումը կը պահպանուի», հաստատած է Փութին» («Արձագանգ», «Դուք ա՛յս կողմ իրամմեցեք...», 01.09.2013):</p>	

Էներգետիկ ոլորտ. Էներգետիկ ոլորտը տնտեսական ոլորտի մաս է կազմում, որին առնչվող հարցերը ևս չեն շրջանցվել ՄՄ-ին անդամակցության դիսկուրսում: Էներգետիկ խնդիրների լուծումը դիտարկված հողվածներում մեծ մասամբ կապվում է հենց ՄՄ-ին, Եվրասիական միությանը, որն, ըստ էության, կրկին ասոցացված է Ռուսաստանի հետ (մեր կողմից հարցված փորձագետների շրջանում ևս առկա են այս մոտեցումները, առավել մանրամասն տե՛ս *9-րդ ենթավերնագրի ներքո*): Հայաստանի կողմից ՄՄ-ին անդամակցության որոշման մեջ նշանակալի դեր է հատկացվում էներգետիկ գործոնին՝ հաշվի առնելով ՀՀ էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից: Որպես ՄՄ-ից (նաև ԵՏՄ-ից) ակնկալվող արդյունքներ հիմնականում կարելի է նշել ներդրումները ՀՀ էներգետիկ ոլորտում՝ զարգացման նպատակով. *«...Модернизации действующей АЭС, развитию*

транспортных и энергетических инфраструктур благодаря российским инвестициям объемом 470 млн долларов»¹ («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013): Ակնկալվող արդյունքներից է նաև գազի գնի նվազումը կամ, գոնե, եղած վիճակի պահպանումը. «Экономист подчеркнул, что за счет снятия таможенных пошлин станет возможным 30% снижение тарифов на поставляемый из России газ»² («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013):

Վերոնշյալ հանգամանքները ՄՄ-ին անդամակցությանը դեմ կարծիքներում դիտարկվում են այլ տեսանկյունից: Այս տեսքստերում կարելի է տեսնել մտավախություն, որ Ռուսաստանը, հանդիսանալով Հայաստանին գազ մատակարարող և էներգետիկ հարցերում մեծ հետաքրքրություն ունեցող կողմ, կօգտագործի ՄՄ-ին անդամակցության փաստը՝ էներգետիկ շուկայում Ռուսաստանի մենաշնորհն ավելի ամրապնդելու համար: Նկատենք նաև, որ պատահական չէր հենց այս ժամանակահատվածում ռուսական գազի թանկացման ու դրանից կախված՝ էլեկտրաէներգիայի գնի աճի մասին լուրերի տարածումը, ինչը, կարծում ենք, ընդհանուր գործընթացի մաս էր կազմում:

¹ «Գործող ԱԷԿ մոդեռնիզացիան, տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը տեղի կունենա \$470 մլն կազմող ռուսական ներդրումների շնորհիվ» («Ноев Ковчег», «ՄՄ-ն լրացուցիչ հնարավորություններ կբացի ՀՀ տնտեսության համար», 01.10.2013):

² «Տնտեսագետն ընդգծեց, որ Ռուսաստանից ստացվող գազի գինը 30%-ով կարող է նվազել սահմանին մաքսերի վերացման շնորհիվ» («Ноев Ковчег», «ՄՄ-ն լրացուցիչ հնարավորություններ կբացի ՀՀ տնտեսության համար», 01.10.2013):

Աղյուսակ 3.7.

Էներգետիկ ոլորտ. ՄՄ անդամակցությանը
«կողմ» և «դեմ» փաստարկումներ

Կողմ	Դեմ
<p>«Экономист подчеркнул, что за счет снятия таможенных пошлин станет возможным 30% снижение тарифов на поставляемый из России газ» («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013): Տնտեսագետն ընդգծեց, որ Ռուսաստանից ստացվող գազի գինը 30% կարող է նվազել սահմանին մաքսերի վերացման շնորհիվ («Ноев Ковчег», «ՄՄ-ն լրացուցիչ հնարավորություններ կբացի ՀՀ տնտեսության համար», 01.10.2013):</p>	<p>«Հայաստանի էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից հանգեցրեց տնտեսական ոլորտում Ռուսաստանի գերիշխանության» («Asbarez», «Why Armenia Should Have Chosen the Path to EU»/«Ինչո՞ւ Հայաստանը պետք է ընտրի դեպի ԵՄ ճանապարհը», 05.09.2013):</p>
<p>«Эксперт по энергетике считает, что вступление в ТС позволит Армении сохранить действующую АЭС. Строительство новой АЭС, по его мнению, не обеспечило бы энергобезопасность Армении: в этом случае встал бы вопрос возвращения инвестиций, что в свою очередь привело бы к повышению тарифов на электроэнергию» («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013): Էներգետիկ խնդիրներով փորձագետը գտնում է, որ ՄՄ-ին անդամակցությունը հնարավորություն կտա Հայաստանին պահպանել գործող ԱԷԿ-ը: Նոր ԱԷԿ-ի շինարարությունը, նրա կարծիքով, չի ապահովի ՀՀ էներգետիկ անվտանգությունը: Այս դեպքում կբարձրանար ներդրումների վերադարձման հարցը, ինչն իր հերթին կբերի էլեկտրաէներգիայի գնի բարձրացման:</p>	<p>«Естественно, что в Таможенном союзе его члены – по крайней мере, два из трех – будут проталкивать свои интересы как экспортеры углеводородов, а Белоруссия – как их транзитер. Естественно, что они по этому вопросу будут вести протекционистскую политику. Армения – на 100% потребитель этих углеводородов. Нет для нее выгоды в этом союзе» («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01-15.10.2013): Բնական է, որ ՄՄ-ն և դրա անդամները, առնվազն 3-ից 2-ը, պետք է առաջ տանեն իրենց շահերը որպես էներգակիրներ արտահանողներ, իսկ Բելառուսը որպես միջնորդ: Հայաստանը 100%-ով այդ էներգակիրների սպառողն է: Այդ միության մեջ Հայաստանը շահ չի կարող ունենալ:</p>

Կողմ	Դեմ
<p>«Модернизации действующей АЭС, развитии транспортных и энергетических инфраструктур благодаря российским инвестициям объемом 470 млн долларов» («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013).</p> <p>Գործող ԱԷԿ մոդեռնիզացիան, տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքների զարգացումը տեղի կունենա 470 մլն դոլար կազմող ռուսական ներդրումների շնորհիվ:</p>	<p>Впрочем, министр энергетики и природных ресурсов Армен Мовсисян поспешил заверить журналистов, что снижения цен на газ для населения не будет. По его словам, средства будут направлены на субсидирование импорта российского газа в Армению («Ноев Ковчег», «Таможенный союз откроет дополнительные возможности для экономики Армении», 01-15.10.2013).</p> <p>ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար Արմեն Մովսիսյանը շտապեց լրագրողներին հավաստիացնել, որ գազի գնի իջեցում բնակչության համար չի սպասվում: Ըստ նրա՝ այդ միջոցները պետք է ուղղվեն ռուսական գազի սուբսիդավորմանը:</p>
	<p>«...դա փաստ է, որ մեր ռազմական և էներգետիկ խնդիրներով ամբողջությամբ կախումս ենք Ռուսաստանից: Այլ բան է հարցը, թե ինչու դա իմանալով մեր ռեսուրսը չենք մեծացրել, որ պէսզի երբ ժամանակը գալիս է «կամ... կամ»ի առաջ կանգնելու, մենք այդպէս ծայրայեղ անհրաժեշտութեան գիտակցումով չգնանք, պարտադրուած գործընթացի մէջ մտնենք, այլ կարողանանք մեր անհրաժեշտ խնդիրները լուծել այն գիտակցութիւնն ունենալով, որ վաղը ունենալու ենք ինքնուրոյն, բաւարար ռեսուրս ձեռք բերելու հնարաւորութիւն» («Asbarez», «Ռազմական և էներգետիկ խնդիրներով ամբողջությամբ կախումս ենք Ռուսաստանից. լինել-չլինելու հարց էր». Արմեն Ռուստամեան, 10.09.2013):</p>

ՀՀ ինքնիշխանություն և ՄՄ

Այս թեմատիկ խմբում որպես աղբյուր առավել հաճախ հանդես են եկել տարբեր փորձագետներ, լրագրողներ, սակայն առավել մեծ թիվ են կազմել ՀՀ ընդդիմադիր դաշտի ներկայացուցիչները: Որպես կանոն, հիմնական դիրքորոշումը ՄՄ-ին անդամակցությանը դեմ լինելն է՝ հղում անելով ՀՀ ինքնիշխանությանն սպասվող ռիսկերի փաստարկմանը. *«...վտանգուած կը տեսնեն Հայաստանի անկախութիւնն ու հայ ժողովուրդի ազատութիւնը»* («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.2013): ՄՄ-ին անդամակցությունը որպես ՀՀ ինքնիշխան որոշում է դիտարկվել միայն մեկ անգամ՝ օտարերկրյա դիվանագետի կարծիքում, ինչով ՀՀ ինքնիշխանության առկայությունը հաստատվում է, ոչ թե խնդրականացվում: Մնացյալ բոլոր դեպքերում ակնհայտ է Հայաստանի անկախության կորստի մտավախությունը. *«...մէկ բեւեռին կանգնած են ահազանգ հնչեցնողները, որոնք վտանգուած կը տեսնեն Հայաստանի անկախութիւնն ու հայ ժողովուրդի ազատութիւնը»* («Asbarez», «Autumn Promises: From Moscow to Brussels and Back», 10.09.2013): Կամ մեկ այլ օրինակ. *«Անկասկած, Մաքսային միութեանը միանալու դեպքում Հայաստանը է՛լ աւելի է կորցնում իր ինքնիշխանութիւնը»* («Ազդակ» օրաթերթ, «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ», 09.09.2013): Այս տեսակետի կողմնակիցները ՀՀ անդամակցության որոշումը Ռուսաստանի կողմից ճնշման արդյունք են դիտարկում՝ ՄՄ-ին անդամակցության արդյունք համարելով այն, որ Ռուսաստանը կամրապնդի

Հայաստանի կախվածությունն իրենից. «Հայաստանի վրա Ռուսաստանի բացահայտ և գռեհիկ ճնշումը մշտապես կմնա այն թելադրող վեկտորը, որով Ռուսաստանը կորոշի Հայաստանի «բազմավեկտորությունը», եվրոպական սլաքների «քաշը, հասակը և ուղղությունը» («Ալիք» օրաթերթ», «Օրինված սհաթի նստվածքը», 17.09.2013):

Աղյուսակ 3.8.

ՀՀ ինքնիշխանություն. ՄՄ-ին անդամակցությանը
«կողմ» և «դեմ» տեսակետների օրինակներ

Կողմ
«Դա ինքնիշխան Հայաստանի ինքնիշխան որոշում է, որը հաշվի է առնում Հայաստանի շահերը» («Asbarez», «Ֆրանսիայի դեսպանը հաստատեց Ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը», 29.10.2013):
Դեմ
«Հայաստանի ինքնիշխանության դեմ ուղղված որոշում...» («Օրեր» ամսագիր, Հայ-ռուսական բարեկամության հուշարձանի բացում և հակապուտինյան երթ Երևանում, 02.12.2013):
«Մէկ բեւեռին կանգնած են ահագանգ հնչեցնողները, որոնք վտանգում կը տեսնեն Հայաստանի անկախութիւնն ու հայ ժողովուրդի ազատութիւնը» («Asbarez», «Autumn Promises: From Moscow to Brussels and Back», 10.09.2013):
«Անկասկած, Մաքսային միութեանը միանալու դեպքում Հայաստանը է՛լ անելի է կորցնում իր ինքնիշխանութիւնը» («Ազդակ» օրաթերթ, «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ», 09.09.2013):
«Կան մարդիկ, ովքեր կտրուկ դեմ արտահայտվեցին Մաքսային միությանը, քանի որ նրանք պնդում են, որ երկրի ինքնիշխանությունը սպառնալիքի տակ է» («Asbarez», «Autumn Promises: From Moscow to Brussels and Back», 10.09.2013):
Մեպտեմբերի 2ից մինչ 21ի գեղեցիկ օրերի բնաբանը, որ պիտի լիներ «Անկախութիւն» եւ «Միացեալ Հայաստան», դարձաւ «Եւրասիա», թէ «Եւրոմիութիւն»: «Լաւագոյն պարագայում մեծամասնութիւնը հարց է բարձրացնում պայմանագրերին ծանօթ չլինելու եւ Ս.Մարգսեանի անընդունելի գործելաճճի վերաբերեալ: Սակայն, ի նչ է Հայոց պետականութեան ազգային ռազմավարութիւնը մեր «Անկախութեան» վերաբերեալ եւ, օրինակ, սրանից 8 տարի յետոյ նրա 30ամեակին (երբ ըստ Եւրասիայի ծրագրի, եթէ թղթի վրայ չմնայ, 2020ից կ'աշխատի ռուբլին՝ տարածաշրջանում եւ երեւի մենք էլ կը վերադառնանք հին լաւ օրերին...) ինչ պատկեր է կազմելու Հայաստանի անկախ եւ ազատ Հանրապետութիւնը, դժուար թէ որեւէ քաղաքական դեմք եւ հոսանք ունի յստակ գրատր ծրագիր ու հայեցակարգ, իսկ Եւրասիայինը արդէն պարզ է...» («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13):

4. ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԲԵՎԵՌ

«Եվրասիական միությունը» որպես իդեոլոգեմ

Հետազոտական ժամանակահատվածում Սփյուռքի լրատվամիջոցները Եվրասիական միությանն (ԵԱՄ) անդրադարձել են ոչ այնքան հաճախ, ինչքան, թերևս, պայմանավորված է ԵԱՄ դեռ չորոշարկված կառույց լինելու հանգամանքով: Չնայած այս հանգամանքին, ԵԱՄ-ն արդեն հանդես է գալիս որպես գաղափարական հասկացություն, և ուրվագծվում են դրա իմաստավորման հիմնական տեսանկյունները: Դիտարկված ժամանակահատվածում ԵԱՄ-ը քննարկվում է ՄՄ-ին ինտեգրացիայի համատեքստում՝ որպես դրա տրամաբանական շարունակություն և հաջորդող քայլ. *«Մեպտեմբեր 3-ին, «ՀՀ նախագահ Մերժ Մարգսեանը Մոսկուայում իր յայտարարությունը կատարեց՝ կտրուկ համաձայնութեան որոշում ստորագրելով՝ միանալու Ռուսաստանի նախագահ Պուտինի նախաձեռնած Եւրասիական միութեանը, Մաքսային միութեան նախաքայլով»* («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13):

Եվրասիական միության իմաստավորման երկրորդ և երրորդ կողմերն այն են, որ դա հանդես է գալիս որպես ՌԴ, իսկ ավելի հաճախ՝ նաև անձամբ Վ.Պուտինի աշխարհաքաղաքական նախաձեռնություն, և որ Եվրասիական միությունը գլոբալ՝

աշխարհաքաղաքական ձեռնարկ է: Ասել է թե՛ Եվրասիական միությունը «Արևմուտքին» հակակշիռ աշխարհաքաղաքական բևեռի հավակնող պուտինյան նախագիծ է. *«Ինչպէս որ Հայաստանի մէջ կը սիրեն ըսել, «գործընթաց»ը իր «մեկնարկային» փուլին մէջ է: Այսինքն՝ իր առաջին քայլերը կը նետէ նախկին Խորհրդային Միութեան անդամ երկիրները տարածաշրջանային միաւորման նորօրեայ տարագով մը համախմբելու Ռուսիոյ քաղաքական նախաձեռնութիւնը: ...ոռւս պետական միտքը փաստօրէն նոր թափ հաղորդած է իր ազդեցութեան գօտին տնտեսապէս, նաեւ ու ի վերջոյ քաղաքականապէս միաւորելու ռազմավարութեան» («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13):*

Կամ, օրինակ. *«Եւրասիական միութեան ստեղծմամբ գործակցութիւնը պիտի փոխադրուի քաղաքական բնագաւառ, որովհետեւ Ռուսիա կը ձգտի ստեղծելու աշխարհաքաղաքական նոր բեւեռ մը...» («Գանձասար» շաբաթաթերթ, «Հայաստանի Ազգային ժողովին մէջ քաղաքական ուժերը կը շարունակեն լուսարձակի տակ բերել Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան խնդիրը», 19.09.13):* Հետաքրքիր է նկատել, որ թե՛ն Եվրասիական միությունը դիտարկվում է որպէս «Արևմուտքին» հակակշիռ բևեռ, այնուամենայնիվ, այն չի ձևակերպվում իբրև «այլընտրանք», այսինքն՝ հակադրությունը չի բացարձակացվում և մնում է թոթով՝ չնայած իր պաթոսին:

Վերոնշյալ իմաստավորումներն առկա են՝ անկախ կառույցի հանդեպ դրական կամ բացասական դիրքորոշումներից: Ինչպէս նշեցինք, Եվրասիական միությունն իր հիմքով ասոցացված է Մաքսային միության հետ, և հետևաբար՝ առաջինի հանդեպ

վերաբերմունքը և տեսակետները միանշանակորեն կապված են ՄՄ-ի հանդեպ դիրքորոշումների հետ: Այսպես, ՀՀ-ի կողմից Եվրասիական միությանը լիարժեք ինտեգրման քաղաքական օրակարգն առաջ է տանում «*Ноев Ковчег*»-ը: Առավել ևս այդ վերաբերմունքն ընդգծվում է ռուս լրագրողների հոդվածներում: Օրինակ, «Крутые повороты российско-армянских отношений» հոդվածում նշվում է, որ որոշումը բխում է ՌԴ և նրա գործընկերների շահերից, այն Ռուսաստանի նախագահի ծրագիրն է, որը նա ձգտում է իրագործել. «*Однако начавшийся мировой экономический кризис и непрекращающаяся деструктивная политика Запада в отношении России расставили все по своим местам. У руководства страны сформировалось устойчивое представление о том, что создание Евразийского союза является единственно реальной выигрышной перспективой для российского государства и его стратегических союзников. И Владимир Путин шел на второй президентский срок с четким пониманием этой цели. Концепция Евразийского союза нашла отражение в одной из его предвыборных статей, а затем в соответствующих президентских указах и других основополагающих документах российской внешней политики*» («Ноев Ковчег», «Крутые повороты российско-армянских отношений», 01.-15.10.2013)¹:

¹ «Մակայն սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը և Արևմուտքի՝ Ռուսաստանի նկատմամբ չդադարող ապակառուցողական քաղաքականությունն ամեն ինչ դրեցին իրենց տեղը: Երկրի ղեկավարության մոտ ձևավորվեց կայուն տեսակետ, որ Եվրասիական միության ստեղծումը միակ իրատեսական շահեկան հեռանկարն է ռուսական պետության և իր ռազմավարական գործընկերների համար: Եվ Վլադիմիր Պուտինը գնաց երկրորդ նախագահական ժամկետին այս նպատակի հստակ գիտակցմամբ: Եվրասիական միության հայեցակարգն արտացոլվեց նրա նախընտրական հոդվածներից մեկում, այնուհետև համապատասխան նախագահական հրահանգներում և Ռուսաստանի արտաքին քաղաքականության այլ հիմնարար փաստաթղթերում» («Ноев Ковчег», «Հայ-ռուսական հարաբերությունների կտրուկ շրջադարձերը», 01.-15.10.2013):

«Ալիք», «Asbarez», «Հորիզոն» պարբերականները, համակարծիք լինելով Եվրասիական միության աշխարհաքաղաքական ծրագրային բնույթին, այն բնութագրում են առավելապես բացասական կամ ոչ միանշանակ էպիտետներով. *չարաբաստիկ Եվրասիական միություն, սպառնում է գրկել Հայաստանին ինքնիշխանությունից* («Ալիք», «Օրհնված սևաթի նստվածքը», 17.09.13), *Պուտինի նախաձեռնած Եվրասիական միությանը* («Asbarez», «Ինչո՞ւ Հայաստանը պետք է ընտրի դեպի ԵՄ ճանապարհը» 05.09.13): Զուգահեռներ են տարվում Եվրասիական միության ծրագրի ու Խորհրդային Միության վերականգնման հնարավոր սցենարի միջև: Խորհրդային Միությունն այս դեպքերում դիտարկվում է իբրև ռուսական կայսրության օրինակ, ուստի Եվրասիական միությունը ստանում է *Մովետական Միություն վերստեղծելու ռուսաստանյան դեկավարության կայսերական ծրագրի* իմաստը: «Asbarez»-ը, Եվրոպական միության ինտեգրացիայի քաղաքական օրակարգի կողմնակիցը լինելով, Եվրասիական ինտեգրումը բնորոշում է որպես պարտադրված ընտրություն, որից շահում է միայն Ռուսաստանը. «*Եւ այս չարեաց փոքրագոյնի ընտրութիւնը պարտադրելով Հայաստանին՝ Մոսկուան իր համար տանում է առաւելագոյնը՝ Հայաստանի լիակատար հնազանդութիւնը եւ օտարումը Արեւմուտքից*» («Asbarez», Ո՞ւմ պատուէրն է կատարում Զօրի Բալայեանը», 15.10.13):

Դիտարկելով ինտեգրացիոն երկու ուղղությունների հնարավորությունները՝ «*Հայրենիք*» շաբաթաթերթում շեշտադրվում է իրավիճակի անհնարինությունը, միևնույն ժամանակ փորձ է

արվում անդրադառնալ Հայաստանի համար եվրասիական ինտեգրման հնարավոր դրական զարգացումներին: Այս պարագայում խոսվում է եվրասիական ինտեգրման արդյունքում տնտեսական աճի հավանականության մասին. *«ունենալով տնտեսական զարգացման նույնպիսի մակարդակ՝ Հայաստանի համար Եվրասիական շուկան ներկայումս ամենանուաճուածն է ու ամենահեռանկարայինը: Հայաստանն ու Ռուսաստանը ներկայումս ծրագրում են մեծ ծաւալներով ընդլայնել տնտեսական գործակցութիւնը, ինչը կը ներառի յատկապէս արդիւնաբերական ոլորտները»* («Հայրենիք» շաբաթաթերթ, «Հայաստանի հեռանկարներ. իրողութիւններ եւ եզրայանգումներ», 25.09.13):

Սփյուռքի լրատվամիջոցներում Եվրասիական միությանը ՀՀ անդամակցությանը «կողմ» և «դեմ» փաստարկներում կարող ենք նկատել, որ դրանք հիմնականում համահունչ են Մաքսային միությանն անդամակցելու շուրջ փաստարկներին: Այսպէս, «կողմ» տեսանկյունից որոշումը հիմնավորվում է տնտեսական զարգացման հեռանկարով և ՌԴ-ի հետ ՀՀ բարեկամության ավանդույթով, դեմ տեսանկյունից շեշտադրվում են հնարավոր բացասական հետևանքները, որոնցից առավել կարևորվում է ինքնիշխանության հնարավոր կորուստը, մտահոգություն է դրսևորվում նաև կառույցի անկատարության և անմիանշանակության, զարգացման կոնկրետ սցենարի բացակայության նկատմամբ: Օրինակները ներկայացնում ենք *Աղյուսակ 4.1-ում*.

Եվրախաղաղական պիլոտաժանը ՀՀ անդամակցությունը «Կողմ» և «դեմ» փաստաթղթի ներքին

Աղյուսակ 4.1. 55

Յուրով	Ձեռն
<p>Սեկյաններ, որ տեկնարդ տեղեկացրած գաղափարների նախնիների անվանումով՝ Հայաստանի հասարակական շուկայի ներկայումս անկենսականացումը է ու անկենսականացումը: Հայաստանի ու Առաստաղներ ներկայումս ծրագրում են մեծ ծախսերով ընդարձակ տեղեկացրած գործակցությունը: Դանք կը ներքին յարկապահ պարկերակրողական ուղղությունը: Դանք է արհեստագրել, որ փաստագր (որ ֆարթ) մեք ցուցում ենք երթախաղաղական տեղեկացրածական տարածումը («Հայրենիք» շաբաթաթերթը, «Հայաստանի հեռուստատեսությունը» 25.09.13):</p>	<p>«Հայաստանը Մոսկուայի անտեղ ղեկավարելու փորձի ընտրեց Մաքսայի պիլոտաժանի արտակարգ խնայողական անհատապարիք այն պայմաններում, երբ դեռ պարզ չէ, թե՞ Պուտինի երթախաղաղական ծրագրերի ընդհանրապես կենտրոն կը կոչունեն միայ յետադիմության փեռուրհիներին այսպիսի ղեկավարության փեռան պարտանկերում, թե՞ ոչ: Այլ կերպ ասած՝ անտարբեր ծաղրիկ» գաղափարը Հայաստանը գրկեց իրեն ԵՄ Անցադրական նախապատրաստման արդեն իսկ գրեթե պատրաստ համաձայնագրի ընդունումից եւ դրա կիրառումից...» («Մաքսա» շաբաթաթերթը, «Առաջին ժառնակ» ընթացակարգ, 28.09.13):</p>
<p>У руково́дства страны формирова́лось устойчи́вое представле́ние о том, что созда́ние Евразийского союза является единстве́нно реальной перспекти́вой для российской госуда́рства и его стратеги́ческих союзников. И Владимир Путин шел на второй президентский срок с четким пониманием этой цели. Концепция Евразийского союза нашла отражение в одной из его предвыборных статей, а затем в соответствующих президентских указах и других документах. «Крутые повороты российской-армянских отношений», 01-15.10.2013):</p> <p>«Մուկայի սիվալան իստիւշխարիային տեղեկացրած ճիւղերումը և Առաստաղների նկատմամբ Արմինույնը շնորհալուր սարգախաղաղադրական քաղաքականությունը անկե ինչ դրեցին իրենց սեղը: Երկրի ղեկավարության մտք ձևավորվեց կարգի տեսակետ, որ Եվրախաղաղական պիլոտաժան ստեղծումը միայ իրատեսակում շահեկան հեռանկարն է ժուլալական փեռուրհության և նրա թագնակարգական գործընկերներին համար: Եվ Վլադիմիր Պուտինը գնաց երկրորդ նախագահական ժամկետին այն նպատակով՝ հստակ գիտակցելու: Եվրախաղաղական պիլոտաժան իրենցալուրն արտագրվեց նրա նախընտրական ինքնակենտրոն մեթոդ, այնուհետև իստիւշխարիային նախագահական իրտեսակետում և Առաստաղների արտաքին քաղաքականության այլ հրմնաքար փաստաթղթերում («Ռուս Կոսթեթ», «Հայ-առաստաղական ինքնագրերումներին կարգի շրջապարհները», 01.-15.10.2013):</p>	<p>... Դան էլ նախապատրաստությունը սույ ժուլալական տարբերակին «պայքան պայքանի ղեկավար» (ես այն կանվանեմ «ամեն ինչ ոչնչի ղեկավար») տեսնակցան ու թագնակարգական պատժամիջոցներ տրեմլին դուրը, կեյան ղեկը քանի արհեստ: Հայրենի իշխանությունը ստիւշխարս կիրեն ղեկավարել Մուկայի թուղն ու ջրանկը իսկ պարզեցությունը, փոխարենը Հայաստանի իշխանություններն ընտրեցին հեռու ձևապարհը տեղիքը կարգալուրպարան, հանձնեց ամեն ինչ սեփական ծրագրողը և երկրի ղեկավարն ու ձևակախարհը թողնելով նրանից փնջը քանու ընտանալուրին, փոխարենը կալեկը սեփական իշխանությունը վերադարձրեցու «ցարական իրախուր»-ը («Ալթը», «Օրնուման ստաթի կուտլալթըր», 17.09.13):</p>

Չորս	Դեմ
<p>Когда принималось решение, в Армении отчётливо понимали – этот шаг благоприятен для развития экономики страны, понимали, что гарантии безопасности ей даёт не Евросоюз, а Россия. (...) Европейский союз привлекает страны бывшего Союза больше, чем российский. В Евразийском союзе решения принимаются только при строгим консенсусе, согласии всех участников.</p> <p>(«Ноев Ковчег», «Сурен Арутюнян: Для меня Армения и Россия – единое целое», 16-30.10.2013).</p> <p>Եւրօ կայացվում էր որոշումը, Հայաստանում հստակ հասկանում էին, որ այդ քայլը բարենպաստ է երկրի տնտեսության զարգացման համար, հասկանում էին, որ անվտանգության երաշխիք իրենց տալիս է ոչ թէ ԵՄ-ը, այլ Ռուսաստանը: (...) Եվրասիական միությունը նախկին Մոսկովական Միության երկրներին գրավում է ավելի շատ, քան Եվրոպականը:</p> <p>«Վստահ եմ, որ Հայաստանի ղեկավարության որոշումը՝ միանալ Մարաշիևի միությանը և Եվրասիական տնտեսական տարածքին, իննց այն բոլոր ավանդույթների հիմքում է, որոնք մեր նախնիների կողմից դրվել են անցած տասնամյակների և դարերի ընթացքում: Դա մտածված, կշռադատված որոշում էր, և այն նոր հնարավորություններ է ստեղծում մեր հարաբերությունների զարգացման համար արդեն նոր հիմքի վրա: Ես չեմ կասկածում, որ դրանք պակաս արդյունավետ և զերմ կլինեն, քան նախկին տասնամյակներում և հարյուրամյակներում: Ցանկանում եմ Ձեզ դրա համար շնորհակալություն հայտել», - սակ է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը («Օրվոր», «Հաշվեկալույթին Պուտինը խոսել է Եվրոպայի ամենախիտ մշակույթներից մեկն ունեցող հայ օնոլոգի և Հայաստանի մասին», 02.12.13):</p>	<p>Մակայն Ռուսաստանը փորձեց հարկարել Հայաստանին միանալ Պուտինի նախաձեռնած Եվրասիական միությանը, որը պետք է բարձրացներ ամբողջ աշխարհում Ռուսաստանի վարկանիշը և ապահովեր ղեկավարող թերը հետխորհրդային երկրների շրջանում («Asbarez», «Ինչպե՞ս Հայաստանը պետք է ընտրի դեպի ԵՄ ճանապարհը», 05.09.13):</p> <p>«Շատ հարցեր մնում են անպատասխան, թե որոնք են Եվրասիական միության բարդաբան և տնտեսական օգուտները ընդրեմ Եվրասիության: Հայաստանի հասարակությունը, ում անունից իբր խոսում է նախագահը, իրավունք ունի իմանալ պատասխանները և, ի վերջո, հասկանալ, թե ինչ երկրում երանք պետք է ասրեն այս ճանապարհորդության ավարտին» («Asbarez», «Աշխատանքն խոստումներ. Մոսկվայից Բյուրատև և ինձ», 10.09.13):</p>

Խոսք	Տեղ
<p>«Вполне очевидно, что Кремль, и на это он имеет полное право, предложил Еревану альтернативу: продолжая «интеграционные» игры с Брюсселем, вы теряете российский «континг» безопасности, а присоединяясь к российским интеграционным проектам, вы получаете гарантии военной поддержки в случае обострения нагорно-карабахского конфликта. Это вполне логично: плюс Евросоюз или хотя бы Франция возмуту на себя обязательство безопасности своего «ассоциированного члена». С какой стати Россия должна ее (а по сути – безопасность не только Армении, но и Нагорного Карабаха) гарантировать? Напротив, Россия в этом случае вполне может переориентировать свою внешнею политику в регионе на Азербайджан, в значительной степени сохраняющий пока что суверенитет. За безопасность надо платит, и вступление в Таможенный союз в глазах Кремля как раз и становится такой платой. Судя по всему, Кремль не будет препятствовать и развитию диалога Армении с европейскими структурами, если этот диалог не станет препятствием для выбора Армении между Европой и Россией», 16.09.13).</p> <p>«Միանշանակի ասված է, որ Կրեմլը, և որս իրավունքը նաև ունի, արտառնալով է ասլըվարտել Երևանին շարունակելով «ինտեգրացիան» իսպրելը Բրյուսելի հետ, որը նորգտան էր ռուսական անվտանգության «անհրաժեշտը», միևնույն րիպետով ռուսական ինտեգրացիան նախաթողին՝ որս ԵՄ-ը իսակ Ֆրանսիան վերահի իրենց իրս «ստաբիլիտիվ անդամ» անվտանգությունը: Իհից ց երկերով Տնտեսական պետար է երաշխավորի (քստ եսարան ու պրտա շարտանակ, արդ նսակ ԼՂՀ անվտանգությունը): Ըստ հավտառակի, Տնտեսական արդ իրավիճակում կարող է ուղղորդել իր արտառնը ըստարվանդանըրանը ձեպի Ասորթան, որը իհն զգալի ցավով պտանան է իր ինքնիշխանությունը: Անվտանգության հաստար պետար է վեանրել, և անտարբ Կրեմլը չի իռնընտրոթ շարտանակի և եվրոպական իտառնցիանր երկրտանությունը զարգացնելը, եթե արդ երկիրտանությունը ցավելի վերաթելվ «քրոսական հաշվով իսպող» («Ноев Ковчег», «Ինտեգրացիան արընտրանքներ, շարտանակի քարը ընտրությունը ԵՄ-ի և Տնտեսական մրթե», 16.09.13):</p>	<p>«ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում իր յուրաքանչյուրները կրտարից կարող հստակեցնությունեան որսուն անորսարելով միանշանակ Տնտեսական նախագահ Պոտոլինի նախնահեան Շարտանակի մրտարանը: Սարգսյանի մրտարան նախարարով: Ասպրիտով, Սեպտեմբերի 2նր մրկն 21ր գեներիլ որերի ընտարանը, որ պրտի իրենը «Անկախությունի և «Մրտագալ շարտանակ», որսուկս «Շարտանակ», թե «Շարտանակներ»: «Ատտարան պարտագարուն սեհտանվտանգությունը հարց էր քարճարցնան պարվանտարներին նստոր չիները, եր ՍՍՍրդանեանի անընդանըր գործելուամի վերտարեկա: Սուկայն, ի նց է շարց պետանկանրեանի արգանի ուղղանկարողները՝ սեր «Անկախությունեան» վերտարեկալ եր, որսուրի, եթե ըրթի վրտա ցմտալ, 2020ից կ արշտանր ռուզրին՝ տարանշարտանակ եր երեկ սեկը էր կը վերտարտանար հին լա է որերին...) ինչ պտտիներ է կազմելու շարտանակի անկայն եր արգտա շնրտարտանակները, որտար թե որեկն քարտարանի ղեկը եր հաստեր ունի յուրանի գրտարը որտարը ու հայեցակարգը, իսկ Շարտանակներ արդեկ պարզ է...» («Աստարեզ», «Անկախությունեան պտանպունանը քսցը եր անտարտարիլ որտարքը», 30.09.13):</p>

Կողմ	Դեմ
	<p>«...ինչ պատկեր է կազմելու Հայաստանի անկախ և ազատ Հանրապետությունը, դժուար թե որևէ քաղաքական դեմք ևս հուսանք ունի յստակ գրառք ծրագիր ու հայեցակարգ, իսկ Եւրասիայից արդէն պարզ է... «Շատ են անեղբելի «օրամսաբանությունները», դե որ փոքր ենք, միջազգայնորէն քաղաքական ուժ չէ մեր 22ամեայ պետականությունը, մինչ օրս Եւրոպայից ի նչ օգուտ, երկու միլիոնից աւելի Սփիւռք ունենք հուսաստանում, մեր արտադրութիւնը արդքան էլ յոյս չի ներշնչում Եւրոպա արտահանելու, իսկ հուսաստանի պարագայում լատգոյնս տիրապետում ենք կոռուպցիոն համակարգին...» («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց ևս արագնային օրակարգը», 30.09.13):</p>
	<p>Հայաստանի արջն ծառացած բազմաթիվ խնդիրներից կարևորագույնը և անենականագույնըրը հենց այն չարաբաստիկ Եվրասիական միությունն է, որը սպառնում է գրկել Հայաստանին ինքնիշխանությունից («Ալիք», «Օրինական անաթի ստույգաբլ», 17.09.13):</p>

«Եվրասիական միություն» - «Եվրամիություն»

«Եվրասիական միություն» իդեոլոգները հաճախ հանդիպում է ԵՄ-ի հետ համեմատության համատեքստում: Հիմնական առավելությունն ու գլխավոր տարբերությունը, որ նշվում է հոգուտ Եվրասիական միության, անվտանգության հարցն է: Այն շրջանառվում է հիմնականում «*Ноев Ковчег*»-ի հոդվածներում, որը, առավելապես հանդես գալով Ռուսաստանի դիրքերից, ներկայացնում է ռուսաստանյան իշխանությունների տեսակետը, ինչը կարելի է երբեմն տեսնել նաև լրագրողների կողմից հայկական կողմի հետ երկրորդ դեմքով խոսելու պրակտիկայում. «*Вполне очевидно, что Кремль, и на это он имел полное право, предложил Еревану альтернативу: продолжая «интеграционные» игры с Брюсселем, вы теряете российский «зонтик» безопасности, а присоединяясь к российским интеграционным проектам, вы получаете гарантии военной поддержки*» («Ноев Ковчег», «Интеграционные альтернативы: сложный выбор Армении между Европой и Россией», 16.09.13)¹:

«Ալիք» օրաթերթում Եվրասիական միության ընտրությունը, ի հաշիվ Եվրամիության հետ կապերի զարգացման, նկարագրվում է ցավով, ափսոսանքով և լի մտավախություններով. «Մինչև սեպտեմբերի 3-ը Հայաստանն ուներ թեկուզ և դժվարին, բայց, այնուամենայնիվ, ընտրության հնարավորություն: Երևա-

¹ «Միանգամայն պարզ է, որ Կրեմլը, և դրա իրավունքը նա ուներ, առաջարկել է այլընտրանք Երևանին. շարունակելով «փնտեզրացիոն» խաղերը Բրյուսելի հետ՝ դուք կորցնում եք ռուսական անվտանգության «անձրևանոցը», մինչդեռ միանալով ռուսական ինտեգրացիոն նախագծերին՝ դուք ստանում եք ռազմական ապահովության երաշխիքներ» («Ноев Ковчег», «Ինտեգրացիոն այլընտրանքներ. Հայաստանի բարդ ընտրությունը ԵՄ-ի և Ռուսաստանի միջև», 16.09.13):

նր կարող էր ընտրել Եվրամիության հետ ասոցացման տարբերակը, որը, ինչպես հրապարակախոս Վահան Մարտիրոսյանն է սահմանում, առաջարկում էր «ավելին ավելիի դիմաց»՝ *բարեփոխվեք ավելի, ստացեք ավելին: Կամ էլ նախապատվությունը տալ ռուսական տարբերակին՝ «պակաս պակասի դիմաց» (ես այն կանվանեի «ամեն ինչ ոչնչի դիմաց»)*. տնտեսական ու ռազմաքաղաքական պատժամիջոցներ Կրեմլին դուր չեկած որևէ բանի առիթով: Մեր գենետիկ գաղտնագրից վերջնականապես չի մաքրվել Խաչատուր Աբովյանի ժամանակից մնացած «էն սհաթն օրհնելու» և բախունցյան «ռուսաց թագավորին նամակ գրելու» սովորույթի նստվածքը: Մտաբերում եմ ու սարսափում, թե ինչ է լինելու օրհասական պահին Արցախի ճակատագիրը: Չէ՞ որ որոշել ենք ամեն ինչ թողնել «ՄԵԾ ԱՐՋԻ» բարեգործությանը: (...) Սա բառացիորեն նշանակում է, որ Հայաստանի «բազմավեկտորության» ռազմավարությունն իր տեղը զիջում է «ռուսավեկտորությանը»: Պարզ լեզվով ասած՝ *ցտեսություն, Եվրոպա, ցտեսություն Եվրոպական արժեքներ»* («Ալիք», «Օրհնված սհաթի նստվածքը», 17.09.13): «Asbarez»-ը ևս խնդրականացնում է Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցությունը՝ վերջինը բնորոշելով որպես ոչ այդքան կայացած միություն. «Միություն, որը, ի տարբերության ԵՄ-ի, ունի ընդամենը մի քանի անդամ և դեռևս ոչ այնքան կարևոր գործունեություն է ծավալել» («Asbarez», «Ինչո՞ւ Հայաստանը պետք է ընտրի դեպի ԵՄ ճանապարհը», 05.09.13):

5. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՏՈՒՄ

«Ռուսաստանը» որպես իդեոլոգեմ

«Ռուսաստան» իդեոլոգեմն իմաստավորվում է ոչ միայն վերը նշված «Մաքսային միության» և «Եվրասիական միության» իմաստակից հասկացությունների միջոցով, այլև ՀՀ-ՌԴ կամ հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Ինչպես կարող ենք տեսնել *Աղյուսակ 5.1*-ից, «Ռուսաստան» իդեոլոգեմի մասին առավել շատ հոդվածներ խմբավորվել են հենց այս՝ հայ-ռուսական հարաբերությունների թեմատիկ բլոկում:

Աղյուսակ 5.1.

«Ռուսաստան» իդեոլոգեմի բաշխումն ըստ թեմատիկ ոլորտների

	%
Հայ-ռուսական հարաբերություններ	34,3%
ՀՀ ապագան. ՄՄ, թե՛ Եվրոպա	16,4%
ՀՀ և ԼՂՀ անվտանգություն	16,4%
Ռուսաստանը տարածաշրջանում	13,4%
ՀՀ-Եվրոպա կապեր	9,0%
ՄՄ՝ անորոշ ապագա	9,0%
ՀՀ ինքնիշխանություն	7,5%
ՄՄ-ն՝ որպես ՀՀ շահերն արտահայտող	3,0%
ՀՀ սոցիալ-տնտեսական դրություն/զարգացում	1,5%

Հայ-ռուսական հարաբերությունների թեմային անդրադարձել են տարբեր աղբյուրներ՝ լրագրողներ, քաղաքական,

կուսակցական գործիչներ, փորձագետներ, մշակութային գործիչներ, որոնցից յուրաքանչյուրն իր դիտանկյունից է մեկնաբանում ստեղծված իրավիճակն ու հնարավոր ելքերը: Հայ-ռուսական հարաբերությունները պաշտոնական աղբյուրների կողմից ներկայացված են որպես *ժողովուրդների միջև բարեկամության և եղբայրության դարավոր ավանդույթների վրա* կառուցված հարաբերություններ, որոնք *ավելին են, քան ուղղակի համագործակցությունը* կամ *ռազմավարական համագործակցությունը*: Հայ-ռուսական հարաբերությունների այսպիսի համատեքստում «Ռուսաստանի» մասին նշվում են հետևյալ բնութագրիչները՝ *հավատարիմ գործընկեր, ավանդական գործընկեր, տնտեսական գործընկեր, առաջատար առևտրատնտեսական գործընկեր, գլխավոր ռազմաքաղաքական դաշնակից (главный военно-политический союзник), բարեկամ, եղբայր ժողովուրդ, Ռուսաստանը՝ Հայաստանի ավանդական պաշտպան*: Այսպիսի դիրքորոշումները, իհարկե, բնորոշ են Հայաստանի կողմից ՄՄ-ին, իսկ հետագայում նաև ԵԱՄ-ին անդամակցության որոշմանն աջակցողներին և այն ՀՀ շահերին համապատասխան համարողներին:

Եվ հակառակը՝ Եվրոպական ինտեգրացիային կողմնակից կամ էլ ՄՄ-ին անդամակցությանը դեմ աղբյուրները շրջանառում են հայ-ռուսական հարաբերությունները խնդրականացնող տեսակետներ՝ *մատնանշելով, որ դրանք անհավասար են, Հայաստանը, լինելով փոքր պետություն, կախվածության մեջ է Ռուսաստանից, Ռուսաստանի կողմից ճնշումներ են գործադրվում Հայաստանի նկատմամբ, և որ Հայաստանը Ռուսաստանի*

«կցորդն» է («Армения «придаток» России»): Կամ, ինչպես նշվում է հոդվածներից մեկում. «Գաղտնիք չէ, որ ռուսները նախկին խորհրդային հանրապետությունները դեռ համարում են կամակատար պետություններ: Վերջերս նույնիսկ զուգահեռներ անցկացվեցին Հայաստանի և Կալինինգրադի միջև ...համեմատել էքսկլավը ինքնիշխան պետության հետ» («Asbarez», «Autumn Promises: From Moscow to Brussels and Back», «Աշնանային խոստումներ. Մոսկվայից Բրյուսել և հետ» 10.09.2013):

Այս տեսանկյունները բավական տարածված են դիտարկված հոդվածներում: Ինչպես երևում է *Աղյուսակ 5.2*-ից, «Ռուսաստանի» նկատմամբ տրամադրություններում ամենից բարձր ցուցանիշն ունի բացասական երանգավորումը՝ 44.8%, որին հաջորդում է դրականը՝ 37,3%, իսկ հետո միայն հավասարակշռվածը՝ 26,9%:

Աղյուսակ 5.2.

«Ռուսաստան» իդեոլոգեմի հուզական երանգավորումները

	%
Դրական	37,3%
Հավասարակշռված	26,9%
Բացասական	44,8%
Մտահոգ	1,5%

Հայ-ռուսական հարաբերությունների պատմական անցյալի վերաբերյալ պատկերացումները

Հայ-ռուսական հարաբերությունների պատմական հիմքերի վրա շեշտադրությունները տարբեր են: Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացմանը կողմնակից թևը շեշտադրում է պատմական դրական փորձը և համատեղ պատմական անցյալը,

ինչի արդյունքում ձևավորվել են «երկկողմ հարաբերություններ անցյալի և բարեկամ երկու ժողովուրդների հոգևոր մտերմության ամուր հիմքի վրա» («Օրեր», «Ճաշկերույթին Պուտինը խոսել է Եվրոպայի ամենահին մշակույթներից մեկն ունեցող հայ ժողովրդի և Հայաստանի մասին», 02.12.13): Այս տեսանկյունը շրջանառվում է հիմնականում պաշտոնական աղբյուրների կողմից: «*Ноев Ковчег*»-ը ՄՄ-ԵՄ երկրնտրանքի իրավիճակը բնորոշում է որպես հայ-ռուսական հարաբերությունների ամենադրամատիկ պահերից մեկը (ԽՍՀՄ փլուզումից հետո), որն իր հանգուցալուծումը ստացավ ՀՀ-ի կողմից ՄՄ-ին անդամակցելու հայտարարությամբ. «*В 2013 году Россия и Армения пережили, наверное, один из самых драматических периодов в двусторонних отношениях после распада Советского Союза*» («Ноев Ковчег», «Верность стратегическому союзнчеству»¹, 16.12.13):

«Ալիք» օրաթերթը պատմական անցյալին անդրադառնում է հակառակ տեսանկյունից. «*Մեր գենետիկ գաղտնագրից վերջնականապես չի մաքրվել Խաչատուր Աբովյանի ժամանակից մնացած «էն սիաթն օրհնելու» և բալկոնցյան «ռուսաց թագավորին նամակ գրելու» սովորույթի նստվածքը: ...որոշել ենք ամեն ինչ թողնել «ՄԵԾ ԱԸՋԻ» բարեգործությանը*» («Ալիք», Օրհնված սիաթի նստվածքը, 17.09.13):

¹ 2013թ. Հայաստանը և Ռուսաստանը հավանաբար վերապրեցին երկկողմ հարաբերությունների ամենադրամատիկական ժամանակշրջանը ԽՍՀՄ փլուզումից հետո («Ноев Ковчег», «Ռազմավարական համագործակցության հավատարմություն», 16.12.13):

Հայ-ռուսական հարաբերությունների ապագայի վերաբերյալ

Տեքստերում հայ-ռուսական հարաբերությունների ապագայի մասին առկա են և՛ լավատեսական (ներկայի դրական բնորոշումներով և հարաբերությունների խորացմանը կողմ), և՛ հոռետեսական (հարաբերությունների խորացմանը դեմ, ներկայի բացասական բնորոշումներով) մեկնաբանություններ:

Հայ-ռուսական հարաբերությունների բացասական կողմերի վրա շեշտադրում են անում հիմնականում արևմտյան Սփյուռքի լրատվամիջոցները՝ «Ազատ օր», «Asbarez», «Մասիս» շաբաթաթերթ, «Ալիք»: Հարաբերությունների խորացմանը կողմ տեսակետներ առկա են «Ноев Ковчег»-ում և ՀՀ կամ ՌԴ պաշտոնական հայտարարությունների վերատպություններում (տե՛ս Աղյուսակ 5.3).

Աղյուսակ 5.3.

Հայ-ռուսական հարաբերությունների խորացմանը «կողմ» և «դեմ» դիտարկումների օրինակներ

Դեմ	Կողմ
<p>«Ահա թե ինչու պետք է ըսել, որ ուղղակի անընդունելի էր Ռուսիոյ կողմէ բանեցումը այսպիսի ճնշումներու, գորս անոնք կը կիրարկեն, որպէսզի կանխեն երկիրներու ինքնիշխան որոշումները անդամակցելու իրենց նախընտրած միութեան», - յայտարարեց Պրոք («Ազատ օր» օրաթերթ, «Էլէնի Թեոխարոս կը յորդորէ երես չդարձնել Հայաստանէն. Եւրոպացի երեսփոխաններու գնահատականները Եւրասիական մաքսային միութեան միանալու Հայաստանի որոշման լոյսին տակ», 01.10.13):</p>	<p>«Армения в очередной раз подтвердила, что является надежным союзником России» («Ноев Ковчег», «Сурен Арутюнян: Для меня Армения и Россия – единое целое», 16.10.2013).</p> <p>«Հայաստանը հերթական անգամ հաստատեց, որ Ռուսաստանի հուսալի գործընկերն է»:</p>

Դեմ	Կողմ
<p>«...դեմոկրատիայի կառուցման հեռանկարները կնվազեն, և Ռուսաստանի կողմից հարևանների նկատմամբ ճնշումների վտանգը կմեծանա» («Asbarez», «EU Wants Clarification from Armenia»/«ԵՄ-ը պարզաբանում է պահանջում Հայաստանից», 04.09.13):</p>	<p>Наверное, нет необходимости говорить, что Россию и Армении связывают особые отношения, это более, чем стратегическое партнерство, имея в виду исторические корни нашего взаимодействия («Ноев Ковчег», «Армяно-российская встреча на высшем уровне: хроника визита», 16.12.13):</p> <p>Երևի կարիք չկա ասելու, որ Ռուսաստանին և Հայաստանին կապում են հատուկ հարաբերություններ. դա ավելին է, քան ռազմավարական դաշնակցությունը՝ նկատի ունենալով համագործակցության պատմական արմատները («Ноев Ковчег», «Հայ-ռուսական հանդիպում բարձր մակարդակի վրա. այցի ժամանակացույց», 16.12.13):</p>
<p>Հայաստանի վրա Ռուսաստանի բացահայտ և գոեհիկ ճնշումը մշտապես կմնա այն թելադրող վեկտորը, որով Ռուսաստանը կորոշի Հայաստանի «բազմավեկտորությունը», եվրոպական սլաքների «քաշը, հասակը և ուղղությունը»: Հայաստանի «բազմավեկտորությունը», սլաքների «քաշն ու հասակը» արդեն իսկ ռեգրեսում են ակնթարթային արագությամբ՝ ձուլվելով ռուսական «ուղղության» արագացող սլաքին: Ներկա պահին Հայաստանը «բազմավեկտոր ռուսական է»՝ բոլոր վեկտորներով «զգաստ» ընդունում է ռուսական հրահանգները. անվտանգության, տնտեսության, մտածողության մակարդակի իրավունք, ձևաչափ... («Ալիք», «Օրհնված սհաթի նստվածքը», 17.09.13):</p>	<p>Հայաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւնները խարսխուած են երկու երկրների ժողովուրդների միջեւ բարեկամութեան ու եղբայրութեան դարաւոր ականդրոյների վրայ: Եւ ես վստահ եմ, որ այսուհետեւ էլ այդ յարաբերութիւնները կը զարգանան փոխըմբռնման հունով, բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ օգնութեան պայմանագրի համաձայն», նշած է Սարգսեան («Արձագանգ», «Դուք ա՛յս կողմ հրամնեցէք...», 01.09.13):</p>

Դեմ	Կողմ
<p>Կամ էլ նախապատվությունը տալ ռուսական տարբերակին՝ «պակաս պակասի դիմաց» (ես այն կանվանեի «ամեն ինչ ոչնչի դիմաց»)։ Ենթադրյալն ու ռազմաքաղաքական պատժամիջոցներ Կրեմլին դուր չեկած որևէ բանի առիթով։ Հայրենի իշխանությունը ստիպված կլինի դիմակայել Մոսկվայի բուռն ու ջղաձիգ հակազդեցությանը, փոխարենը Հայաստանի իշխանություններն ընտրեցին հեշտ ճանապարհը՝ տեղի տալով ռուսական մուրճի առաջին իսկ սպառնալիքին, ընդունել կապիտուլյացիան, հանձնել ամեն ինչ՝ սեփական ժողովրդի և երկրի բախտն ու ճակատագիրը թողնելով հյուսիսից փչող քամու քմահաճույքին, փոխարենը վայելել սեփական իշխանությունը վերարտադրելու «ցարական իրավունք»-ը («Ալիք», «Օրհնված սհաթի նստվածքը», 17.09.13):</p>	<p>Մենք թանկ ենք գնահատում այդ յարաբերությունները եւ ամեն ինչ անելու ենք, որպէսզի դրանք զարգանան։ Մեզ համար դա բացարձակ գերակայութիւն է։ Դրա հետ մէկտեղ, ի հարկէ, կան հարցեր, որոնք հարկաւոր է լուծել, որպէսզի մեր յարաբերութիւնները հասցունեն նոր, ակադի բարձր մակարդակի («Արձագանգ», «Մամլոյ հաղորդագրութիւն», 05.09.13):</p>
	<p>«Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Ռուսաստանը մեր հիմնական առեւտրային գործընկերն է եւ ներդրողը, իսկ հայկական արտադրանքը հիմնականում իրացում է ռուսական շուկայում» («Մասիս» շաբաթաթերթ, Տիգրան Սարգսեան. «Մաքսային միութիւն մտնելով Հայաստանը կը շահի», 09.11.13):</p>

6. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Սփյուռքի ՁԼՄ-ում դիտարկել ենք նաև «Եվրամիություն» իդեոլոգեմը՝ վերհանելով ընդհանրապես Եվրոպայի և եվրոպական քաղաքականության հանդեպ դիրքորոշումները: Այս հատվածում կպարզենք, թե ինչ գնահատականներ է ստանում Եվրամիությունը Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամագրվելու համատեքստում:

Նշենք, որ «Եվրամիություն» իդեոլոգեմը Սփյուռքի ՁԼՄ-ում դրսևորվել է մի քանի թեմատիկ ոլորտների շրջանակներում: Ինչպես կարող ենք տեսնել *Աղյուսակ 6.1*-ից, այն ավելի շատ իմաստավորվում է ՀՀ-Եվրոպա կապերի ոլորտում (43,5%):

Աղյուսակ 6.1.

«Եվրամիություն» իդեոլոգեմի ոլորտային պատկանելությունը

	%
ՀՀ սոցիալ-տնտեսական դրություն/զարգացում	8,7%
ՀՀ և ԼՂՀ անվտանգություն	7,2%
ՀՀ-Եվրոպա կապեր	43,5%
Հայ-ռուսական հարաբերություններ	1,4%
Ռուսաստանը տարածաշրջանում	2,9%

«Եվրամիություն» իդեոլոգեմի հանդեպ գերակշռում են հավասարակշռված (50,7%) և դրական (42%) երանգավորումները (տե՛ս *Աղյուսակ 6.2*).

Աղյուսակ 6.2.

«Եվրամիություն» իդեոլոգեմի նկատմամբ հուզական երանգավորման հաճախությունները

	%
Դրական	42%
Հավասարակշռված	50,7%
Բացասական	10,1%
Մտահոգ	4,3%

Բացասական երանգավորմամբ մեծ մասամբ «Եվրամիություն» իդեոլոգեմը գնահատում է «*Hoeb Kovyer*» թերթը, դրական երանգավորմամբ՝ «*Օրեր*»-ը և «*Ազդակ*»-ը:

Եվրոպական քաղաքականության հանդեպ դիտարկված ՁԼՄ-ում կարող ենք առանձնացնել երկու տիպի գնահատականներ:

Ոչ հուսալի Եվրոպայի պատկերը

Առաջին մոտեցումը կասկածի տակ է առնում Հայաստանի համար Եվրամիության՝ իբրև քաղաքական կառույցի, վստահելի և հուսալի գործընկեր լինելը հատկապես ռազմական տեսանկյունից (տե՛ս *Աղյուսակ 6.3*): Առանցքում Ղարաբաղյան հակամարտությունն է և Եվրոպայի/Եվրամիության անկարողությունն ու չկամությունը՝ աջակցելու խնդրի կարգավորմանը: Այսպիսի տեսակետի տարածողը հիմնականում ռուսաստանյան «*Hoeb Kovyer*» թերթն է: Եվրոպան և Եվրամիությունն այստեղ ներկայացվում են Ռուսաստանի և Մաքսային միության հետ համեմատության մեջ (վերջիններս՝ իբրև միակ վստահելի ռազմական գործընկերներ): Այդ համատեքստում Ղարաբաղյան հակամարտության առկայությունը վերածվում է հիմնական խաղաթղթի,

որով ապացուցվում և հիմնավորվում է Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության ճշմարտացիությունը: Նման տեսակետ են ներկայացնում նաև ավանդական Սփյուռքի ՋԼՄ-ում հանդես եկող Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ աղբյուրները՝ պաշտպանելով ՄՄ ընտրությունը:

Աղյուսակ 6.3.

*Եվրոպայի/ԵՄ-ի հանդեպ քննադատական դիրքորոշումներ.
հատվածներ ՋԼՄ-ից*

Это вполне логично: пусть Евросоюз или хотя бы Франция возьмут на себя обеспечение безопасности своего «ассоциированного члена». При этом совершенно очевидно, что ни ЕС, ни НАТО, ни какая-либо из стран – членов этих организаций ничего не предпримут в случае начала новой армяно-азербайджанской войны, ограничившись только заявлениями, более или менее жесткими («Ноев Ковчег», «Интеграционные альтернативы: сложный выбор Армении между Европой и Россией», 16.09.2013).

Դա միանգամայն տրամաբանական է. թող ԵՄ-ը կամ գոնե Ֆրանսիան իրենց վրա վերցնեն իրենց «ստացված անդամի» անվտանգության ապահովումը: Ընդ որում՝ ակնհայտ է, որ ոչ ԵՄ-ը, ոչ ՆԱՏՕ-ն, ոչ էլ այդ միությունների անդամ այլ որևէ երկիր ոչինչ չեն ձեռնարկի հայ-ադրբեջանական պատերազմի դեպքում, այլ կբավարարվի միայն այս կամ այն չափով կոշտ հայտարարություններով («Ноев Ковчег», «Ինտեգրացիոն այրնտրանքներ. Հայաստանի բարդ ընտրությունը Եվրոպայի և Ռուսաստանի միջև», 16.09.2013):

А в области экономических отношений, если Армения хочет получать российский газ по низким ценам, то ей надо стремиться в Таможенный союз, а не в ЕС. Если же она хочет быть в составе ЕС, то придется платить за газ по европейским ценам («Ноев Ковчег», «Крутые повороты российско-армянских отношений», 01.10.2013).

Իսկ տնտեսական հարաբերությունների ոլորտում, եթե Հայաստանն ուզում է ստանալ ռուսական գազը ցածր գնով, ապա պետք է ձգտի դեպի ՄՄ, այլ ոչ թե ԵՄ: Եթե Հայաստանն ուզում է լինել ԵՄ անդամ, ուրեմն ստիպված կլինի եվրոպական գին վճարել գազի համար («Ноев Ковчег», «Ռուս-հայկական հարաբերությունների կտրուկ շրջադարձներ», 01.10.2013):

У ЕС, несмотря на все его декларации, никакой внятной альтернативы разрешения застарелого конфликта не имеется («Ноев Ковчег», «Российский фактор нужен Азербайджану как баланс», 01.10.2013).

Չնայած իր բոլոր հռչակագրերին, ԵՄ-ը չունի արմատավորված հակամարտության լուծման որևէ հստակ այլընտրանք («Ноев Ковчег», «Ռուսական գործոնն անհրաժեշտ է Ադրբեջանին որպես այլընտրանք», 01.10.2013):

<p>В Европейском союзе все основополагающие решения делегируются Брюсселю и могут быть приняты помимо воли той или иной страны («Ноев Ковчег», «Сурен Арутюнян: Для меня Армения и Россия – единое целое», 16.10.2013).</p> <p>Եվրամիության բոլոր հիմնարար որոշումներն ուղարկվում են Բրյուսել և կարող են ընդունվել անկախ այս կամ այն երկրի կամքից («Ноев Ковчег», «Սուրեն Հարությունյան. Ինձ համար Հայաստանը և Ռուսաստանը մի ամբողջություն են», 16.10.2013):</p>
<p>Сегодня ЕС не даст ничего, сопоставимого с помощью России. Энергетически Европа зависит от Азербайджана, решительного поворота в сторону Армении она не сделает («Ноев Ковчег», «Верность стратегическому союзнчеству», 16.12.2013).</p> <p>Այսօր ԵՄ-ը չի տա Ռուսաստանի աջակցության հետ համադրելի որևէ բան. էներգետիկ առումով Եվրոպան կախված է Ադրբեջանից, դեպի Հայաստան որոշիչ շրջադարձ չի անի («Ноев Ковчег», «Ռազմավարական համագործակցության հավատարմությունը», 16.12.2013):</p>
<p>Հարկ է փաստել նաև, որ անցնող տարիներին, եթե նոյն Երոպան, աւելի բաց ու գործնական լիներ իրեն աւելի մերձ տեսնելու հարցում, հաւանաբար քաղաքատնտեսական այդ տեղաշարժն աւելի զգալի կը լինէր եւ զուգահեռաբար աւելի զգալի արեւմուտք-արեւելք հաւասարակշռութեան փոփոխութիւնը մեր երկրի համար: Տպաւորութիւնը, սակայն, այն է, որ Երոպան աւելի շատ ոչ թէ այդ մերձեցման գործընթացն առաջ տանելով էր շահագրգիռ, այլ մեզ Ռուսաստանից հեռացնելու մտահոգութեամբ: Հայաստանի հետ արեւմուտքի տնտեսական շահագրգռութիւնների հիմքում առայժմ Հայաստանից բնական պաշարների արտահանումն է եւ տեսանելի հեռանկարում այս նոր շուկայի նուաճումը («Հայրենիք», «Հայաստանի հեռանկարներ. իրողություններ եւ եզրայանգումներ», 25.09.2013):</p>
<p>Մաքսային միութեան անդամակցութիւնը Հայաստանի դիմաց Երոպայի դռները չի փակեր, բայց համագործակցութիւնը պիտի սահմանափակուի: Ընկերակցութեան համաձայնագիր պիտի չստորագրուի Վիլնիւսի մէջ, բայց կարելի է որեւէ այլ փաստաթուղթ ստորագրել Երոպական միութեան հետ, ընդգծեց Ռուստամեան: Ինչ կը վերաբերի Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան, ապա Ռուստամեան ըսաւ, որ ատիկա տնտեսական բնագաւառին մէջ պիտի չմտնայ: Երոսախական միութեան ստեղծմամբ գործակցութիւնը պիտի փոխադրուի քաղաքական բնագաւառ, որովհետեւ Ռուսիա կը ձգտի ստեղծելու աշխարհաքաղաքական նոր բեւեռ մը, ուր նաեւ կարելոր խնդիր մը պիտի ըլլայ Լեոնային Ղարաբաղի տագնապը («Փանձասար», «Հայաստանի Ազգային ժողովին մէջ քաղաքական ուժերը կը շարունակեն լուսարձակի տակ բերել Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան խնդիրը», 19.09.2013):</p>

<p>Եթե զգացական կտրուածքով նայենք եւ նկատի չունենանք, որ պատերազմի մեջ ենք, հաշուի չառնենք Հայաստանի աշխարհագրական դիրքը եւ պաշտպանական համակարգի առանձնայատկութիւնները, ապա հարցին՝ Եւրոպա՞, թե՞ Ռուսաստան, կարելի է միանշանակ պատասխանել՝ Եւրոպա: Եւրոպական արժէքները որդեգրելը, մեր երկիրը եւրոպական արժէքներին համապատասխանեցնելը, կարծում եմ, մի նպատակ է, որն այսօր էլ մենք պէտք է հետապնդենք: Այսինքն, մենք պէտք է ձգտենք եւրոպական արժէքների՝ ոչ անպայման Եւրոպական միութեանը մաս կազմելու նպատակով («Ազդակ», «Մենք հրաշալի տարբերում ենք, որտեղ է իշխանութիւնը, որտեղ՝ հայրենիքն ու պետականութիւնը», 16.09.2013):</p>
<p>Մաքսային միութեան անդամակցութեան որոշումը, իր հերթին, ունի իր արդարացուած հիմնաւորումը: Ի վերջոյ միակողմանի, դէպի Եւրոպական միութիւն սրընթաց ընթանալու փաստը կրնար ռիսքային հիմնական բաժին պարփակած ըլլալ («Ազդակ», «Ակնարկ. գարգանալ (չ)զիջելով», 17.09.2013):</p>
<p>Եւրոպական միութեան հետ ազատ առետրի հարցը, չնայած իր կարեւորութեանը, նոյնպէս առաջնահերթ չէ մեր հասարակութեան քաղաքական եւ նոյնիսկ տնտեսական օրակարգում («Գանձասար», «Ընկերնե՛ր, թե՛ եղբայրներ», 12.09.2013):</p>

Եվրոպայի պատկերը որպէս «երազանք»

Երկրորդ մոտեցումը դիտարկում է Եվրոպան իբրև ժողովրդավար, զարգացած և սոցիալական առումով կայացած աշխարհաքաղաքական միավոր և գնահատում է Հայաստանի «կորուստները» հենց այս հեռանկարից: Այս համատեքստում Եվրոպայի առանցքային բնութագրիչներ են դառնում *եվրոպական արժէքները, ժողովրդավարությունը, սոցիալական արդարությունը, մարդու իրավունքները, զարգացած տնտեսությունը* (տե՛ս Աղյուսակ 6.4):

Եվրոպական քաղաքականությունը գնահատվում է իբրև Հայաստանը դեպի զարգացում տանող ճանապարհ: Միևնույն ժամանակ, ավելի լայն իմաստով եվրոպական քաղաքականության մաս լինելու հնարավորությունը չի դիտարկվում պարտա-

դիր Եվրամիությանն անդամ լինելու միջոցով: Այն ավելի շատ ընկալվում է իբրև քաղաքակրթական և արժեքային հարաբերությունների պահպանման և զարգացման ուղի՝ «երազանք» Հայաստանի համար:

Այսպիսի տեքստերի հիմքում խորքային առումով ընկած է Հայաստանի քաղաքական անելանելիության գաղափարի արդարացումը: Համեմատության նժարների վրա դրվում են էսպես տարբեր բաներ՝ քաղաքական և տնտեսական կառույց՝ ի դեմս Մաքսային միության, և քաղաքակրթական և արժեքային դաշտ՝ ի դեմս Եվրոպայի:

Մոյուսակ 6.4.

*Եվրոպայի/ԵՄ-ի հանդեպ դրական դիրքորոշումներ.
հատվածներ ԶԼՄ-ից*

<p>Անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը կարողանայ առաել բազմազանեցնի «ԵՄ»-ի հետ յարաբերությունները («Asbarez», «Ի՛նչ է տալու Մաքսային միությունը Ղարաբաղին», 13.09.2013):</p>
<p>Այլ կերպ ասած, «առաջին ծաղիկ» դարձած՝ Հայաստանը գրկեց իրեն ԵՄ Ասոցացման նախաստորագրման արդեն իսկ գրեթե պատրաստ համաձայնագրի ընդունումից եւ դրա կիրառումից («Մասիս» շաբաթաթերթ, «Առաջին ծաղիկ դարձած», 28.09.2013):</p>
<p>Երոպան հայաստանցի գործարարների համար «երազանք» կը մնայ («Մասիս» շաբաթաթերթ, «Երոպան հայաստանցի գործարարների համար «երազանք կը մնայ», 28.09.2013):</p>
<p>Իսկապես Երոպան ունի համամարդկային արժեքներ: Սակայն եկեք ընդունինք, որ եթէ Հայաստանի իշխանություններն ու ժողովուրդը կամք դրսևորեն, այդ արժեքները իրագործելու համար պայման չէ դեպի արեւմուտք թեքուիլ: Օրինակ, ո՞վ կ'արգիլէ այսօր, որ Հայաստանը դառնայ աւելի ժողովրավարական երկիր, մարդու իրաւունքները պաշտպանուին, մենաշնորհները վերացուին, ընտրութիւնները աւելի թափանցիկ եւ օրինական ըլլան, ընկերային արդարութիւնը խարսխուի, գործելու եւ ներդրումներու հաւասար հնարաւորութիւններ տրուին: Անպայման պէտք է՝ Երոպան գայ եւ մեզ պարտադրէ այս բոլորը: Անշուշտ ոչ («Մասիս» շաբաթաթերթ, «Կունենանք քաջութիւն գնահատելու լաւն ու քննադատելու վատը», 28.09.2013):</p>

<p>Հայաստանի հասանելիության երաշխավորումը ԵՄ գործակալություններին և ծրագրերին կոնկրետ քայլ է ճիշտ ուղղությամբ և թույլ կտա Հայաստանին քաղել ֆինանսական և վարչական օգուտներ, որոնք կենսական նշանակություն ունեն երկրի արդիականացման համար («Asbarez», «ԵՄ-ն ընդարձակում է Հայաստանի հետ գործակալությունները, ծրագրերը», 12.11.2013):</p>
<p>Սա բառացիորեն նշանակում է, որ Հայաստանի «բազմակեկտորության» ռազմավարությունն իր տեղը զիջում է «ռուսավեկտորությանը»: Պարզ լեզվով ասած՝ ցտեսություն, Եվրոպա, ցտեսություն, Եվրոպական արժեքներ: Երևանը կարող էր ընտրել Եվրամիության հետ ասոցացման տարբերակը, որը, ինչպես հրապարակախոս Վահան Մարտիրոսյանն է սահմանում, առաջարկում էր «ավելին ավելիի դիմաց»՝ բարեփոխվեք ավելի, ստացեք ավելին («Ալիք», «Օրինված սիսթի նստվածքը», 07.09.2013):</p>
<p>Այսօր կը դիմագրաւենք շրջափակում եւ յարձակողապաշտութիւն, ներքին խնդիրներ, Մերձաւոր Արեւելքի մեջ իրավիճակի բերումով բարդացած կացութիւններ եւ բազմապիսի մարտահրաւերներ՝ Հայաստանի եւ Արցախի մէջ: Ան աւելցուց, որ մեր հիմնական գրաւականներէն մէկը կը հանդիսանայ Եւրոպական միութեան հետ Հայաստանի մերձեցումը: Եւրոպան կարելոր տարածաշրջան մըն է մեզի համար: Հաւաքական արժեքներ, հաւաքական շահեր, հին դարերէն սկսեալ մեզ կապած են Եւրոպային: Հետեւաբար, նման հաւաքներ Եւրոպայի մեջ եւ կը նկատեն թէ՛ Հայաստանի, թէ՛ Հայ դատի զօրացման նախապայմաններէ («Գանձասար», «Եւրոպային անքակտելի մաս կը կազմէ Հայաստանը». հաստատեցին խորհրդածողովին ներկայ եղող Եւրոերեսփոխաններն ու հիւրերը», 24.10.2013):</p>
<p>Բայց ես գիտեմ նաեւ, որ այսօր առաւել քան կարելոր են դառնում Հայաստանի յարաբերութիւնները ոչ միայն Եւրամիութեան հետ, այլեւ Եւրամիութեան հզօրագոյն երկրների հետ, եւ այդ ոլորտում լուրջ անելիքներ կան («Գանձասար», «Ես չեմ ուզում իմ երկրի կոլապսը», 21.10.2013):</p>
<p>...վստահ եմ, որ տնտեսական ինտեգրման եվրոպամետ դաշտը, որ ընդունվել էր մինչև սեպտեմբերի 3-ը, կապահովեր, այսպես ասած, տնտեսական զարգացում և կայուն աճ («Nouvelles d'Arménie», «L'adhésion à l'Union douanière est un mauvais coup pour l'Arménie selon Ashot Yeghiazaryan», «Ըստ Աշոտ Եղիազարյանի՝ ՄՄ-ին միանալը վատ քայլ է ՀՀ-ի համար», 14.11.2013):</p>

7. ՀՀ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ապագայի հեռանկարների շուրջ քննարկումներն արդիականացան 2013թ. սեպտեմբերի 3-ից սկսած՝ ՄՄ-ին (այնուհետև՝ ԵԱՄ-ին) անդամագրվելու կապակցությամբ ՀՀ նախագահի պաշտոնական հայտարարությամբ: Այն բանից հետո, երբ ուրվագծվեց Հայաստանի զարգացման ուղղվածությունը՝ ինտեգրումը Եվրասիական միությանը, ավելի առարկայական դարձան հրապարակումները և վերլուծություններն այն հարցի շուրջ, թե ի վերջո ինչպիսի Հայաստան (իր քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական կառուցվածքներով) ենք ակնկալում տեսնել մոտ և հեռու ապագայում: Այդ իսկ պատճառով կարևոր է հասկանալ, թե ինչպես են պատկերում Հայաստանի ապագան Սփյուռքի տարբեր հատվածները ներկայացնող լրատվամիջոցները՝ ՄՄ/ԵԱՄ-ին ինտեգրվելու համատեքստում:

Նախ տեսնենք, թե «Հայաստան» իդեոլոգեմն ինչ դրսևորումներ է ունեցել Սփյուռքի ՋԼՄ-ում: Ինչպես կարող ենք նկատել *Աղյուսակ 7.1*-ից, առավել մեծ քանակ է կազմում «Հայաստանի» իմաստավորումը հենց ՄՄ, թե՞ Եվրոպա երկրնտրանքի և ապագայի հեռանկարների թեմայում (43,4%): Այստեղ առավել հաճախ խոսվում է աշխարհաքաղաքական ընտրության արդյունքում ՀՀ ապագայի հնարավոր դրական կամ բացասական

հետևանքների մասին: Մյուս ոլորտը, որի շրջանակներում առավել շատ է իմաստավորվում «Հայաստան» իդեոլոգիան, «հայ-ռուսական հարաբերություններն» են (17,0%):

Աղյուսակ 7.1.

«Հայաստան» իդեոլոգիանի ոլորտային պատկանելությունը

	%
ՀՀ ապագան. ՄՄ, թե՞ Եվրոպա	43,4%
Հայ-ռուսական հարաբերություններ	17,0%
ՀՀ և ԼՂՀ անվտանգություն	15,1%
ՀՀ սոցիալ-տնտեսական դրություն/գարգացում	13,2%
ՀՀ-Եվրոպա կապեր	10,4%
ՀՀ ինքնիշխանություն	6,6%
ՄՄ-ն որպես ՀՀ շահերն արտահայտող	6,6%
ՄՄ՝ անորոշ ապագա	4,7%
Ռուսաստանը տարածաշրջանում	2,8%

ՀՀ արտաքին քաղաքականության և ինտեգրացիոն հնարավորությունների վերաբերյալ հողվածներում գերակշռում են «Հայաստան» իդեոլոգիան նկատմամբ հավասարակշռված (59,4%) և մտահոգ (34,9%) երանգավորումները (տե՛ս *Աղյուսակ 7.2*).

Աղյուսակ 7.2.

«Հայաստան» իդեոլոգիանի նկատմամբ հուզական երանգավորման հաճախությունները

	%
Դրական	16%
Հավասարակշռված	59,4%
Բացասական	9,4%
Մտահոգ	34,9%

Բացասական երանգավորմամբ «Հայաստան» իդեոլոգիան նկարագրում են առավելապես «Ազատ օր» և «*Ноев Ковчег*» թեր-

թերը, իսկ դրական երանգավորմամբ՝ «Օրեր»-ը և «Արձագանգ» օրաթերթը:

ՀՀ ապագան ՄՄ/ԵԱՄ-ում և «Եվրոպական կորսված հեռանկարում»

Հայաստանի ապագայի շուրջ քննարկումները սփյուռքյան դիտարկված լրատվամիջոցներում հիմնականում երկու ուղղությամբ են (տե՛ս *Աղյուսակ 7.3*): Առաջին ուղղությունը դիտարկում է Հայաստանի ապագան՝ հիմնվելով ներկա սոցիալ-տնտեսական, ռազմական խնդիրներին (օրինակ, չկարգավորված Ղարաբաղյան հակամարտություն, թույլ զարգացած տնտեսություն և կախվածություն Ռուսաստանից, էներգետիկ կախվածություն Ռուսաստանից և այլն) և, ըստ էության, ՄՄ-ին միանալու որոշումը դնում է անելանելիության և անշրջելիության սահմաններում: Այսպիսի տեսակետ հիմնականում կարելի է հանդիպել «*Ноев Ковчег*» թերթում, որում տեսակետներն առավելապես ներկայացված են Ռուսաստանի դիտանկյունից և նրա շահերի լիարժեք ընդունման դիրքից: Ընդ որում, այսպիսի վերաբերմունքը բացահայտ է հատկապես, երբ տեքստերի հեղինակը ռուս լրագրող է: Օրինակ, կարող ենք հանդիպել նման տեքստերի. «*Вполне очевидно, что Кремль, и на это он имел полное право, предложил Еревану альтернативу: продолжая «интеграционные» игры с Брюсселем, вы теряете российский «зонтик» безопасности, а присоединяясь к российским интеграционным проектам, вы получаете гарантии военной поддержки в случае обострения нагорно-карабахского конфликта. Это вполне логично: пусть Евросоюз или хотя бы Франция возьмут на себя*

обеспечение безопасности своего «ассоциированного члена». С какой стати Россия должна ее (а по сути – безопасность не только Армении, но и Нагорного Карабаха) гарантировать? Напротив, Россия в этом случае вполне может переориентировать свою внешнюю политику в регионе на Азербайджан, в значительной степени сохраняющий пока что суверенитет. За безопасность надо платить, и вступление в Таможенный союз в глазах Кремля как раз и становится такой платой» («Ноев Ковчег», «Интеграционные альтернативы: сложный выбор Армении между Европой и Россией»¹, 16.09.2013):

Մյուս ուղղությունը Հայաստանի ապագան դիտարկում է այլևս «անհնարին» սահմաններում, այն է՝ «կորսված եվրոպական ապագայի» տիրույթում: Այստեղ շեշտը դրվում է ոչ թե առկա խնդիրների, այլ նրանց վրա, որոնք չեն լուծվի և կառաջանան Մաքսային միությանն անդամագրվելու արդյունքում: Այսպիսի տեսակետ հիմնականում կարելի է հանդիպել արևմտյան

¹ «Միանգամայն պարզ է, որ Կրեմլը, և դրա իրավունքը նա ուներ, առաջարկել է այլընտրանք Երևանին. շարունակելով «ինտեգրացիոն» խաղերը Բրյուսելի հետ՝ դուք կորցնում եք ռուսական անվտանգության «անձրևանոցը», մինչդեռ միանալով ռուսական ինտեգրացիոն նախագծերին՝ դուք ստանում եք ռազմական ապահովության երաշխիքներ Ղարաբաղյան հակամարտության սրացման պայմաններում: Միանգամայն տրամաբանական է. թող ԵՄ-ը կամ Ֆրանսիան իրենց վրա վերցնեն «ասոցիատիվ անդամի» անվտանգությունը: Ինչի՞ց ելնելով Ռուսաստանը պետք է երաշխավորի (ըստ էության՝ ոչ միայն Հայաստանի, այլ նաև ԼՂՀ անվտանգությունը): Ընդհակառակը, Ռուսաստանն այս իրավիճակում կարող է ուղղորդել իր արտաքին քաղաքականությունը դեպի Ադրբեջան, որը դեռ զգալի չափով պահպանում է իր ինքնիշխանությունը: Անվտանգության համար պետք է վճարել, և մուտքը ՄՄ Կրեմլի աչքերում դառնում է հենց այդ վճարը: Դատելով ամեն ինչից՝ Կրեմլը չի խոչընդոտի Հայաստանի և եվրոպական կառույցների երկխոսության զարգացմանը, եթե այդ երկխոսությունը չսկսի վերածվել «գրոյական հաշվով խաղի» («Ноев Ковчег», «Ինտեգրացիոն այլընտրանքներ. Հայաստանի բարդ ընտրությունը ԵՄ-ի և Ռուսաստանի միջև», 16.09.13):

սփյուռքյան ՋԼՄ-ում. «Asbarez», «Հորիզոն», «Հայրենիք», «Մասիս» շաբաթաթերթ և ««Nouvelles d'Arménie»: Այս տեսակետի հիմնական աղբյուրները նշված լրատվամիջոցներն են: Մյուս կողմից, եթե առաջին ուղղությունը Հայաստանի ապագան ավելի շատ դիտարկում է ազգային (ռազմաքաղաքական) անվտանգության շրջանակներում, ապա երկրորդ ուղղությունում ավելի շատ են ապագայի մշակութային, իրավական, հանրային, արժեքային զարգացման հանդեպ կատարված շեշտադրումները. «Եւրոպական արժեքները որդեգրելը, մեր երկիրը եւրոպական արժեքներին համապատասխանեցնելը, կարծում եմ, մի նպատակ է, որն այսօր էլ մենք պետք է հետապնդենք» («Ազդակ», 16.09.2013, «Մենք հրաշալի տարբերում ենք, որտեղ է իշխանությունը, որտեղ՝ հայրենիքն ու պետականությունը»):

Աղյուսակ 7.3.

ՀՀ-ն պարտադրված ընտրության և եվրոպական կորսված հեռանկարում. հատվածներ ՋԼՄ-ից

<p>Для обеих стран перспектива односторонней ориентации на Запад и охлаждения отношений с Россией грозит серьёзными потерями. Для Армении – не только экономические потери, но нечто более страшное – ликвидация второго, хотя и не признанного, армянского государства — Нагорного Карабаха, т. е. передача нескольких сот тысяч армян во власть чуждого и с учётом нынешних реалий – агрессивно настроенного и жаждущего реванша государства («Ноев Ковчег», «Михаил Белецкий: Армения и Украина между ЕС и ТС», 06.09.2013).</p> <p>«Երկու երկրների համար միակողմանի կողմնորոշումը դեպի արևմուտք և Ռուսաստանի հետ հարաբերությունների սառեցումը կհանգեցնեն լուրջ կորուստների: Հայաստանի համար դա կարող է կրել ոչ միայն տնտեսական կորուստներ, այլ նաև ավելի սարսափելի բան՝ թեկուզ և չճանաչված պետության լուծարում, և մի քանի հարյուր հազար հայերի հանձնել ագրեսիվ տրամադրված և վրեժի ծարավ պետության իշխանությանը»:</p>	<p>Եւրոպական արժեքները որդեգրելը, մեր երկիրը եւրոպական արժեքներին համապատասխանեցնելը, կարծում եմ, մի նպատակ է, որն այսօր էլ մենք պետք է հետապնդենք: Այսինքն, մենք պետք է ձգտենք եւրոպական արժեքների՝ ոչ անպայման Եւրոպական միութեանը մաս կազմելու նպատակով («Ազդակ», «Մենք հրաշալի տարբերում ենք, որտեղ է իշխանությունը, որտեղ՝ հայրենիքն ու պետականությունը», 16.09.2013):</p>
--	---

<p>Таким образом, у Армении не было иного выхода, как упрочение союза с Россией, которая сейчас является единственным реальным союзником Армении и гарантом мира в регионе («Ноев Ковчег», «Михаил Белецкий: Армения и Украина между ЕС и ТС», 06.09.2013).</p> <p>«Այսպիսով, Հայաստանն այլ ելք չուներ, քան Ռուսաստանի՝ Հայաստանի ներկայիս միակ իրական դաշնակցի և տարածաշրջանի խաղաղության երաշխավորի հետ միության ամրապնդումը»:</p>	<p>Հայաստան կը փափաքի հնարաւոր ուղղութիւններով առաջ տանիլ համագործակցութիւնը Եւրոպական միութեան հետ՝ հիմնուելով այն համատեղ ձեռքբերումներու եւ յառաջընթացի վրայ, որոնք վերջին տարիներուն արձանագրուած են Հայաստան – Եւրամիութիւն յարաբերութիւններուն մէջ («Մասիս» շաբաթաթերթ, «Հաստատուեցաւ այցագրի ռեժիմի դիրացման մասին համաձայնագիրը Եւրամիութեան եւ Հայաստանի միջեւ», 12.10.2013):</p>
<p>Մաքսային միութեան միանալու մասին Հայաստանի յայտարարութիւնը իրավիճակային լուծում էր: Եւ ահա ես այստեղ կը հաւատամ, որ մենք պետք է Եւրոպական համարկման ճամբան բռնենք՝ հասկնալով իրավիճակային լուծման կարելորդութիւնը, անհրաժեշտութիւնը, անխուսափելիութիւնը, անշրջելիութիւնը եւ այլն («Ազդակ», «Դէպի Եւրոպա մեր ճամբան պետք չէ անցնի արեւելաեւրոպական մայրաքաղաքներով», 30.09.2013):</p>	<p>Այլ կերպ ասած՝ «առաջին ծաղիկ» դարձած՝ Հայաստանը գրկեց իրեն ԵՄ Ասոցացման նախաստորագրման արդէն իսկ գրեթէ պատրաստ համաձայնագրի ընդունումից եւ դրա կիրառումից («Մասիս» շաբաթաթերթ, «Առաջին ծաղիկ դարձած», 28.09.2013):</p>
<p>Ինչ կը վերաբերի մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան, ապա Ռուստամեան ըսաւ, որ ատիկա տնտեսական բնագաւառին մէջ պիտի չմնայ: Եւրոասիական միութեան ստեղծմամբ գործակցութիւնը պիտի փոխադրուի քաղաքական բնագաւառ, որովհետեւ Ռուսիա կը ձգտի ստեղծելու աշխարհաքաղաքական նոր բեւեռ մը, ուր նաեւ կարելոր խնդիր մը պիտի ըլլայ Լեռնային Ղարաբաղի տագնապը («Գանձասար» շաբաթաթերթ, «Հայաստանի Ազգային ժողովին մէջ քաղաքական ուժերը կը շարունակեն լուսարձակի տակ բերել Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան խնդիրը», 19.09.2013):</p>	<p>Առանձին անդրադարձ կատարեցի նաեւ Հայաստան-Ռուսաստան եւ Հայաստան-Եւրոպական միութիւն յարաբերութիւններին՝ Ռուսաստան-Ուքրաինա յարաբերութիւնների օրինակով ցոյց տալով, թէ որքան կոշտ եւ նեարդային է արձագանգում Մոսկուան իր հարեւան պետութիւնների՝ դէպի Եւրոպական միութիւն յարաբերութիւնների սերտացմանը («Ազդակ» օրաթերթ, «Մէկ շաբաթ Թեհրանում», 06.09.2013):</p>

<p>Մեր հարցը այսօր լինելիության հարցի լուծումն է: 1918-1920-ական թուականներուն ալ ստեղծուած էր նման կացութիւն, երբ ազերիները համագործակցեցան պոլշէիկներու հետ եւ մենք հազիւ կրցանք պահել Չանգեզուրը եւ Չանգեզուրով միացանք ու մտանք Խորհրդային Միութեան մէջ: Ընտրութիւն կատարելով յօգուտ Եւրասիական միութեան, Հայաստան այլընտրանք չունէր («Ազատ օր», «Մաքսային միութեան անդամակցելով Հայաստան կը լուծէ իր լինելիութեան խնդիրը», 30.09.2013):</p>	<p>Մենք կը յարգենք Հայաստանի կամքը, բայց մենք պետք է ընդգծենք, որ Մաքսային միութեան միանալու որոշումը կը նուազեցնէ Հայաստանի՝ Եւրոպական միութեան հետ համագործակցութեան եւ համարկումի յաւակնութիւնները («Ազատ օր», «Էլէնի Թեոխարոս կը յորդորէ՝ երես չդարձնել Հայաստանէն. Եւրոպացի երեսփոխաններու գնահատականները Եւրասիական մաքսային միութեան միանալու Հայաստանի որոշման լոյսին տակ», 01.10.2013):</p>
<p>К этому Армения шла достаточно долго, к этому ее активно подталкивали, навязывая ей альтернативу: либо «ассоциированное членство» в ЕС, либо интеграционные проекты с участием России. Кому-то начинало казаться, что «ассоциированное членство» – это не просто «европейская перспектива», это уже ступенька к полноценному и безоговорочному членству Армении в самом Европейском Союзе. Теперь же некоторым «европейски ориентированным» гражданам Армении мнится, что все рухнуло, что Армения злой волей Кремля оторвана от родственной ей по духу Европы и задвинута в туманные глубины Азии. Армения же как в том, так и в другом случае должна была лишиться заметной части своего суверенитета. И это всего лишь в обмен на обещания счастливого и сытого будущего. Судя по всему, Кремль не будет препятствовать и развитию диалога Армении с европейскими структурами, если этот диалог не станет превращаться в «игру с нулевой суммой» («Ноев Ковчег», «Интеграционные альтернативы: сложный выбор Армении между Европой и Россией», 19.09.2013).</p>	<p>Մենք կ'ափսոսանք Ընկերակցութեան համաձայնագիրի բանակցութիւններու յաջողման համար Հայաստանի գործադրած ջանքերուն համար, որոնց իբրեւ արդիւնք բանակցութիւնները աւարտեցան՝ պատրաստելով Հայաստանի հետ համաձայնագիրի նախաստորագրումին, որմէ ետք Հայաստան որոշեց այլեւս չընկերակցիլ Եւրոպական միութեան հետ եւ միանալ Ռուսիոյ նախաձեռնած Մաքսային միութեան՝ Պիելդոռուսիոյ եւ Ղազախստանի հետ: Ատիկա ինքնիշխան որոշում է եւ մենք կը յարգենք ատիկա, սակայն կ'ափսոսանք, որ ի գուր այդքան ջանք եւ ժամանակ վատնուեցաւ երկու կողմերէն ալ («Ազատ օր», «Էլէնի Թեոխարոս կը յորդորէ՝ երես չդարձնել Հայաստանէն. Եւրոպացի երեսփոխաններու գնահատականները Եւրասիական մաքսային միութեան միանալու Հայաստանի որոշման լոյսին տակ», 01.10.2013):</p>

<p>Դրան Հայաստանը գնում էր շատ երկար, նրան ակտիվ դրդում էին, ստիպում այլընտրանք կատարել, կամ «աստղիատիվ անդամակցություն» ԵՄ-ին, կամ ինտեգրացիոն նախագծեր Ռուսաստանի մասնակցությամբ: Ոմանց սկսեց թվալ, որ «աստղիատիվ անդամակցությունն» ուղղակի «եվրոպական հեռանկար» չէ, այլ ԵՄ-ին Հայաստանի ամբողջական և անվերապահ անդամակցության աստիճան: Այժմ Հայաստանի «եվրոպական ուղիվածությամբ» որոշ քաղաքացիներին թվում է, որ ամեն ինչ քանդվեց, որ Հայաստանը Կրեմլի չար կամքով պոկվել է իրեն հոգեհարազատ Եվրոպայից և մտցվել Ասիայի մշուշոտ խորքերը: Հայաստանը և՛ այս, և՛ մյուս պարագայում պետք է զրկվեր իր ինքնիշխանության զգալի մասից: Եվ սա՛ միայն երջանիկ ու կուշտ ապագայի խոստման դիմաց: Դատելով ամեն ինչից՝ Կրեմլը չի խոչընդոտի Հայաստանի և եվրոպական կառույցների երկխոսության զարգացմանը, եթե այդ երկխոսությունը չսկսի վերածվել «գրոյական հաշվով խաղի» («Ноев Ковчег», «Ինտեգրացիոն այլընտրանքներ. Հայաստանի բարդ ընտրությունը ԵՄ-ի և Ռուսաստանի միջև», 16.09.13):</p>	
---	--

<p>Մենք մեր տեսակետը մամուլով պարզել ենք. մենք սկզբունքային խնդիր չունենք: Գտնում ենք, որ Հայաստանի անվտանգության թելադրանքները եւ էներգետիկ դժուարությունները կրկնակիորեն են կարեւորում Մաքսային միութեանը միանալու անհրաժեշտությունը («Ալիք», «Իմ պատասխանը Պուտինի նման է՝ չեմ պատասխանում», 24.11.2013):</p>	<p>Մենք պետք է հասկնանք, որ նոր կայսերական ծրագիրի անյաջողութեան պարագային պետք է ունենանք ելքեր՝ այժմ արդէն պետք է իմանանք, թէ ինչի՞ն պետք է պատրաստ ըլլանք: Հայաստանի ճամբան դէպի Եւրոպա, դէպի Պրիւքսել, պետք չէ անցնի արեւելաեւրոպական մայրաքաղաքներով: Այսօր աւելի եւ աւելի կարեւոր կը նկատուի ուղղակի կապը Հայաստանի եւ Հին Եւրոպայի դերակատար պետություններուն միջեւ՝ Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, Սպանիա, Գերմանիա եւ այլ երկիրներ: Այդ երկիրները այսօր կը հանդիսանան Հայաստանի արտաքին քաղաքականութեան հիմնական թիրախները. ուղղակի, անմիջական կապերով պետք է վերականգնել ու չկորսնցնել այդ ամբողջ կարողականությունը, որ այս կամ այն ուղղութեամբ կուտակուած է («Ազդակ», «Դէպի Եւրոպա մեր ճամբան պետք չէ անցնի արեւելաեւրոպական մայրաքաղաքներով», 30.09.2013):</p>
	<p><i>«ԵՄ-ը և ՀՀ-ն պայմանավորվել են շարունակել ընդհանուր արժեքների վրա հիմնված համագործակցությունը բոլոր ոլորտներում, հանրային շերտերում» («Nouvelles d'Arménie», «L'UE débloque 41 millions d'euros pour les programmes de développement en Arménie», «ԵՄ-ը տրամադրում է 41 մլն եվրո Հայաստանի զարգացման ծրագրերի համար», 26.12.2013):</i></p>

**«Եվրոպական» և «ռուսական»
զուգահեռ հեռանկարներ**

Դիտարկված լրատվամիջոցներում հազվադեպ, բայց դիտարկվում է նաև այն հարցը, թե որքանով է հնարավոր Հայաստանի ապագան միաժամանակ Եվրոպայի և Ռուսաստանի հետ հարբերությունների պահպանման և զարգացման շրջանակնե-

րում (տե՛ս *Աղյուսակ 7.4*): Այս դատողությունների աղբյուրներ են հիմնականում Հայաստանի պետական գործիչները (վարչապետ, արտաքին գործերի նախարար և այլն) և Եվրամիության պաշտոնյաները: Այս կարծիքները հիմնականում դեկլարատիվ բնույթ ունեն, և, ըստ էության, Հայաստանի ապագան խորքային իմաստավորում չի ստանում այս մոդելի շրջանակներում:

Աղյուսակ 7.4.

*ՀՀ-ն «եվրոպական» և «ռուսական» զուգահեռ հեռանկարներում.
մեջբերումներ լրատվամիջոցներից*

Հայաստան իր առջև նպատակ դրած է դիւերսիֆիկացնել իր արտաքին յարաբերութիւնները, եւ այդ առումով երկիրը չի կարող միայն մէկ ռազմավարական գործընկեր ունենալ («Մասիս» շաբաթաթերթ, «Հայաստանի վարչապետ. «Մաքսային միութեան եւ ԵՄ-ի միջեւ քաղաքական գործընթացներն իրար փոխյրացնող են», 26.10.2013):

Параллельно с вступлением в Таможенный союз Армения должна продолжать активное сотрудничество с Евросоюзом, и в этой связи для нас чрезвычайно важно разработать амбициозную программу действий Армения-ЕС, которая должна стимулировать те реформы, которые мы хотим реализовать совместно с нашими партнерами из Евросоюза («Analitikaua.net», «Ереван намерен разработать новую программу действий Армения-ЕС», 06.12.2013).

ՄՄ-ին անդամագրվելուն զուգահեռ՝ Հայաստանը պետք է շարունակի ակտիվ համագործակցությունը ԵՄ-ի հետ, այդ պատճառով մեզ համար չափազանց կարևոր է մշակել Հայաստան-ԵՄ գործունեության հավակնոտ ծրագիր, որը պետք է խթանի այն բարեփոխումները, որոնք մենք ուզում ենք իրականացնել մեր ԵՄ գործընկերների հետ համատեղ:

<p>Обе страны, с одной стороны, тесными историческими и экономическими узами связаны с Россией, с другой – тяготеют к европейским ценностям и ориентируются на них (по крайней мере, на словах). В обеих странах общественное мнение разделено – одна часть предпочитает сближение с Россией, другая – с Европой. И, наконец, обе страны испытывают давление с двух сторон – и ЕС, и Россия, пытаются убедить каждую из них в преимуществах союза именно с собой и в невозможности «сидеть между двумя стульями» («Analitika.ua.net», «Михаил Белецкий: Армения и Украина между ЕС и ТС», 06.12.2013).</p> <p>Երկու երկրներն էլ, մի կողմից, պատմական և տնտեսական սերտ կապերով կապված են Ռուսաստանի հետ, մյուս կողմից՝ ձգտում են Եվրոպական արժեքներին և կողմնորոշվում են դեպի դրանք (համենայնդեպս խոսքով): Երկու երկրներում էլ հասարակական կարծիքը բաժանված է, մի մասը նախընտրում է Ռուսաստանի, մյուսը՝ Եվրոպայի հետ մերձեցում: Եվ վերջապես, երկու երկրներն էլ ճնշման են ենթարկվում երկու կողմից, և՛ ԵՄ-ը, և՛ Ռուսաստանը ձգտում են նրանցից յուրաքանչյուրին համոզել իր հետ միության առավելությունների և «երկու արժեքների մեջտեղում» նստելու անհնարինության հարցում:</p>
<p>Մեր երկրի արտաքին քաղաքականությունը բազմաշերտ է և մի քանի ճակատներում տարբեր ձևով է ընթանում: Մեր քաղաքական քուրսը (ուղեգիծը- <i>խւրսը</i>) միանշանակ յաջող չէր, երբ յանգեցրեց Մաքսային միութեանը միանալու անվերապահ յայտարարութեանը: Եւ հարցը Մաքսային միութեան մեջ չէ, այլ մեր մեջ: Համոզուած եմ, որ մեր քաղաքական քուրսը կարելի էր կառուցել այնպէս, որ երկիրը չկանգնէր այսպիսի ծանր ընտրութեան առջեւ («Գանձասար» շաբաթաթերթ, «Ես չեմ ուզում իմ երկրի կոլապսը», 21.11.2013):</p>
<p>Մաքսային միութեան անդամակցութեան որոշումը, իր հերթին, ունի իր արդարացուած հիմնատրումը: Ի վերջոյ միակողմանի, դեպի Եւրոպական միութիւն սրընթաց ընթանալու փաստը կրնար դիսքային հիմնական բաժին պարփակած ըլլալ: Իսկ փոխընթացումը կ'ենթադրէ ինչպէս ռուսական, այնպէս նաեւ եւրոպական, կամ ընդհանրապէս արեւմտեան ուղղութիւններու վրայ շարունակել համագործակցութեան ձեւաչափերու ապահովման եւ գործնականացման քաղաքականութեան կիրարկումը: Խնդիրը այս հանգրուանին պէտք է դիտարկել ոչ աղէտալի, ոչ ալ բացարձակապէս դրականի սեւ-սպիտակի բանավիճային մօտեցումով: Դեպի Մաքսային միութիւն առնուած քայլը, գուցէ անխուսափելի, այսուհանդերձ լուրջ իրավիճակ ստեղծած է դեպի Եւրոպական միութեան ընկերակցութիւն նախաստորագրութեան համար քանի մը տարի բանակցութիւն տարած պաշտօնական Երեւանին համար («Ազդակ», «Ակնարկ. զարգանալ (չ)գիջելով», 17.09.2013):</p>
<p>Հայաստանի եւ Եւրոպական միութեան միջեւ բանակցութիւնները տակաւին կը շարունակուին, բանակցութիւնները կ'ընթանան ամէն օր՝ երէկ, նախորդ օրը եւ պիտի ընթանան վաղը, այսօր տակաւին որեւէ որոշում չկայ: Բանակցութիւնները կ'ընթանան Վիլնիսի հռչակագիրի, ապագայի վերաբերեալ: Այնպէս որ, երբ կը փորձեն ըսել, թէ ամէն ինչ որոշուած է, ճիշդ չէ: Երեք տարի բանակցութիւններ վարելը մեծ ժամանակահատուած է, եւ կան լուրջ ձեռքբերումներ, ուստի պէտք է ամրագրել ձեռքբերումները: Ան անլցուց, որ Եւրոպական միութեան առաջնահերթութիւնն է ուղիներ գտնել Հայաստանի հետ ապագային համագործակցելու համար («Ազդակ», «Հայաստանի եւ Եւրոպական միութեան միջեւ բանակցութիւնները կը շարունակուին», 08.11.2013):</p>

Ֆիլիէի հետ մեր հանդիպումէն ետք, մենք հրապարակեցինք Հայաստանի կողմէ արտայայտուած ցանկութիւնը՝ կարելի բոլոր ձեւաչափերով եւ ըստ կարելւոյն սերտ եւ խոր համագործակցութիւն ունենալ Եւրոպական միութեան հետ եւ շարունակել առաջ տանիլ մեր յարաբերութիւնները՝ հիմնուելով վերջէքս Հայաստանի եւ Եւրոպական միութեան միջեւ արձանագրուած դրական կէտերուն վրայ եւ բոլոր կարելի ուղղութիւններով, որոնք կարելի պիտի ըլլան Եւրոպական միութեան կողմէ եւ որոնք չեն հակասեր Հայաստանի Մաքսային միութեան անդամակցելու որոշման («Ազդակ», «Նալբանդեան կարելի կը նկատէ Եւրոպական միութեան հետ հետագայ համագործակցութիւնը. Ռուստամեանէն երէք հարցում՝ Նալբանդեանին», 09.11.2013):

Հայաստան կը ցանկայ շարունակել ըստ կարելւոյն սերտ գործընկերութիւնը՝ որքանով որ Եւրոպական միութեան համար կարելի ըլլայ ատիկա եւ չի հակասեր Մաքսային միութեան Հայաստանի անդամակցութեան («Ազդակ», «Խորհրդակցութիւնները եռանդուն կերպով պիտի շարունակուին Հայաստանի եւ Եւրոպական միութեան միջեւ», 07.09.2013):

«Հայաստանի անորոշ ապագան»

Սփյուռքյան ԶԼՄ դիսկուրսում ՀՀ ապագայի շուրջ քննարկումները հաճախ հանգում են անորոշության հիմնախնդրին: Դատողությունները հիմնականում վերաբերում են նրան, որ Հայաստանի ընտրած քաղաքական ուղղությունը դեպի Մաքսային միությունն և Եվրասիական միությունն ունի մշուշոտ ուրվագծումներ (տե՛ս *Աղյուսակ 7.5*): Այսպիսի տեքստերը հիմնականում մտահոգ երանգավորմամբ են: Հայաստանը պատկերվում է որպէս մի պետություն, որն իր ապագայի որոշողը չէ և հանդես է գալիս կրավորական դիրքերից: Միևնույն ժամանակ, դիտարկված ԶԼՄ-ում չկան այս անորոշ ապագան ինչ-որ կերպ որոշակիացնելու փորձեր՝ թեկուզ Սփյուռքի շահերի դիսկուրսի տեսանկյունից:

Աղյուսակ 7.5.

ՀՀ անորոշ ապագան. մեջբերումներ լրատվամիջոցներից

<p>Աւելի ծանր կը կշռեն, գէթ քանակի առումով, քննադատական մօտեցումները, որոնք կը կեդրոնանան որոշումի պարտադիր բնոյթին, մեր երկրի կախեալութեան, Եւրոպական միութեան կողմէ Հայաստանի առջեւ դռներ փակելու եւ երկիրը դէպի անորոշ հեռանկար առաջնորդուած ըլլալու տեսակէտներուն վրայ («Ազգակ», «Ակնարկ. զարգանալ (չ)զիջելով», 17.09.2013):</p>
<p>Հայաստանը Մոսկուային առանց դիմակայելու փորձի ընտրեց Մաքսային միութեանն անդամակցելու ճանապարհը այն պայմաններում, երբ դեռ պարզ չէ, թէ Պուտինի եւրասիական ծրագրերն ընդհանրապէս կեանքի կը կոչուեն միւս յետխորհրդային պետութիւնների այսպիսի դիմակայութեան պայմաններում, թէ՛ ոչ («Մասիս» շաբաթաթերթ, «Առաջին ծաղիկ դարձած», 28.09.2013):</p>
<p>Հայաստանի Մաքսային միութեանը միանալու որոշման մասին Մոսկուայում յայտարարուածը որքան շրջադարձային, նոյնքան էլ Հայաստանի ապագայի համար հսկայական պատասխանատուութիւն թելադրող որոշում էր: Մեր պարագայում, ցանկացած տնտեսական ինտեգրում պէտք է յստակ երաշխիքներ տայ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնների անվտանգութեան պահպանման ու ամրապնդման եւ տնտեսական համարկման եւ զարգացման համար («Ազատ օր», «Հ.Յ.Դ Գերագոյն Մարմնի մամուլ հաղորդագրութիւնը», 05.09.2013):</p>
<p>Մերժ Մարգսեանը ընտրեց Մաքսային միութիւնը: Եւ չնայած նոյն շրջանակները չեն պնդում, թէ ՀՀ նախագահը հայրենանուէր քայլ կատարեց ու փրկեց ԼՂՀ-ն կործանումից, սակայն նաեւ չեն խօսում այն մասին, թէ ինչ է տալու ԼՂՀ-ին Մաքսային միութեանը Հայաստանի անդամակցութիւնը եւ ինչպէս է դա ազդելու, ընդհանրապէս, Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի վրայ: Ամենակարեւոր հարցը, որի պատասխանը չեն ուզում տալ ո՛չ Մոսկուայում եւ ո՛չ էլ Երեւանում, այն է, թէ Մաքսային միութեանը միանալու պայմանագիրը ստորագրելուց յետոյ արդեօք Հայաստանի եւ ԼՂՀ-ի միջեւ սահմանազատում տեղի չի ունենալու, այսինքն՝ Մաքսային միութեան սահմանը չի անցնելու ԼՂՀ-ի եւ Հայաստանի միջեւ («Ազատ օր», «Ի՞նչ է տալու Մաքսային միութիւնը Ղարաբաղին», 30.09.2013):</p>
<p>Լաւագոյն պարագայում մեծամասնութիւնը հարց է բարձրացնում պայմանագրերին ծանօթ չլինելու եւ Ս.Սարգսեանի անընդունելի գործելաճճի վերաբերեալ: Սակայն, ի՞նչ է Հայոց պետականութեան ազգային ռազմավարութիւնը՝ մեր «Անկախութեան» վերաբերեալ եւ, օրինակ, սրանից 8 տարի յետոյ նրա 30ամեակին (երբ ըստ Եւրասիայի ծրագրի, էթէ թղթի վրայ չմնայ, 2020ից կ'աշխատի ռուբլին՝ տարածաշրջանում եւ երեւի մենք էլ կը վերադառնանք հին լաւ օրերին...) ինչ պատկեր է կազմելու Հայաստանի անկախ եւ ազատ Հանրապետութիւնը, դժուար թէ որեւէ քաղաքական դէմք եւ հոսանք ունի յստակ գրաւոր ծրագիր ու հայեցակարգ («Ազգակ», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.2013):</p>

**8. «ՀՀ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՆ ՄՄ/ԵԱՄ-ԻՆ».
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ ինտեգրացիան պայմանավորող գործոններ

Հայաստանի արտաքին և ինտեգրացիոն քաղաքականության գնահատականներում կարելի է առանձնացնել մի շարք գործոններ, որոնցով հիմնավորվում, արդարացվում կամ բացատրվում է ՄՄ/ԵԱՄ-ին սպասվող անդամակցությունը: Փորձենք դիտարկել դրանք:

Այլընտրանքի բացակայությունը՝ որպես Հայաստանի անպաշտպան աշխարհաքաղաքական դիրքի հետևանք

Հայաստանի կողմից ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությունը հիմնավորվում է Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքով, հայռուսական հարաբերությունների անհավասարությամբ, երկրի փոքրությամբ, ադրբեջանական սպառնալիքով և այս գործոններով պայմանավորված այլընտրանքի բացակայությամբ. «...ներկայ աշխարհաքաղաքական վիճակում մեր պետութիւնը այլընտրանք չունի... («Մասիս» շաբաթաթերթ, «Իշխանութիւնը մեծացել է ուրիշի տակ լինելու գաղափարով», 28.09.2013): Համարվում է, որ ստեղծված իրավիճակում միակ հնարավոր գործընկերը Հայաստանի համար Ռուսաստանն է: Օրինակ. «Այս իրադրութեան մէջ միակ ուժը, որի հետ պէտք է մտ»

լինենք, դա պետք է լինի Ռուսաստանը» («Մասիս» շաբաթաթերթ, «Իշխանութիւնը մեծացել է ուրիշի տակ լինելու գաղափարով», 28.09.2013): «*Asbarez*»-ը շեշտադրում է իրավիճակի անելանելիությունը, որ դիմակայել գերտերության որոշմանն անհնար է, ուստի այլընտրանք չի մնում՝ ինտեգրման ռուսական ուղղությունն ընտրելուց բացի. «*Հայ ժողովուրդի եւ Հայաստանի օրինակով փոքր ուժը ի նչ կրնայ ընել կամ ինչպէ՞ս կրնայ ազդել դէպքերու հոլովոյթին վրայ, երբ Ռուսիոյ տարողութեամբ մեծապետական գերուժը որոշած է առաջ շարժիլ դէպի տարածաշրջանի նորատիպ միաւորումը*» («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13): «*Օրեր*» ամսագրում անհնարիւնությունն ու անելանելիությունը դիտարկվում են տարածաշրջանային իրավիճակի տեսանկյունից. Հայաստանը՝ որպէս փոքր պետություն, միայնակ դիմակայել տարածաշրջանի ներկա իրավիճակին անգոր է, ուստի Հայաստանը պետք է համագործակցի Ռուսաստանի հետ. «*Քանի դեռ Ազրպէյճանը սպառնում է նոր պատերազմով, իսկ Թուրքիան Հայաստանին տնտեսապէս ծնկի բերելու նպատակով շարունակում է շրջափակման իր թշնամական քաղաքականութիւնը, Հայաստանը այլ ընտրութիւն չի ունենալու, քան՝ սպաւինել երրորդ ուժին, այսինքն՝ Ռուսաստանին*» («Օրեր», Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ», 09.09.13):

«ՀՀ անարդյունավետ կառավարումը»

Սփյուռքի ԶԼՄ-ում նկատելի մաս է կազմում նաև ՄՄ/ԵԱՄ-ին ՀՀ անդամակցության որոշումը ներքաղաքական պայքարի

անկյան տակ դիտարկումը՝ չնայած այն առանցքային դիտանկյուն չի հանդիսացել, ինչպես նաև քանակապես մեծ ծավալ չի կազմել: Նման հոդվածները հիմնականում արտացոլում են ՀՀ կառավարությանը հասցեագրվող հայաստանյան ընդդիմության քննադատական դրույթները. օրինակ՝ բանակցությունների գաղտնի ընթացքը: ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությունն այս համատեքստում որակվում է որպես *«հայ քաղաքական կուրսի սխալ»* (*«մեր քաղաքական քուրսը (ուղեգիծը- խմբ.) միանշանակ յաջող չէր, երբ յանգեցրեց Մաքսային միութեանը միանալու անվերապահ յայտարարութեանը»*) («Գանձասար» շաբաթաթերթ, «Ես չեմ ուզում իմ երկրի կոլապսը», 23.11.2013): Մեկ այլ դեպքում այս որոշումը ներկայացվում էր իշխանությունն պահելու կամ ամրապնդելու միջոց. *«Հայաստանի կառավարության կտրուկ որոշմամբ՝ միանալ Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը, որով իշխող կուսակցությունը Հայաստանում ամրապնդեց իր բռնի իշխանությունը՝ անտեսելով բնակչությանը»:* ՀՀ-ՌԴ անհավասար հարաբերությունների մասին ևս խոսվում է որպես Հայաստանի սխալ կառավարման արդյունք, ինչի պատճառով ՀՀ-ն նմանվում է *«Ռուսաստանի հայ համայնքին»:* Այս գործոնը հիմնականում շեշտադրում է *«Asbarez»*-ը. *«պետութեան ղեկավարը ինքնագլուխ կը շարժի: Առաջին անգամ չէ, որ նախագահ Սերժ Սարգսեան ինքնագլուխ գործելու իր վարքագիծով կը «փայլի»...»* («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13), ՀՀ անարդյունավետ կառավարմանը՝ որպես ներկա պարտադրված ինտեգրացիոն քաղաքականությունը պայմանավորող գործոնի,

անդրադառնում են նաև «Ալիք», «Ազդակ» օրաթերթերը և «Գանձասար» շաբաթաթերթը (տե՛ս Աղյուսակ 8.1).

Աղյուսակ 8.1.

*«ՀՀ անարդյունավետ կառավարում»
մեջբերումներ լրատվամիջոցներից*

«Նայեք մեր տնտեսութեանը, հայ-թուրքական սահմանին, մեր հեռուստաընկերություններին, ռուսերենով հեռուստախաղերին մասնակցող ու ռուսերենը գովազդող կառավարութեան անդամներին, գրեթե ՀՀ բնակչութեանը հաւասար Ռուսաստանի հայ համայնքին: Մեր շատ պաշտօնեաներ անթաքոյց քծնանքով ու 180 աստիճան շրջադարձով քառամեայ եւրախնտեգրացիայից մէկ օրում շրջուեցին դէպի Կրեմլ: Իսկ Հայաստանը, ցաօք, իր խոցուած իմունիտետով, կառավարման անտաղանդութեամբ յայտնուել է մի վիճակում, երբ իր համար որոշում են: Շատ հեշտ ենք տրում, անհասկանալի, անորոշութիւններով ու անստոյգ երաշխիքներով: Հայերէնից բացի որեւէ այլ լեզուին կարգավիճակ տալը մեր ինքնութեան կորուստն է, հարուած է մեր խարխալուող պետականութեանը: Անընդունելի է, աններելի է, անկարելի: Զարմանում եմ՝ քաղաքական քծնանքի արշաւ է սկսուել. ինչ արագ ու հեշտ ենք գունափոխուում («Asbarez», «Դեռ հեռու ենք իրաւագիտակից, պահանջատէր, կազմակերպուած հասարակութիւն ունենալուց», 27.11.13):

«Այսպիսով, Սեպտեմբերի 2ից մինչ 21ի գեղեցիկ օրերի բնաբանը, որ պիտի լինէր՝ «Անկախութիւն» եւ «Միացեալ Հայաստան», դարձաւ «Եւրասիա», թէ «Եւրոմիութիւն»: «Մերժ Սարգսեանի հերթական քաղաքական անակնկալը, ինչպիսիւն էր հայ-թուրքական պրոտոկոլի ժամանակ, ոնց որ կատարուած նոր, բայց նոյն հին կացութեան առջեւ կանգնեցրեց հայ քաղաքական միտքն ու նոյնիսկ Հայաստանի վարչամեքենան: «Ինչ չափով «մտածուած» քայլ էր ՀՀ նախագահի այդ յայտարարութիւնը՝ չգիտեմ, բայց այնքանով, որ դա անակնկալ էր հէնց իր վարչամեքենայի, Ազգային ժողովի եւ միջազգային քաղաքական ու յատկապէս Եւրոպայի համար, յստակ է: Լաւագոյն պարագայում մեծամասնութիւնը հարց է բարձրացնում պայմանագրերին ծանօթ չլինելու եւ Ս.Սարգսեանի անընդունելի գործելաոճի վերաբերեալ («Asbarez», «Անկախութեան պահպանման բաց եւ առաջնային օրակարգը», 30.09.13):

«Ոչ մի կասկած չկայ, որ Հայաստանը մօտեցել է այդ կէտին. մի քանի տասնեակ ընտանիքներ պաշտօնապէս կամ քողարկուած վերահսկում են երկրի գրեթե ամբողջ տնտեսական ներուժը: Ընդ որում՝ հասարակութեան եռման կէտին մօտենալու պատճառը ոչ այնքան փոքրամասնութեան կուտակած անթիւ-անհամար հարստութիւններն են (աղքատ երկրում առարկայական պատճառներով դա դժուար հասանելի է), որքան բնակչութեան ճնշող մեծամասնութեան ծայրաստիճան աղքատացումը, որն արդէն սկսել է արտացոլուել մարդկանց արտաքինի եւ մտածողութեան մէջ («Գանձասար» շաբաթաթերթ, «Հասունացել է կուտակուած հարստութեան վերաբաշխման անհրաժեշտութիւնը», 26.09.13):

<p>Այդ չորս տարիների ընթացքում Հայաստանը արժանանում էր Ռուսաստանի եւ անձամբ Փութինի ոչ բարեացկամ վերաբերմունքին: Աւելի արդարացի կը լինէր երոպացիներին ասել, որ Հայաստանը գնում է դէպի Մաքսային միութիւն: Եւրոպացիները այդ դէպքում մեզ անելի կը յարգէին, իսկ Ռուսաստանը գուցէ այդքան չբարձրացներ Հայաստանին մատակարարուող բնական կազի գինը, գուցէ այդպիսի ծաւալներով չզինէր Ազրպէյճանին («Ազդակ», «Ռուսաստանի ճնշման տակ. Հայաստանը կանգնեց պարտադրուած ընտրութեան առաջ», 09.09.13):</p>
<p>Հայաստանի իշխանություններն ընտրեցին հեշտ ճանապարհը՝ տեղի տալով ռուսական մուրճի առաջին իսկ սպառնալիքին, ընդունել կապիտուլյացիան, հանձնել ամեն ինչ՝ սեփական ժողովրդի և երկրի բախտն ու ճակատագիրը թողնելով հյուսիսից փչող քամու քմահաճույթին, փոխարենը վայելել սեփական իշխանությունը վերարտադրելու «ցարական իրավունք»-ը («Ալիք», «Օրինված սհաթի նստվածքը», 17.09.13):</p>
<p>«Հայ քաղաքական կուրսի սխալ կամ իշխանություն պահելու նպատակ» («Գանձասար» շաբաթաթերթ, «Ես չեմ ուզում իմ երկրի կոլապսը», 21.11.2013):</p>
<p>«Մենք պետք է կարողանայինք մանրել այս իրավիճակում: Ցավոք, մեր իշխանություններին դա չհաջողվեց» («Արաքս» շաբաթաթերթ, «Մաքսային միությանը միանալու որոշումը պարտադրված էր Ռուսաստանի կողմից». Երվանդ Բոզոյան, 15.10.2013):</p>
<p>«Հայաստանի կառավարության կտրուկ որոշմամբ՝ միանալ Ռուսաստանի գլխավորած Մաքսային միությանը, որով իշխող կուսակցությունը Հայաստանում ամրապնդեց իր բռնի իշխանությունը՝ անտեսելով բնակչությանը» («Asbarez», Resolving to Advance the Armenian Cause. Լուծում՝ առաջ խաղացնելու Հայ դատի հարցը, 31.12.2013):</p>
<p>«Մեր քաղաքական քուրսը (ուղեգիծը- խմբ.) միանշանակ յաջող չէր, երբ յանգեցրեց Մաքսային միութեանը միանալու անվերապահ յայտարարութեանը: Եւ հարցը Մաքսային միութեան մէջ չէ, այլ մեր մէջ: Համոզուած եմ, որ մեր քաղաքական քուրսը կարելի էր կառուցել այնպէս, որ երկիրը չկանգնէր այսպիսի ծանր ընտրութեան առջեւ» («Գանձասար» շաբաթաթերթ, «Ես չեմ ուզում իմ երկրի կոլապսը», 23.11.2013):</p>

***Անդամակցության և չանդամակցության
բացասական սպասելիքները***

Ընդհանրացնելով ՀՀ ինտեգրացիոն գործընթացների մասին քննարկումները՝ կարող ենք նշել, որ դրանք առավել հաճախ ծավալվում են ՄՄ/ԵԱՄ-ին Հայաստանի անդամակցության

կամ չանդամակցության բացասական հետևանքների և ոչ թե դրական հետևանքների տեսանկյուններից: Դրանք արտացոլված են և՛ «կողմ», և՛ «դեմ» կարծիքներում: ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությանը կողմ տեսակետներում նկատելի են Հայաստանի ներկայիս «ստատուս քվոն» պահպանելու և չանդամակցելու հետևանքով նոր խնդիրներից ապահովագրվելու նպատակադրումները: Իսկ անդամակցությանը դեմ տեսակետներում առկա են Հայաստանի ապագայի զարգացման հետևանքներից զրկվելու մտավախությունները: Ասել է թե՛ ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությունը մի տեսակետի համաձայն՝ մեզ կապահովի չանդամակցելու դեպքում սպասվող վտանգներից, իսկ մյուս տեսանկյունից՝ այն մեզ նորանոր վտանգների առաջ կկանգնեցնի: Ստորև կներկայացնենք այս դիտարկումների ընդհանրացումները (ԶԼՄ-ից օրինակները տե՛ս *Աղյուսակ 8.2*-ում):

Անդամակցության հնարավոր բացասական հետևանքները

- *ՀՀ-ԵՄ հարաբերությունների սառեցում:* Որպես անդամակցության ուղղակի հետևանք հաճախ նշվել է Եվրոպայի հետ հարաբերությունների սառեցման խնդիրը, որն ընդգրկում է ամենատարբեր ոլորտներ՝ քաղաքական (օրինակ՝ ՀՀ-ն կկորցնի իր աշխարհաքաղաքական նշանակությունը), տնտեսական (տնտեսական կապերի խզման վտանգ Եվրոպայի հետ): Չնայած պաշտոնապես հնչում է այն տեսակետը, թե ԵՄ-ի հետ համագործակցությունը շարունակվելու է, սակայն ինչպես տեղի, այնպես էլ Մփյուռքի հայկական ԶԼՄ-ում այս խնդիրը գտնվել է քննարկումների առանցքում:

- *Ռուսաստանի գերիշխանության ամրապնդումը ՀՀ-ում:* ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությունը կհանգեցնի Ռուսաստանի գերիշխանության ամրապնդմանը ՀՀ-ում՝ անվտանգության, տնտեսական (Ռուսաստանը կորոշի ՀՀ տնտեսական քաղաքականությունը), էներգետիկ ոլորտներում: ՄՄ ընձեռած տնտեսական լայն հնարավորություններին հակառակ հնչել են մտահոգություններ տնտեսության ոլորտում բացասական հետևանքների տեսանկյունից՝ տնտեսության անկում (պայմանավորված բարձր մաքսատուրքերով, գնաճով և այլ հանգամանքներով):
- *ՀՀ ինքնիշխանության սպառնալիք:* Եվ վերջապես, որպես անդամակցության հետևանք, դրան ընդդիմացողները տեսնում են ՀՀ անկախությանը և ժողովրդի ազատությանը սպառնացող վտանգ: Այսինքն՝ ՄՄ/ԵԱՄ-ին անդամակցությունը կհանգեցնի Հայաստանի վրա Ռուսաստանի ճնշման ավելացմանը, Հայաստանը կկորցնի իր ինքնուրույնությունը:

Չանդամակցության հնարավոր բացասական հետևանքները

- *Անվտանգության սպառնալիք:* ՄՄ/ԵԱՄ-ին չանդամակցելու դեպքում ՀՀ-ն կարող է հայտնվել իր գլխավոր ռազմավարական դաշնակցի աջակցությունը կորցնելու սպառնալիքի առջև: Որպես այս ամենի հետևանք կարող է լինել ՌԴ-Ադրբեջան հարաբերությունների սերտացումը, ինչպես նաև նոր պատերազմի սպառնալիքը:
- *Տնտեսություն (էներգետիկ ոլորտ):* ՄՄ/ԵԱՄ-ին չանդամակցության պարագայում ՀՀ-ն կարող է կորուստներ

ունենալ տնտեսական ոլորտում: Քանի որ Ռուսաստանը համարվում է նաև ՀՀ առևտրային գործընկերը, կորուստները վերաբերում են ռուսական շուկայի, ինչպես նաև ներդրումների և տրանսֆերտների կրճատմանը: Էներգետիկ ոլորտում բացասական հետևանքները վերաբերում են էներգակիրների գների աճին, ռուսական ներդրումների կրճատմանը:

Աղյուսակ 8.2.

Անդամակցության-չանդամակցության բացասական հետևանքներին վերաբերող օրինակներ

Անդամակցության բացասական հետևանքներ	Չանդամակցության բացասական հետևանքներ
<p><i>Հայաստանի վրա Ռուսաստանի բացահայտ և գրեհիկ ճնշումը վշտապես կմնա այն թելադրող վեկտորը, որով Ռուսաստանը կորոշի Հայաստանի «բազմավեկտորությունը», եվրոպական սլաքների «քաշը, հասակը և ուղղությունը» («Ալիք» օրաթերթ, «Օրինված սհաթի նստվածքը», 17.09.2013):</i></p>	<p><i>Армении было дано понять, что если она проводит комплементарную политику, то и сама Россия будет проводить такую же. Например, продавать оружие не только Еревану, но и Баку («Ноев Ковчег», «Крутые повороты российско-армянских отношений», 01.10.2013).</i></p> <p><i>Հայաստանին հասկացրին, որ եթե նա կոմպլեմենտար քաղաքականություն է վարում, ուրեմն Ռուսաստանը ևս նման քաղաքականություն կվարի: Օրինակ կսկսի գենք վաճառել ոչ միայն Երևանին, այլև Բաքվին:</i></p>
<p><i>Մաքսային միութեանն անդամակցելով՝ Հայաստանը կը կորցնի իր աշխարհաքաղաքական նշանակությունն ու այնքան կը զրկուի իր ինքնուրոյնութիւնից, որ անգամ կարող է նշանակություն չտալ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին («Մասիս» շաբաթաթերթ, «Մերժ Սարգսեանը պետք է հրաժարուի իր զբաղեցրած պաշտօնից՝ յանուն Հայաստանի», 21.09.2013):</i></p>	<p><i>«У Кремля было множество рычагов давления, и он их использовал. Первый – это угроза новой войны, которую может начать Азербайджан»...</i> («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01-15.10.2013).</p> <p><i>«Կրեմլը ճնշման բազմաթիվ լծակներ ուներ, և նա դա կիրառեց: Առաջինը նոր պատերազմի սպառնալիքն էր, որը կարող է սկսել Ադրբեջանը...»:</i></p>

Անդամակցության բացասական հետևանքներ	Չանդամակցության բացասական հետևանքներ
<p>Մաքսային միութիւնում այժմ գործող մաքսատուրքերով Հայաստանի տնտեսութիւնը անկում է ապրելու, ըստ Բագրատեանի, սա միանշանակ է, քանի որ յայտնուելու ենք մի տարածքում, որտեղ մաքսատուրքերը պէտք է մի քանի անգամ բարձրանան («Մասիս» շաբաթաթերթ, «Պէտք չէր գնալ Եւրոպական միութիւն», 21.09.2013):</p>	<p>«Для Армении – не только экономические потери, но нечто более страшное – ликвидация второго, хотя и не признанного, армянского государства — Нагорного Карабаха, т. е. передача нескольких сот тысяч армян во власть чуждого и с учётом нынешних реалий – агрессивно настроенного и жаждущего реванша государства» («Analitikaua.net», Михаил Белецкий: Армения и Украина между ЕС и ТС, 06.09.2013).</p> <p>«Հայաստանի համար դա կարող է նշանակել ոչ միայն տնտեսական կորուստներ, այլ նաև ավելի սարսափելի բան՝ թեկուզ և չճանաչված պետության լուծարում և մի քանի հարյուր հազար հայերի հանձնում ագրեսիվ տրամադրված և վրեժի ծարավ պետության իշխանությանը»:</p>
<p>Ըստ անոր, այդ առումով չկայ հիմք որևէ լաւատեսութեան, թէ Մաքսային միութեան անդամակցութիւնը Ղարաբաղի հարցը պիտի լուծէ» («Ազատ օր» օրաթերթ, «ՀՅԴ-ն սկզբունքօրէն դէմ չէ Մաքսային միութեան անդամակցութեան, քանի որ ոչինչ յստակ է՝ կ'ըսէ Կիրո Մանոյեան», 22.11.2013):</p>	<p>Вспомним, что совсем недавно Россия продала Азербайджану на один миллиард долларов наступательного вооружения, и поймем, что вот он – мощный рычаг давления на Армению («Ноев Ковчег», «Давид Шахназарян: России понадобилось притормозить движение Армении к Европе», 01.10.2013).</p> <p>Հիշենք, որ բոլորովին վերջերս Ռուսաստանը Ադրբեջանին վաճառեց մեկ միլիարդ դոլար արժողությամբ հարձակողական սպառազինություն և կհասկանանք, որ դա Հայաստանի վրա ճնշում գործադրելու հզոր լծակ է:</p>
<p>«Մէկ բնեռին կանգնած են ահագանգ հնչեցնողները, որոնք վտանգուած կր տեսնեն Հայաստանի անկախութիւնն ու հայ ժողովուրդի ազատութիւնը» («Asbarez», «Autumn Promises: From Moscow to Brussels and Back», 10.09.2013).</p>	
<p>Մաքսային միություն մտնելով՝ մենք արդեն ստեղծում ենք հարաբերությունները Եվրոպայի հետ:</p>	

**«Արժեք-գաղափարները»
ՀՀ ինտեգրացիոն դիսկուրսում**

ՀՀ ինտեգրացիոն քաղաքականության մասին հողվածներում շրջանառվող արժեքներից մեկը *արժանապատվությունն* է: Մեկտեմբերի 3-ին հայտարարված պաշտոնական կուրսին դեմ թեր նշում է, որ *արժանապատիվ* չէ անդամագրվել ՄՄ-ին (վերջինս նույնականացվում է Ռուսաստանի հետ, ուստի ՄՄ մտնելը հավասարեցվում է Ռուսաստանի մաս կազմելուն)¹ այս պարագայում մտավախություն հայտնելով, որ Հայաստանի Հանրապետությունը կկորցնի իր ինքնիշխանությունը: Օրինակ. *«...տեղի ունեցածը փաստացի պետական քաղաքականության եւ արժանապատվության բացակայության խայտառակ դրսևորում է...»* («Մասիս» շաբաթաթերթ, «Տարօրինակ իրավիճակ», 07.09.13):

Ռուսական կողմին առավել հակված թերևս անդրադառնում է *ազգային արժանապատվության* հարցին՝ նշելով, որ ինտեգրացիոն նախագծերի երկրնտրանքը խոցելի է դարձնում ազգային արժանապատվությունը, այնինչ պետք էր ի սկզբանե համագործակցել միայն Ռուսաստանի հետ. *«Ռուսների մոտ էլ գնացինք, ոչ թե գնացինք, այլ տարան... սա՞ էիք ուզում՝ կորցնելով ձեր արժանապատվությունը»*¹: Արժանապատվության ար-

¹ Հատկանշական է, որ մինևույն դատողությունը հանդիպել է Azatutyun.am-ի «Պետք չէր գնալ ԵՄ՝ Ռուսաստանին չզայրացնելու համար» հողվածում, որն արձանագրել ենք 2013թ. սեպտեմբերի 16-20-ը Հայաստանի մեդիա-հրապարակումների ուսումնասիրության ժամանակ: Այս ուսումնասիրության արդյունքներն արտացոլված են «Մաքսային միությանը ՀՀ անդամակցությունը մեդիա-լուսաբանման մեջ» հողվածում (տե՛ս http://www.noravank.am/upload/pdf/6.Arpi_Manusyan_21_DAR_04_2014.pdf): Նշված փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ ՀՀ ինտեգրացիոն թեման Սփյուռքի ԶԼՄ-ում մեծապես արտացոլում է Հայաստանի մեդիա-իրադարձությունները:

ժեքի հետ սերտ կապվող հաջորդ արժեքը, որը շրջանառվում է այս թեմայում, *ինքնիշխանությունն* է: Սրանք դիտարկվում են որպես փոխկապակցված արժեքներ, որոնցից մեկի կորուստը կհանգեցնի մյուսի կորստին: *Ինքնիշխանության* արժեքը, որպես կանոն, հանդիպում է ՄՄ/ԵԱՄ-ին ինտեգրման դեմ աղբյուրների տեքստերում: Հաջորդ կարևոր շրջանառվող հասկացությունը ՀՀ ինտեգրացիոն քաղաքականության համատեքստում *անվտանգությունն* է: Այն հանդիպում է ինչպես ՄՄ/ԵԱՄ-ին ինտեգրվելուն կողմ, այնպես էլ դեմ տեսանկյուն արտահայտող կարծիքներում: Այսպես, օրինակ, կողմնակիցները Ռուսաստանը բնորոշում են որպես ՀՀ *անվտանգության երաշխավոր*: Իսկ պաշտոնական ինտեգրման քաղաքականությանը դեմ աղբյուրները շրջանառում են Ռուսաստանի կողմից Ադրբեյջանին զենք վաճառելու և ռազմական աջակցությունների փաստերը՝ դրանով իսկ կասկածի տակ առնելով ՀՀ-ՌԴ ռազմավարական գործընկերությունը, ՌԴ-ի կողմից ՀՀ անվտանգության երաշխավոր լինելու հարցը և մատնանշելով ՀՀ անվտանգության ռիսկերը:

Ընդհանուր առմամբ, արժեքային դաշտում «անվտանգությունը» բազային, հիմնարար արժեք է, որի կարևորության ու նշանակալիության մասին են վկայում վերջին տարիներին կատարված մի շարք հետազոտություններ: Օրինակ, «Արժեքներ, համոզմունքներ և սոցիալական վարք. դինամիկան և յուրահատկությունը ժամանակակից հայ հասարակությունում» հետազոտության հեղինակները նշում են, որ սոցիալական վարքի վերաբերյալ համոզմունքներում շեշտադրված

են անորոշությունն ու կանոնների երկակիությունը, անվստահությունը սոցիալական ինստիտուտների ու խմբերի նկատմամբ, ինչի արդյունքում ակտիվանում են նաև անվտանգության և ապահովության պահանջմունքները: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է գիտակցել, որ չնայած արժեքները դինամիկ են ու կախված են սոցիալական, տնտեսական, քաղաքական գործոններից, այնուամենայնիվ, դրանք արագ չեն փոխվում, ուստի պետք է ստեղծել համապատասխան հասարակական-գաղափարական, մշակութային միջավայր, որի շրջանակներում կխրախուսվեն «նորմատիվ վարքի» այլ ձևերը¹:

¹ «Արժեքներ, համոզմունքներ և սոցիալական վարք. դինամիկան և յուրահատկությունը ժամանակակից հայ հասարակությունում» հետազոտությունն իրականացրել է ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի հետազոտական խումբը 2011-2013թթ. ընթացքում: Հետազոտության արդյունքներն ամփոփվել են «Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում» գրքում: Գիրքն ամբողջությամբ տե՛ս <https://docs.google.com/file/d/0B6RwRQx-ACtaenU1VnRxTXJvQms/edit?pli=1>

9. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Նախորդ բաժիններում լուսաբանվել են սփյուռքյան մամուլի արձագանքները, որոնք հետևել էին ՀՀ նախագահի 2013թ. սեպտեմբերի 3-ի՝ ՄՄ-ին ինտեգրվելու հայտնի որոշումից անմիջապես հետո: Այս բաժնում կփորձենք համառոտակի վերհանել այն նոր միտումները, որոնք ուրվագծվում են նույն 18 սփյուռքյան լրատվամիջոցներում¹ արդեն 2014 թվականի հունվար-հոկտեմբեր ժամանակահատվածում:

Այս առիթով նախ ամրագրենք, որ ՀՀ ինտեգրացիոն քաղաքականության վերաբերյալ 2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների քննարկումները հիմնականում Մաքսային միությանն անդամակցելու շուրջ էին, իսկ Եվրասիական միությունը դիտվում էր դրան հաջորդող քայլ: Մինչդեռ 2014թ. հունվար-հոկտեմբերի ընթացքում ակտիվացել են ԵԱՄ-ի մասին քննարկումները, և եթե 2013թ. վերջին քառամսյակում այն ներկայացված էր ՋԼՄ-ում գլխավորապես որպես քաղաքական միավորում, ապա 2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին շեշտադրվում է դրա տնտեսական միավորում լինելը: Այդ պատճառով, բնականաբար, առավել հաճախ կիրառվում է Եվրասիական տնտեսական միություն (ԵՏՄ) ձևակերպումը:

Վերոնշյալի համատեքստում փորձենք առանձնացնել մեր տեսանկյունից այն հիմնական դիսկուրսները, որոնք բնորոշ են սփյուռքյան մամուլին ընտրված ժամանակահատվածում:

¹ Ընտրված լրատվամիջոցների ցանկը տե՛ս «Հետազոտության նպատակները և կիրառված խնդիրները» բաժնում:

ՄՄ անդամ երկրներում առկա են տարբեր մոտեցումներ և տարաձայնություններ

Կարող ենք փաստել, որ ՄՄ-ին, ԵԱՄ/ԵՏՄ-ին անդամակցության մասին մոտ մեկ տարի տևող քննարկումներում շարունակում է շրջանառվել անդամ երկրներում առկա տարաձայնությունների խնդիրը. «Նրանցից իրաքանչիւրը սեփական, միւսներից տարբերուող մոտեցումներ ունի Մաքսային միութեանը: Նրանք այն համարում են առաւելապէս տնտեսական համագործակցութեան սերտացման միջոց, այդպիսին է, մասնաւորապէս, Ղազախստանի դիրքորոշումը: Մինչդեռ Վլադիմիր Պուտինի համար սա աւելի շատ այսպէս ասած՝ քաղաքական նախագիծ է» («Մասիս» շաբաթաթերթ, «Թոմաս դե Վաալ, «Հայ հասարակութիւնն այնքան ռուսամէտ տրամադրուածութիւն չունի, որքան քաղաքական էլիտան», 18.01.2014):

ՀՀ և ԼՂՀ անվտանգության խնդիրը

Ինչպէս հայտնի է, անվտանգության գործոնը ՄՄ-ին Հայաստանի անդամակցությանը «կողմ» հիմնավորումների մեջ ամենածանրակշիռն է: Սակայն, եթե ՀՀ-ի պարագայում անվտանգության ապահովման հարցը հստակ է դրված (ՌԴ-ն ՀՀ ռազմավարական դաշնակիցն է, ՀՀ-ն ՀԱՊԿ անդամ է), ապա ԼՂՀ-ի դեպքում խնդիրներ են առաջանում այն պատճառով, որ ԼՂՀ-ն «չճանաչված» պետություն է, և հետևաբար՝ միության անդամները չեն կարող հանդիսանալ նրա անվտանգության երաշխավոր: Այս առիթով ակտուլացվել է ՄՄ-ին ԼՂՀ միանալու հարցը:

Լավատեսական դիրքորոշումներում այսպիսի հնարավորության համար որպես նախադեպ է ներկայացվում Հարավային Օսիայի և Աբխազիայի օրինակը, որոնց հետ 2013թ. դեկտեմբերի 22-ին Ռուսաստանը համաձայնագիր ստորագրեց, համաձայն որոնց՝ վերացվում էին նրանց միջև մաքսային սահմանները:

Այսօրինակ ելքի դեպքում ՄՄ տնտեսական միավորմանը ԼՂՀ անդամակցումը կենթադրի ԼՂՀ անկախության անուղղակի ճանաչում, ինչն էլ դրական հիմնավորման առիթ է ծառայում ՄՄ-ին անդամակցության կողմնակիցների համար: Սակայն քիչ չեն նաև ոչ լավատեսական քննարկումները, ըստ որոնց՝ միությունից ԼՂՀ-ի դուրս մնալը՝ ՀՀ-ի ՄՄ անդամ լինելու պայմաններում, կհանգեցնի ՀՀ և ԼՂՀ սահմանին մաքսակետի տեղադրմանը՝ դրանից բխող հետևանքներով: Չնայած պաշտոնական աղբյուրները հերքում են մաքսակետերի տեղադրման մասին լուրերը, այնուամենայնիվ, սա մնում է տագնապային թեմաներից առանցքայինը:

Տնտեսական հարցեր

Տնտեսական ոլորտին առնչվող դիսկուրսը, ինչպես 2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարված դիտարկումների ժամանակ, հիմնականում ընթացել է հետևյալ խնդիրների շուրջ.

- ՄՄ (ԵՏՄ) ընձեռած տնտեսական հնարավորությունները
- ՀՀ տնտեսական հնարավոր առաջընթացը (հիմնականում կապված տրանսպորտային և էներգետիկ ոլորտների հետ)
- ՀՀ տնտեսական զարգացման հեռանկարների վերաբերյալ թերահավատությունը

- ՀՀ տնտեսական ինքնուրույնության կորուստն իր բացասական հետևանքներով:

Ընդհանուր առմամբ, տնտեսական խնդիրներին առնչվող քննարկումներն այժմ առավել մտահոգ երանգներ են ստացել նույնիսկ ինտեգրացիոն գործընթացի «կողմնակիցների» կարծիքներում: Մտահոգությունները վերաբերում են ոչ միայն ներքին տնտեսական հարցերին (*«Ընդ որում, թղթի վրայ տնտեսությունը կարող է նույնիսկ մեկ-երկու տոկոսով աճել (համատարած թանկացումների հաշուին), բայց որ բնակչության կենսամակարդակը կտրուկ իջնելու է, դա հաստատ»*), այլ նաև արտաքին՝ ՀՀ տնտեսական համագործակցության հեռանկարներին: Այսինքն՝ ՄՄ-ին անդամակցության հետևանքով Հայաստանը կարող է զրկվել տնտեսական քաղաքականության ինքնուրույնությունից: Այս առումով բնորոշ է հետևյալ մեկնաբանությունը՝ հիմնված ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Գարեգին Մելքոնյանի հայտարարության վրա, թե՛ *«Հայաստանը չի կարողանալ տնտեսական պայմանագրեր ստորագրել այլ երկրների հետ մինչև Մաքսային միութեան գործադիր կոմիտեն հաւանութիւն չտա»*, և *«...այսուհետ Եւրամիութեան հետ բանակցութիւնները Հայաստանի անունից վարելու է Մաքսային միութիւնը»* («Մասիս» շաբաթերթ, 08.02.2014):

Տնտեսության զարգացման քննարկումներում (թե՛ էներգետիկ, թե՛ տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտներում), ինչպես նախկինում, այնպես էլ այժմ գերակշռում են դրական հեռանկարի հնարավորության մատնանշումները կամ

«Եթե»-ներով ձևակերպումները. «*եթե խոստացված չափով ներդրումներ լինեն*», «*եթե Հայաստանը դուրս գա տրանսպորտային շրջափակումից*» և այլն. «...*Мне кажется, со вступлением в Таможенный союз она получит шанс встать на рельсы устойчивого развития и роста. С помощью инвестиций, с помощью технологического обмена, через решение транспортной проблемы. Появляются перспективы крупных инвестиций в электроэнергетику, в строительство нового атомного энергоблока, нового энергоблока на Разданской ТЭЦ. Эти инвестиции гарантируют не только экономическую стабильность, они могут превратить Армению в страну, экспортирующую электроэнергию в соседние страны, и прежде всего в Иран*» («Ноев Ковчег», Таможенный союз поможет Армении выйти из транспортного тупика, № 4 (234) март (1–15) 2014г.)¹:

Նոր թեմաներ ՀՀ ինտեգրացիոն գործընթացների դիսկուրսում

2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում տեղի ունեցած մի շարք կարևոր իրադարձություններ ևս դարձան լուսաբանման թեմաներ՝ նպաստելով ինտեգրացիոն գործընթացների շուրջ քննարկումների աշխուժացմանը և մտահոգությունների սրացմանը: Առանձնացնենք դրանցից մի քանիսը.

¹ «Ինձ թվում է՝ մտնելով ՄՄ, նա կստանա հնարավորություն կանգնել կայուն զարգացման և աճի ուղու վրա: Ներդրումների, տեխնոլոգիական փոխանակման օգնությամբ, տրանսպորտային խնդիրների լուծման միջոցով: Հեռանկարներ կան էլեկտրաէներգետիկայի ոլորտում խոշոր ներդրումների, նոր ատոմային էներգաբլոկի, ՀրազդանԶԷԿ-ի նոր էներգաբլոկի կառուցման: Այդ ներդրումները երաշխավորում են ոչ միայն տնտեսական կայունություն, դրանք կարող են Հայաստանը վերածել հարևան երկրներին և առաջին հերթին Իրանին էլեկտրաէներգիա մատակարարող երկրի» («Ноев Ковчег», Մաքսային միությունը կօգնի Հայաստանին դուրս գալ տրանսպորտային փակուղուց, № 4 (234) մարտ (1–15) 2014):

«ՄՄ-ին միանալու ճանապարհային քարտեզը»¹

ՀՀ կառավարությունը 2014թ. փետրվարի 3-ին հրապարակել է ՄՄ-ին Հայաստանի միանալու «ճանապարհային քարտեզը» հայերեն լեզվով, որը ստորագրվել էր դեռևս 2013թ. դեկտեմբերի 24-ին Մոսկվայում, Եվրասիական ինտեգրացիոն միության նիստում: *«Հետաքրքրականն այն է, թե մինչև փաստաթուղթի ստորագրումը տեղադրուած հաղորդագրութեան մէջ, ճամբու քարտէսի 126 կէտերէն, որոնք պէտք է կատարուին, 111-ը իրականացուած են, իսկ 15-ը կ'ընդգրկուին Մաքսային միութեան եւ Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի միանալու բուն փաստաթուղթին մէջ: Մինչեւ Ասթանայ, յստակ է ճամբու քարտէսը... ետքն է հարցականը»* («Հայրենիք», «Մաքսային միութեան մուտքի կամ... ճամբու անորոշ քարտէսի սեմին», 08.05.14):

«Իլհամ Ալիևի նամակը»

Մայիսի 29-ին Աստանայում կայացած Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի նիստին Նազարբանի կողմից Ադրբեջանի նախագահ Իլհամի Ալիևի նամակի ընթերցումը մտահոգությունների տեղիք տվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքյան մեղիա-դիսկուրսում². *«Անակնկալ մը չէր Մայիս 29ին, Ղազախստանի մայրաքաղաք՝ Ասթանայի մէջ, Եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհուրդի նիստին ընթացքին, հիւրընկալ երկրի նախագահ Նուրսուլլան Նազարպայեւի յիշե-*

¹ http://arka.am/am/news/politics/avanesyanherqum138_/#sthash.QtvFIYo6.dpuf

² Մայիսի 29-ին Աստանայում կազմակերպված Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի նիստին Նազարբանը Ադրբեջանի նախագահ Իլհամի Ալիևի նամակի մասին է հիշատակել, որտեղ Հայաստանին միայն միջազգայնորեն ճանաչված սահմաններով Եվրասիական միություն ընդունելու կոչ է արվում:

ցուցածը, մատնանշածը, կարդացած նամակը՝ յանձին Ատրպեյ-ճանի նախագահ Իլհամ Ալիևի գրչին եւ այդ ալ բնականաբար Արցախի հիմնահարցին առնչութեամբ: Նոյնինքն Նազարպայեւ այս գծով իր դիրքորոշումը յայտնած էր, անցեալ տարեվերջին, երբ Մոսկուայի մէջ կ'առնուէին առաջին քայլերը, ստեղծելու Մաքսային միութեան ճամբու քարտէսը: Դեռ աւելին, նախքան այս միութիւնը ստեղծելու գաղափարը, դեռ քանի մը ամիս առաջ ալ, Պաքուի մէջ կայացած թրքալեզու պետութիւններու համագործակցութեան խորհուրդի ժողովին, միեւնոյն գաղափարն է որ արտայայտուեցաւ Նազարպայեւի կողմէ» («Հայրենիք» շաբաթաթերթ, «Ասթանայէն...ազդանշան», 04.06.2014):

«Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցները»

Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հնարավոր ազդեցությունը ՄՄ անդամ երկրների, հատկապէս Հայաստանի վրա նույնպէս մտահոգիչ թեմա է. «Մէկ բան ակնյայտ է կարճաժամկէտ տեսանկիւնից: Այսօր ողջ արեւմտեան աշխարհը դուրս է եկել Ռուսաստանի դէմ եւ կիրառում է պատժամիջոցներ: Նաւթի գները ընկնում են, ռուսական ռուբլին անշեղօրէն արժեզրկւում է: Այս պայմաններում Հայաստանին ԵՏՄ-ում դժուար օրեր են սպասուում» («Ազդակ», «Չարեաց փոքրագոյնը», 13.10.2014):

«ՀՀ-Ուկրաինա՝ համեմատականներ»

ԼՂՀ հակամարտության և ՀՀ, ԼՂՀ անվտանգության առանցքային հարցը նոր հուն է մտնում հատկապէս 2014–ին Ուկրաինայում տեղի ունեցող դեպքերի համատեքստում: Քննարկման

առիթ են Հայաստան–Ուկրաինա համեմատությունները, Հայաստանում ուկրաինական նախադեպի կրկնվելու հավանականության հարցերը և դրա հետևանքները, ինչպես նաև աշխարհաքաղաքական մեծ խաղացողների անփույթ քաղաքականությունը:

Հայաստանի և Ուկրաինայի միջև համեմատականները պայմանավորված են նրանով, որ նույն ժամանակահատվածում երկու երկրներն էլ կանգնած էին «Եվրասիական միություն¹»-ին, թե՛ Եվրամիություն» աշխարհաքաղաքական երկրնորանքի առաջ: Եթե արժեքային առումով ցանկալի է համարվում եվրոպական ինտեգրացիան, ապա տնտեսական և անվտանգության առումներով մատնանշվում է, որ երկու երկրներն էլ կախված են Ռուսաստանից: Այս համատեքստում հաճախ քննարկվում են «հնարավոր է արդյոք ուկրաինական սցենարի զարգացումը Հայաստանում, կարո՞ղ է այն հանգեցնել իշխանափոխության, և ի՞նչ հետևանքներ կունենա այդ ամենը Հայաստանի համար» հարցերը: Հետաքրքրական է, որ «*Ноев Ковчег*»-ը Սփյուռքի ԶԼՄ-ից ամենաշատն է անդրադառնում այս թեմաներին. մասնավորապես 2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին առկա էին մի շարք հոդվածներ. «*Майдан*» в Армении невозможен, но власти ослабляться не приходится», «*Угрожают ли Армении попытки досрочной смены власти?*», «*Киевский сценарий для Армении неприемлем*», «*Грозит ли Армении свой «Майдан», или чем олигарх Гагик Царукян хуже олигарха Бидзины Иванишвили?*»¹ և այլն:

¹ «Մայդան» Հայաստանում հնարավոր չէ, սակայն իշխանությունը չի թուլանում», «Սպառնում է արդյոք Հայաստանին վաղաժամ իշխանափոխության փորձ», «Կիևյան սցենարը Հայաստանի համար անընդունելի է», «Հայաստանին սպառնում է արդյոք սեփական «Մայդանը» կամ ինչո՞վ է օլիգարխ Գագիկ Ծառուկյանն ավելի վատ օլիգարխ Բիձինա Իվանիշվիլուց»:

«Ազդակ» օրաթերթը ևս անդրադառնում է այս համեմատությունը. *«Որքան Ուքրաինան չէր կարող պատկերացնել, թե մինչև ո՛ր կարող է հասնել ռուսական արջի կատաղությունը, նոյնքան էլ չէր կարող պատկերացնել, թե մինչև որտեղ կարող է հասնել եւրոպական աղուէսի սառնասրտությունը: Եւ այս խորապատկերում հարց է առաջանում, թե ի՞նչ էր լինելու Հայաստանի հետ, եթէ այն եւս որդեգրէր Ռուսաստանից ապահարգանի՝ ուքրաինական կտրուկ ճանապարհը: Խնդիրը բացարձակապէս Ռուսաստանի հպատակը դառնալու՝ ներկայիս քաղաքական ուղեգիծն արդարացնելը չէ: Ուքրաինայի ներկայիս վերաբաժանումը աւելորդ անգամ հաստատում է, որ աշխարհը թեւակոխել է մի դարաշրջան, որտեղ հիմնական խնդիրը, յատկապէս՝ փոքր ու միջին երկրների համար, դարձել է անվտանգութեան ապահովումը, արտաքին մարտահրաւերները չէզոքացնելը՝ սեփական միջոցների հզօրացման եւ զարգացման միջոցով»* («Ազդակ», «Ո՞վ է սերտելու Ուքրաինական տխուր դասերը», 16.09.14):

«Արևմուտքի քաղաքականության քննադատություն»

2014թ. ընթացքում նկատելի է դառնում Արևմուտքի քաղաքականության քննադատությունը՝ ՀՀ-ի՝ ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի չկայացման և ՄՄ-ին, ԵՏՄ-ին միանալու որոշման հարցում: ԵՏՄ-ին միանալու Հայաստանի որոշումը պայմանավորվում է Արևմուտքի կողմից ՀՀ-ի համար առանցքային կետերի երաշխավորման բացակայությամբ (անվտանգություն, թուրք-ադրբեջանական շրջափակում, տնտեսական հարաբերություններ): Հատկանշական է, որ այսպիսի քննադատությունները ՀՀ ինտեգրման գործընթացների շուրջ Արևմուտքում գոր-

ծող Մփյուռքի հանրային գործիչների և փորձագետների հավասարակշռված մոտեցումների մասին վկայությունն են: Որպես բնորոշ օրինակ նշենք 2014թ. հոկտեմբերի 10-ին Եվրասիական տնտեսական միությանը միանալու պայմանագրի ստորագրումից հետո www.TheCaliforniaCourier.com-ի խմբագիր Հարութ Սասունյանի հոդվածը¹: Այստեղ նա ՌԴ-ի հետ ՀՀ հարաբերությունները դիտարկում է եղած *«աշխարհառազմավարական և տնտեսական շահերի»* ու *«խրոդությունների»* համատեքստում՝ նշելով, որ առկա են «ԵՏՄ-ին Հայաստանի միանալու անհերքելի պատճառներ», և ավելացնելով. *«սակայն ոչ ոք չպետք է եզրակացնի, որ Երևանը պետք է մնա բացառապես Ռուսաստանի տնտեսական գոտում»*: Միաժամանակ, Արևմուտքին կոչ է անում հարկային արտոնություններով և այլ խթաններով աջակցել ՀՀ-ին՝ նվազեցնելու իր կախվածությունը Ռուսաստանից. *«Միևնույն ժամանակ, շատ ավելի արդյունավետ կլինի, եթե արևմտյան երկրները, մասնավորապես՝ Միացյալ Նահանգները, փոխանակ հորդորելու Հայաստանի ղեկավարներին խզելու խիստ կարևոր հարաբերությունները Ռուսաստանի հետ, հարկային արտոնություններ և այլ խթաններ տրամադրեն իրենց ներդրողներին Հայաստանում՝ դրանով իսկ նվազեցնելով Երևանի կախվածությունը Ռուսաստանից: Նմանապես, Հայաստանին ուղղված ամերիկյան քննադատությունն ու նախազգուշացումները Իրանի հետ նրա ունեցած առևտրային կապերի*

¹ «Արևմուտքը պետք է հատուկ արտոնություններ շնորհի Հայաստանին՝ Ռուսաստանի հետ նրա կապերը դատապարտելու փոխարեն» հոդվածը տե՛ս <http://asbarez.com/127820/the-west-must-offer-armenia-incentives-rather-than-decry-its-ties-with-russia/>: Հայերեն թարգմանությամբ տե՛ս <http://www.azatutyun.am/content/blog/26638208.html>

համար, պարզապես անիմաստ հայտարարություններ են: Ավելի օգտակար կլինեն, եթե Օբամայի վարչակազմը քաջությունն ունենար ճնշում գործադրելու Թուրքիայի և Ադրբեջանի վրա՝ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության համատեղ շրջափակումը վերացնելու համար, որը շարունակվում է ավելի քան 20 տարի» («Asbarez», «The West Must Offer Armenia Incentives Rather Than Decry Its Ties with Russia», 14.10.14).

ԵՏՄ-ին անդամակցության ստորագրումը

Ինչպես հայտնի է, 2014թ. հոկտեմբերի 10-ին Մինսկում՝ Եվրասիական բարձրագույն տնտեսական խորհրդի նիստի ընթացքում, ՀՀ նախագահը ստորագրեց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի միանալու մասին պայմանագիրը, որը ենթակա է վավերացման և կգործի 2015թ. հունվարի 1-ից: Անդրադառնալով այս իրադարձությանը՝ Սփյուռքի ԶԼՄ-ում խոսվում է Ռուսաստանից Հայաստանի կախվածության և Ռուսաստանին «ոչ» ասելու անկարողության մասին. «Եւրասիական տնտեսական միութեանը (ԵՏՄ) Հայաստանի անդամակցութիւնը պէտք է դիտարկել նախ եւ առաջ հետեւեալ տեսանկիւնից՝ կարո՞ղ էր Սերժ Սարգսեանը «ոչ» ասել Ռուսաստանի, աւելի ճիշդ՝ Վլատիմիր Փութինի այս նախաձեռնութեանը: Եթէ «այո», ապա Հայաստանը ի՞նչ գին պիտի վճարէր այդ «ոչ»-ի համար: Ի՞նչ է սպասուում Հայաստանին ԵՏՄ-ում: Այստեղ հարցերն աւելի շատ են, քան պատասխանները: Ի՞նչ է շահելու եւ ի՞նչ է կորցնելու Հայաստանը, եթէ ԵՏՄ-ն կայանայ: Այս հարցն էլ չունի միանշանակ պատասխան: Բայց այստեղ էլ հարցադրումը տեղին չէ: Պէտք է հարցնել՝ ի՞նչ էր շահելու Հայաստանը

և ի՞նչ էր կորցնելու, եթե հրաժարուէր ԵՏՄ-ին անդամակցելուց: Ենթադրենք, թէ Արցախի հարցում Ռուսաստանը չէր որդեգրի ազրպէյճանամէտ դիրքորոշում: Իսկ ինչպէ՞ս էինք դիմագրաւելու տնտեսական հարուածներին: Ի՞նչ գնով էր Ռուսաստանը Հայաստանին կազ վաճառելու, եթէ մենք հրաժարուէինք ԵՏՄ-ից: Հայաստանում հակառուս տրամադրութիւն ունեցողները առաջարկում են՝ կազ կը գնէինք Իրանից: Լաւ, եթէ այդքան հեշտ է Իրանից էժան կազ գնելը, ապա ինչո՞ւ մինչեւ հիմա չէինք գնում: Հայաստանի համախառն ներքին արդիւնքի քսան առ հարիւրը ձեւաւորում է Ռուսաստանում: Տարեկան Հայաստան է մտնում շուրջ երկու միլիարտ տոլար գումար դրամական փոխանցումների ձեւով, որից 85 տոկոսը գալիս է Ռուսաստանից, իսկ միւս 15 տոկոսը՝ միւս երկրներից: Այսպէս կարելի է շարունակել եւ թուերով ցոյց տալ, թէ ինչպիսի մեծ կախում ունի Հայաստանի տնտեսութիւնը Ռուսաստանից» («Ազդակ», «Զարեաց փոքրագոյնը», 13.10.2014):

«ՄՄ-Թուրքիա համագործակցության վտանգները»

ՄՄ-Թուրքիա կապերի շուրջ մտահոգություններն առարկայական դարձան 2014թ. հուլիսից, երբ ՌԴ և Թուրքիայի Էկոնոմիկայի նախարարները քննարկեցին հնարավոր համագործակցության ձևաչափը: Այն ներառում էր Թուրքիայի և Մաքսայիին միության միջև ազատ առևտրի գոտու ձևավորման հնարավորությունը: Այս հայտարարությունից հետո ակտիվացան քննարկումները՝ կապված ՀՀ-ի համար նման համագործակցության բացասական հետևանքների հետ. «Հայաստանի համար բոլորովին ցանկալի չէ նման զարգացումը, քանի որ դա կբերի

Ռուսաստանի և Թուրքիայի տնտեսական շահերի էլ ավելի սերտաճման: Հիմա մոտավորապես 20 միլիարդ դոլար է այդ երկու երկրների առևտրաշրջանառությունը, բայց նրանք մտադիր են մինչև 100 միլիարդի հասցնել այն. սա հսկայական թիվ է՝ իր բոլոր քաղաքական հետևանքներով» («Asbarez», Turkey-Eurasian Union Partnership, «Will Hurt Armenia», 22.07.2014).

«Ադրբեջանի հնարավոր անդամակցությունը ՄՄ-ին»

Բացի Թուրքիայի հետ համագործակցությունից, առկա է նաև Ադրբեջանի կողմից ՄՄ-ին անդամակցության հնարավորությունը, ինչի մասին ՌԴ Սփյուռքի մամուլն է արձագանքում՝ ներկայացնելով այն ռուսական աղբյուրների կողմից դրական մեկնաբանություններով. *«Одновременное вхождение Азербайджана и Армении в ЕАЭС означает не только новый интеграционный уровень союза, но и нормализацию отношений между Азербайджаном и Арменией, а также обеспечение стабильности на Южном Кавказе», – такое мнение высказал директор Института ЕвразЭС Владимир Лепехин. Некоторое время назад в ходе визита в Баку о гипотетической перспективе присоединения прикаспийской республики к ЕАЭС упомянул министр экономического развития России Алексей Улюкаев, а относительно Турции аналогичное допущение делал тот же Нурсултан Назарбаев»¹*

¹ Հայաստանի և Ադրբեջանի միաժամանակյա մուտքը Եվրասիական միություն նշանակում է ոչ միայն միության նոր մակարդակ, այլ նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորում, ինչպես նաև Հարավային Կովկասում կայունության ապահովում: Այսպիսի կարծիք է հայտնել ԵվրԱզԵՍ ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Լեպեխինը: Ավելի վաղ Բաքու կատարած այցի ժամանակ մերձկասպյան հանրապետության ԵՏՄ-ին միանալու աշխարհաքաղաքական հեռանկարի մասին հիշատակել էր Ռուսաստանի տնտեսական զարգացման նախարար Ալեքսեյ Ուլյուկաևը: Թուրքիայի վերաբերյալ նմանատիպ վարկած առաջ է քաշել Նուրսուլթան Նազարբաևը:

(«Ноев Ковчег», «Евразийские интеграционные перспективы Армении и карабахский вопрос», 1-15.07.2014).

«ՀՀ-Մփյուռք հարաբերությունները»

2014–ին, ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի, նկատվել են քննարկումներ Եվրասիական ինտեգրման համատեքստում ՀՀ-Մփյուռք հարաբերությունների ապագայի վերաբերյալ, որոնցում նշվում են հնարավոր ռիսկերը. *«Հայաստանի Հանրապետությունը Մաքսային միութեանը միանալով հոգեբանական անջրպետ է ստեղծելու իր եւ Մփիւռքի միջեւ: Անկասկած, Հայաստանի նման երկրի համար, միանալը տարածաշրջանային որեւէ միութեան, անհրաժեշտ է: Բայց ո՞նց, ե՞րբ, ի՞նչ գնով եւ ո՞ր միութեանը, դա ազգային-ժողովրդական ընտրութեան հարց է»* («Ալիք», «Հայաստանի համաձայնությունը, անդամակցելու Եւրասիական մաքսային միութեան՝ եւ նրա հասարակա-հոգեբանական անդրադարձը», 05.01.14):

Հասարակական կարծիք

Դեռևս 2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում կարելի էր հանդիպել որոշ դատողությունների հասարակական կարծիքի վերաբերյալ՝ այն իմաստով, թե արդյոք մեր հասարակությունը «եվրոպամետ է», թե «ռուսամետ»: Իսկ 2014թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արդեն խոսվում է հասարակության կարծիքի ձևավորման անհրաժեշտության և հնարավոր ներազդման մեթոդների մասին: Այսպես, թե՛ Եվրասիականության, թե՛ Եվրամիությանն ինտեգրման կողմնակիցները միմյանց մեղադրում են Հայաստանում հասարակական կարծիքի վրա ներազդման աշխատանքներ վարելու մեջ՝ միաժա-

մանակ կարևորություն տալով հասարակական կարծիքի ձևավորման դերին. «ՀԱՊԿ-ի կազմակերպած «կլոր սեղանի» մասնակիցները եկել են այն եզրակացություն, որ Ռուսաստանի արեւմտեան հակառակորդները միջազգային կառույցներով դիմում են մանիպուլացիաների, ակտիւօրէն ազդում են ինտերնետային օգտատէրերի վրայ, հասարակական կազմակերպութիւնների ու լրատւամիջոցների միջոցով ներկայացնում են հասարակական տրամադրութիւնների խեղաթիւրած պատկեր: Նրանք ՀԱՊԿ-ին խորհուրդ են տւել զբաղւել «հակաքարոզչութեան գործիքների մշակմամբ», իսկ Ռուսաստանին խորհուրդ են տւել «չքաշւել՝ հարեւան երկրների ներքաղաքական կեանքի վրայ ազդելու համար» («Ալիք», ՀԱՊԿ-ը հակազդելու է ԱՊՀ-ի երկրներում Արեւմուտքի կողմից գունաւոր յեղափոխութիւններին» նոր փորձերին», 04.01. 2014):

ԶԼՄ կողմնորոշումների պահպանման վերաբերյալ

Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ լրատվամիջոցները պահպանել են իրենց դիմագիծն ինտեգրացիոն գործընթացների լուսաբանման հարցում: Ե՛վ նախորդ հետազոտական ժամանակահատվածում, և՛ այժմ սեփական դիրքորոշումների արտահայտման միտումով առանձնացել են մի քանի լրատվամիջոցներ: Հատկապէս կարող ենք նշել «*Ноев Ковчег*»-ը (ՌԴ), որը հետևողականորեն լուսաբանում է ՀՀ արտաքին քաղաքականության հետ կապված բոլոր իրադարձությունները: Հանդես գալով եվրասիական ինտեգրացիային «կողմ» դիրքից՝ «*Ноев Ковчег*»-ում շեշտադրվում է ՄՄ-ին և ԵՏՄ-ին ինտեգրման արդյունքում ՀՀ զարգացման հեռանկարները:

«Asbarez» թերթում (ԱՄՆ) ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների թեմայով հանդիպել են հստակ դիրքորոշումներ արտահայտող վերլուծական հոդվածներ, որոնցում ՄՄ-ին և ԵՏՄ-ին անդամակցությունը դիտվում է հնարավոր վտանգների տեսանկյունից: «Մասիս» շաբաթաթերթում (ԱՄՆ) և «Ալիք» օրաթերթում (Իրան) ևս նկատելի է եվրոպական ինտեգրացիայի կողմնորոշման դիսկուրսը: «Մասիս» շաբաթաթերթում, ի տարբերություն «Asbarez» օրաթերթի, առավել ցայտուն է երևում ՄՄ-ին և ԵՏՄ-ին ինտեգրման «դեմ» տեսանկյունը: «Ալիք»-ում առկա է ընդհանուր մտահոգություն ռուսական ինտեգրացիայի արդյունքում ՀՀ ինքնիշխանության կորստի և ՀՀ-ի համար բացասական այլ հետևանքների վերաբերյալ:

«Nouvelle d'Armenie»-ում ՀՀ ինտեգրացիոն գործընթացների շուրջ թեմատիկ իդեոլոգեմների հանդեպ երանգավորումները և դիրքորոշումները հիմնականում հավասարակշռված են:

«Ազատ օր»-ում հետազոտական նախորդ շրջանի համեմատ առավել հաճախ են հանդիպել պաշտոնական բնույթի նյութեր (մինչդեռ 2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կային նաև վերլուծական հոդվածներ, ինչպես նաև Հայաստանում գործող ՀՅԴ ներկայացուցիչների տեսակետներն արտահայտող հոդվածներ):

«Gibrahayer» ամսագրում նշված ժամանակահատվածում այս թեմայով սեփական վերլուծական նյութեր չեն հանդիպել: «Ազդակ» օրաթերթը լուսաբանել է ՀՀ ինտեգրացիոն գործընթացի բոլոր նշանակալի իրադարձությունները, առկա են նաև վերլուծական հոդվածներ: «Արձագանգ»-ի հոդվածներն այս թեմայի

վերաբերյալ հիմնականում արտահայտում են ՀՀ ՀՅԴ կուսակցության դիրքորոշումը (տեղ են գտել ՀՅԴ անդամների հարցազրույցներ ինտեգրացիոն քաղաքականության վերաբերյալ): «Ախալցխայի տեղեկատվական կայք»-ում զետեղվել են հոդվածներ, որոնք վերաբերում են Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությանը և այս համատեքստում՝ հայ-վրացական հետագա համագործակցությանը:

«Արաքս» շաբաթաթերթում նախորդ հետազոտական ժամանակահատվածում (2013թ. սեպտեմբեր-դեկտեմբեր) թեմային առնչվող սեփական վերլուծական հոդվածներում արտահայտվում է մտահոգություն Հայաստանի ապագայի և հնարավոր զարգացումների համար, մատնանշվում է ռուսական ինտեգրացիայի պարտադրված լինելը: Այս թեմայի շրջանակներում առկա են նաև Հայաստանի ԶԼՄ-ից վերատպված նյութեր: «Գանձասար» շաբաթաթերթում գերակշռում են մտահոգ երանգավորումը և Հայաստանի՝ որպես սեփական երկրի ու ՀՀ կառավարության հանդեպ ինքնանույնականացման բարձր աստիճանը, ինչն արտահայտվում է նաև հաճախ հանդիպող «մեր երկիրը», «Հայրենի մեր կառավարությունը» ձևակերպումներում: «Օրեր»,-ը «Լույս»-ը, «Հորիզոն»-ը հստակ կողմնորոշում չունեն ՀՀ ինտեգրացիոն գործընթացների վերաբերյալ: Այս լրատվամիջոցներում հիմնականում հանդիպում է պաշտոնական լրահոս: «Երկրամաս»-ը, «Analitikaua.net»-ն առավելապես վերատպում են հայաստանյան լրահոսը և տեղի լրատվական դաշտի նյութերը, սակավ դեպքերում են սեփական վերլուծական հոդվածներով հանդես գալիս:

10. ՍՓՅՈՒՌՔԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ՄՄ/ԵԱՄ-ԻՆ ՀՀ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Այս բաժնում ներկայացվում են ՀՀ ինտեգրացիոն քաղաքականության վերաբերյալ Մփյուռքի այն 20 փորձագետների կարծիքները և դրանց վերլուծությունը, որոնք պատասխանել են մեր հարցերին¹: Ինչպես հետևում է ստացված պատասխաններից, խնդրի վերաբերյալ արտահայտված դիրքորոշումներում գործոն է հանդիսանում փորձագետների բնակության երկիրը: Մասնավորապես, իրենց կարծիքներով երբեմն առանձնանում են ռուսաստանաբնակ/ՌԴ քաղաքացի հայ փորձագետները, որոնք կազմել են հարցվողների կեսը՝ 10 հոգի: Մնացյալ փորձագետները ներկայացնում են ԱՄՆ-ը, Արգենտինան, Բելգիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Ուկրաինան: Ելնելով այս հանգամանքից՝ ինտեգրացիոն հարցերի շուրջ ՌԴ փորձագետների դիրքորոշումները դիտարկվել են առանձնակի՝ բնակության երկրի հետ առնչություն ունենալու համատեքստում:

Հարցաթերթիկում փորձագետներին խնդրել էինք առաջին հերթին գնահատել իրենց տեղեկացվածության աստիճանը ՀՀ արտաքին քաղաքական անցուղարձի վերաբերյալ: Համաձայն ստացված պատասխանների՝ հարցված 20 փորձագետների մեծ մասը՝ 16 հոգի, իրեն լիովին կամ ավելի շուտ տեղեկացված է

¹ Ընդհանուր առմամբ, հարցաթերթիկներն առաքվել են ավելի քան 450 հասցեով, մանրամասները տե՛ս մեթոդաբանության բաժնում:

համարում, իսկ 4 հոգի ավելի շուտ տեղեկացված չի համարում: Որպես տեղեկատվության հիմնական՝ գլխավոր աղբյուր փորձագետներից 8-ը նշել են հայկական ՁԼՄ-ն (տե՛ս *Աղյուսակ 10.1*): Երկրորդ տեղում են գործընկերական, անձնական կապերը Հայաստանի հետ՝ 5 հոգի, 3-ական հոգի՝ ԱՊՀ երկրների ՁԼՄ-ից և արևմտյան ՁԼՄ-ից:

Աղյուսակ 10.1.

«ՀՀ արտաքին քաղաքական անցուղարձի վերաբերյալ տեղեկացվածությունն ըստ բնակության երկրի»

Տեղեկատվության աղբյուրներ	Բնակություն		Ընդհանուր
	ՌԴ	Այլ	
Հայկական ՁԼՄ-ից	4	4	8
Գործընկերական կամ անձնական կապերի միջոցով	2	3	5
ԱՊՀ երկրների ՁԼՄ-ից	3	0	3
Արևմտյան ՁԼՄ-ից	0	3	3
Այլ աղբյուրներ	1	0	1
Ընդհանուր	10	10	20

***ՄՄ/ԵԱՄ-ի, ԵՄ-ի հետ համագործակցություն.
նպատակներ և խորություն***

Փորձագետներն իրենց կարծիքն են հայտնել նաև Սփյուռքի ՁԼՄ ուսումնասիրության ընթացքում վերհանված մի շարք էական խնդիրների շուրջ: Ինչպես հետևում է ստացված պատասխաններից, «ՀՀ, ԼՂՀ անվտանգության» և «ՀՀ, ԼՂՀ բանակի մարտունակության» ապահովման առումով փորձագետներն ավելի հաճախ արդյունավետ են համարում ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունը՝ համապատասխանաբար 6 և 7 հոգի (տե՛ս *Աղյուսակ 10.2, Աղյուսակ 10.3*):

Աղյուսակ 10.2.

ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության ապահովում.
*n*² ը միջազգային սուբյեկտի հետ համագործակցությունը
 կարող է լինել առավել արդյունավետ

Կառույցներ	Բնակություն		Ընդհանուր
	ՌԴ	Այլ	
ՀԱՊԿ ¹	3	3	6
ՀՀ հարևան երկրներ	2	2	4
ՄՄ/ԵԱՄ ²	2	1	3
Կոմպլեմենտար քաղաքականությամբ	1	2	3
Ռուսաստան և այլ տարածաշրջանային երկրներ	1	1	2
ԵՄ	0	1	1
Ընդամենը	9	10	19

Աղյուսակ 10.3.

ՀՀ և ԼՂՀ բանակի մարտունակություն.
*n*² ը միջազգային սուբյեկտի հետ համագործակցությունը
 կարող է լինել առավել արդյունավետ

Կառույցներ	Բնակություն		Ընդհանուր
	ՌԴ	Այլ	
ՀԱՊԿ	4	3	7
ՀՀ-ն ինքնուրույն կարող է/պետք է լուծի խնդիրը	2	2	4
ՄՄ/ԵԱՄ	2	1	3
ՆԱՏՕ ³	0	1	1
ՀՀ հարևան երկրներ	1	0	1
Կոմպլեմենտար քաղաքականությամբ	0	1	1
Ռուսաստան և այլ տարածաշրջանային երկրներ	1	0	1
Միջազգային այլ կառույցներ	0	1	1
Այլ պատ.	0	1	1
Ընդամենը	10	10	20

¹ Հավաքական անվտանգության մասին պայմանագիրը ստորագրվել է 1992թ.: ՀԱՊԿ անդամ երկրներն են ՀՀ-ն, Բելառուսը, Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը:

² Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներն են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը: 2015թ. հունվարից ուժի մեջ կմտնի նաև ՀՀ անդամակցությունը:

³ ՆԱՏՕ-ն ռազմաքաղաքական բլոկ է, որը ներառում է Եվրոպայի մի շարք երկրներ, ԱՄՆ-ը և Կանադան: Հիմնադրվել է 1949թ. ԱՄՆ-ում:

Հատկանշական է, որ թեև առավել հաճախ ՀԱՊԿ-ի հետ համագործակցությունն է համարվում ՀՀ, ԼՂՀ անվտանգության և բանակի մարտունակության երաշխիքը, այնուամենայնիվ, փորձագետները դրա հետ չեն կապում ԼՂՀ հարցի կարգավորման հույսերը. ընդամենը 1 փորձագետ է նշել այս հարցում ՀԱՊԿ-ի հետ համագործակցության արդյունավետության մասին: Առհասարակ, ԼՂՀ հարցի կարգավորման հարցում փորձագետների կարծիքները շատ ավելի բազմազան են և քիչ են համընկնում միմյանց հետ (տե՛ս *Աղյուսակ 10.4*): Ամենից շատ ստացված պատասխանն է «հարևան երկրների հետ համագործակցության» տարբերակը՝ 4 փորձագետ:

Աղյուսակ 10.4.

ԼՂՀ հարցի կարգավորում. ո՞ր միջազգային սուբյեկտի հետ համագործակցությունը կարող է լինել առավել արդյունավետ

Կառույցներ	Բնակություն		Ընդհանուր
	ՌԴ	Այլ	
